



Ք Ա Ղ Վ Ա Յ Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ ԱՐԶԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

16 հուլիսի 2009 թվականի N 29

Հրեման Կար

Հավելված
ՀՀ կառավարության 2009 թ.
հուլիսի 16-ի նիստի N 29
արձանագրային որոշման

12. ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2009-2012 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏՆՆՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 18-ի N 1064-Ն որոշմանը համապատասխան՝

1. Հավանություն տալ Ջերմուկ քաղաքի զարգացման 2009-2012 թվականների ռազմավարությանը (այսուհետ՝ ռազմավարություն)՝ համաձայն հավելվածի:


2. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարին՝ երկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել առաջարկություն Ջերմուկ քաղաքի գլխավոր հատակագծում ռազմավարությունից բխող փոփոխությունների կատարման և գոտևորման նախագծի վերաբերյալ:

3. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությունը քաղաքաշինական գործունեության կազմակերպման և կառավարման խնդիրներում ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության շահերը և հանդես է գալիս որպես ռազմավարության իրականացման աշխատանքները համակարգող:

4. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարին, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին, Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարին, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարին, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարին, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարին, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարին, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարին, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարին և Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարին՝ իրենց ղեկավարության ներքին սահմաններում ապահովել սույն արձանագրային որոշման համաձայն Ջերմուկ քաղաքի զարգացման ռազմավարության համաձայն միջոցառումների իրականացումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ ԱՐԶԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

2009 թ. օգոստոսի 4
Երևան



ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ 2009-2012 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆՈՎՈՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ
«04» 08 2009 թ. ՀԱՎԵԼՎԱԾ
Մուտք No 5642

ՄԱՍ 1. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Ջերմուկ քաղաքի զարգացման 2009-2012թթ. ռազմավարությունը (այսուհետ՝ Ռազմավարություն) մշակվել է համաձայն «Ջերմուկ քաղաքը զբոսաշրջային կենտրոն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2008թ. սեպտեմբերի 18-ի N 1064-Ն որոշման:

2. Ջերմուկի համրավը որպես առողջարանային քաղաք հիմնված է առկա հանքային ջրերի առողջարար հատկությունների և որակի վրա: Խորհրդային Միության ժամանակ Ջերմուկը մեծ ճանաչում ուներ (տարեկան զբոսաշրջիկների թիվը կազմում էր՝ 25,000 ից 30,000): Սակայն քաղաքի զարգացումը նվազեց՝ պայմանավորված Խորհրդային Միության փլուզմամբ, այցելուների նախապատվությունների փոփոխություններով և քաղաքի ենթակառուցվածքներում ներդրումների բացակայությամբ: Ըստ մոտավոր հաշվարկների, Ջերմուկ տարեկան այցելում է ոչ ավելի, քան 5000 զբոսաշրջիկ: Չնայած քաղաքում ծնեռային զբոսաշրջության զարգացմանն ու զբոսաշրջային սեզոնի երկարաձգմանն ուղղված զգալի միջոցառումների (Ճոպանուղու և սահուղիների կառուցում և շահագործում), այնուամենայնիվ, Ջերմուկը կանգնած է ուժեղ մրցակցության առջև և՛ առողջարանային և՛ ծնեռային զբոսաշրջության ոլորտներում ի դեմս առաջնակարգ որակ առաջարկող այնպիսի երկրների, ինչպիսիք են Ավստրիան, Գերմանիան, Ֆրանսիան և այլ երկրներ, որոնք ավելի մրցունակ են թե մատուցվող ծառայությունների և թե գնային տեսանկյունից: Ջերմուկը նաև գործ ունի ավելի և ավելի զարգացող ու միջային նախապատվություններով շուկայի հետ:

3. Տեղական և միջազգային մասնագիտացված կազմակերպությունների (այդ թվում եվրոպական Առողջարանների Ասոցիացիայի, ծնեռային զբոսաշրջավայրերի նախագծման և կառավարման մեջ մասնագիտացված շվեյցարական Թայգեր Դեվ Սուիսս ընկերության, ԱՄՆ ՄԶԳ Մրցունակ Մասնավոր Հատված Հայաստանում ծրագրի) և այլ շահագրգիռ կողմերի հետ աճեց են կացվել բազմակողմանի հարցազրույցներ և խորհրդակցություններ, ուսումնասիրվել է համապատասխան գրականություն: Արդյունքում կատարվել է ուժեղ ու թույլ կողմերի, հնարավորությունների ու ռիսկերի վերլուծություն և մշակվել ռազմավարական տեսլական, այն է՝ Ջերմուկ քաղաքը դարձնել «Առողջ և ակտիվ կենսակերպի կենտրոն», որը կհյուրընկալի զբոսաշրջիկներին Հայաստանից և եվրոպական, ԱՄՆ-ից և այլ երկրների հանրապետությունների հանրապետությունների հետևող զբոսաշրջիկների (նաև սփյուռքից), որոնք ցանկանում են որոշ գրել ու պահպանել առողջ ապրելակերպ : Տեսլականում ընդունվում է, որ Ջերմուկ քաղաքը ներկայումս (և հնարավոր է ապագայում) չունի մրցակցային առավելություններ այլ, ավելի կայացած առողջարանների համեմատ, և որ Ջերմուկը պետք է առանձնանա ամբողջական զբոսաշրջային փորձառնություն առաջարկելու և իրեն՝ որպես այդպիսի զբոսաշրջային ուղղություն խթանելու միջոցով:

4. Այդպիսով Ռազմավարության հիմքում դրված են հետևյալ հայեցակարգային նպատակները՝ մինչև 2020 թվականը.

1) Ջերմուկ քաղաքը դարձնել ամբողջ տարին գործող միջազգային չափանիշներին համապատասխանող առողջ և ակտիվ կենսակերպի զբոսաշրջային կենտրոն՝ այն զարգացնելով որպես՝

ա) առողջարանային և ծնեռային զբոսաշրջության կենտրոն՝ (եվրոպական կենտրոններին այլընտրանքային),

բ) շախմատի միջազգային մրցաշարերի կազմակերպման կենտրոն,

գ) համահայկական և միջազգային մանկապատանեկան և երիտասարդական ճամբարատեղի,

դ) մշակութային զբոսաշրջության կենտրոն,

2) ապահովել տարեկան 100 000 զբոսաշրջային այցելություն,

3) մեծացնել զբոսաշրջությունից ստացվող եկամուտների մակարդակը՝ հասցնելով այն մինչև 100 միլիոն ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի,

4.) ապահովել 4000 աշխատատեղ:

5. Ռազմավարությունը ներառում է միջոցառումների ծրագիր՝ հիմնված հայեցակարգային նպատակների և խնդիրների վրա: Դրանք ուղղակիորեն զբոսաշրջային արդյունաբերությանն առնչվող և զբոսաշրջությանն անուղղակորեն առնչվող խնդիրներ են: Այս խնդիրները վեր են հանվել վերլուծությունում ներկայացված ուժեղ կողմերն առավել զարգացնելու, թույլ կողմերը նվազեցնելու, հնարավորություններն առավել արդյունավետ օգտագործելու և ռիսկերը չեզոքացնելու նպատակով: Ամիջակառուցում զբոսաշրջության ոլորտին առնչվող նպատակներին ուղղված միջոցառումների հիմնական պատասխանատուն ոլորտում ներգրավված մասնավոր հատվածն է, իսկ պետական հատվածն ու տեղական ինքնակառավարման մարմինները առավել ներգրավված են ընդհանուր զարգացման գործընթացներում:

6. Ռազմավարությունը ներառում է առաջարկություններ՝ ուղղված դրա իրականացման մոնիթորինգին և զննահատմանը, հաշվի առնելով ԱՄՆ և Միացյալ Թագավորության լավագույն օրինակները:

ԲԱԺԻՆ 1. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՄԱՏԵՔՍԸ ԵՎ ՀԻՄՔԵՐԸ

Գլուխ 1. Ռազմավարության նշանակությունը

1. Ջերմուկ քաղաքի, որպես առողջ և ակտիվ կենսակերպի զբոսաշրջության կենտրոնի, զարգացումը նախատեսվում է իրականացնել սույն Ռազմավարությամբ: Ռազմավարության մոտեցումը համակարգված է և հիմնված տարածքային նախագծման միջազգային լավագույն փորձի վրա՝ ԱՄՆ-ի և Միացյալ Թագավորության օրինակով: Ռազմավարությունն ուղեցույց է հանդիսանում Հայաստանի Հանրապետության կառավարության, տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր հատվածի և այլ շահագրգիռ կողմերի համար, թե ինչն է պետք զարգացնել Ջերմուկում, ինչու և ինչպես:

2. Քաղաքի հատկազգծումը տարածքի ձևի որոշման և դրա իրականացման գործընթացն է: Այն նպատակ ունի.

1) մշակել տեսլական տարածքի հետագա օգտագործման վերաբերյալ, որը կամողորհառան առկա խոչընդոտներին և հնարավորություններին, և հիմնված կլինի փորձի, տարածքի առանձնահատկությունների և համայնքի կողմից առաջ քաշվող խնդիրների վրա՝ պետական քաղաքականության և տարածքային ռազմավարությունների շրջանակներում,

2) սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված տեսլականի հիման վրա մշակել գերակայությունների, ծրագրերի, կանոնակարգերի և հողատնտեսության գրանցող հրահանգման համար հատկացված պետական հատվածի ռեսուրսների հետ մեկտեղ,

- 3) մշակել մասնավոր ներդրումների և վերարտադրության շրջանակ, որը կխթանի տնտեսական, բնապահպանական և սոցիալական բարեկեցությունը տարածքում,
- 4) համակարգել և իրականացնել տեսլականի պետական հատվածի պարտավորությունների շրջանակներում գտնվող տարրերը՝ այլ կազմակերպությունների ու գործընթացների հետ համատեղ,
- 5) նպաստել կայուն զարգացման իրականացմանը:

3. Ռազմավարությունն ունի երեք հիմնական նշանակություն՝

- 1) միավորել համայնքը ընդհանուր նպատակի շուրջ՝ ապահովելով համայնքում յուրաքանչյուրի մասնակցությունը քաղաքի զարգացման գործընթացին,
- 2) հանդիսանալ քաղաքի զարգացման նպատակների իրականացման ուղեցույց,
- 3) նպաստել բոլոր շահագրգիռ կողմերի ընդհանուր տեսլականի ձևավորման և դրա շուրջ համատեղ ջանքերի համակարգման գործընթացին:

4. Ռազմավարության սույն մասը դիտարկում է առաջարկվող զարգացման նպատակը, Ռազմավարության մշակման ընթացքում կիրառված մեթոդները, կայունության հետ առնչվող խնդիրները և տեղական կարիքները, տարբեր շահագրգիռ կողմերի դերերն ու պարտականությունները, ընդհանուր տեսլականը և դրան հասնելու համար սահմանված խնդիրները: Լավագույն փորձի համաձայն՝ Ռազմավարությունը մշակվել է փաստացի տվյալների հավաքագրման և պետական ու մասնավոր հատվածները ներկայացնող շահագրգիռ կողմերի հետ քննարկումների արդյունքում:

5. Ռազմավարությունը սահմանում է կառավարության և համայնքի տեսլականը քաղաքի զարգացման վերաբերյալ: Այն դիտարկում է այդ տեսլականը, առաջին հերթին, մանրակրկիտ կերպով սահմանելով, թե ինչպիսին պետք է լինի Ջերմուկ քաղաքը, ապա, դրա ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների ու ռիսկերի վերլուծության միջոցով բացահայտում է այդ տեսլականի իրագործման ճանապարհին առկա խոչընդոտները, որից հետո ներկայացնում խնդիրների ու միջոցառումների մի շարք՝ ուղղված բացահայտված խոչընդոտների հաղթահարմանը:

Գլուխ 2. Ռազմավարության համատեքստը և հիմքերը

1. Խորհրդային ժամանակներից Ջերմուկ քաղաքն ունի առողջարանային կենտրոնի հարուստ պատմություն: Այնուամենայնիվ, Խորհրդային Միության կազմալուծման և սպառողական պահանջարկի արագընթաց փոփոխության արդյունքում Ջերմուկ քաղաքի առջև ծառայան մի շարք խոչընդոտներ՝ կապված քաղաքի, որպես տարածաշրջանում լավագույն առողջարանի և Հայաստանում առաջնային զբոսաշրջային գոտու, ավանդական համբավի վերահաստատման հետ:

2. Հայաստանի Հանրապետության կառավարությունը Ջերմուկ քաղաքի զարգացումը սահմանել է որպես գերակայություն: 2008թ. սեպտեմբերի 18-ին ընդունված ՀՀ կառավարության N. 1064-Ն որոշմամբ քաղաքը հայտարարվում է «զբոսաշրջային կենտրոն» համաձայն «զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքի հոդված 2-ի և հոդված 6-ի 4-րդ կետի:

3. ՀՀ կառավարության 2008թ. սեպտեմբերի 18-ի N. 1064-Ն որոշման հիմքում ընկած են.

- 1) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2008թ. փետրվարի 13-ին հավանության արժանացած Ջրոսաշրջության զարգացման հայեցակարգը, որը սահմանում է զբոսաշրջության ոլորտում պետական քաղաքականության նպատակը, այն է՝ մեծացնել զբոսաշրջության ներդրումը ազգային եկամտի ավելացման, համաչափ տարածքային զարգացման, բնակչության կենսամակարդակի բարձրացման և աղքատության հաղթահարման գործում: Այս

նպատակը պետք է իրականացվի զբոսաշրջիկների թվի ավելացման, զբոսաշրջությունից ստացվող եկամուտների և աշխատատեղերի ստեղծման շնորհիվ.

- 2) Ջերմուկ քաղաքի բնակլիմայական ռեսուրսները, առողջարանային ու բուժական զբոսաշրջության ոլորտի ծառայությունների պատմությունը և քաղաքի ապագա ներուժը՝ մատուցելու առողջարանային/բուժական/կազդուրիչ ծառայություններն ու ձմեռային սպորտաձևերի զբոսաշրջության հնարավորությունները,
- 3) առողջարանային ու ձմեռային զբոսաշրջության միջազգային պահանջարկի աճը:

4. Հայաստանի Հանրապետության կառավարության 2008թ. սեպտեմբերի 18-ի N. 1064-Ն որոշումը սահմանում է մի շարք առաջնահերթություններ: Դրանք կարևորում են ենթակառուցվածքների, տրանսպորտի և հեռահաղորդակցության բարելավումը՝ Ջերմուկը ինտեգրելով եվրոպական առողջարանային ցանցին, իրականացնելով հիմնավորված գոտիավորում և քաղաքաշինություն, աշխատուժի զարգացում, առողջարանային զբոսաշրջային արդյունքի մարքեթինգ և ապահովելով բնապահպանական միջոցառումներ:

5. Ռազմավարությունը մշակվել է նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի ապրիլի 28-ի N 380 - Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության 2008-2012թթ. ծրագրին (այսուհետ՝ Կառավարության ծրագիր) համապատասխան: Կառավարության ծրագրի երկրորդ մասը սահմանում է հինգ գերակայություն: Չորրորդ գերակայությունն է տարածքային համաչափ զարգացումը, ներառյալ Երևանի ու Հայաստանի համայնքների միջև արտադրողականության և ստացվող եկամուտների ծավալների տարբերության էական կրճատումը և տարածքային կառավարման համակարգի փոփոխություն՝ ուղղված ինքնակառավարման մակարդակի և տարածքային կառավարման մարմինների պատասխանատվության բարձրացմանը և համայնքների բյուջեների աճին ու հանրային ծառայությունների մատչելիությանը: Սույն ծրագրով նախատեսվում է այդ խնդիրների իրականացում աշխատատեղերի ստեղծման ու Ջերմուկի, որպես առողջարանային կենտրոնի, մրցունակության մակարդակի բարձրացման, ինչպես նաև տեղական հեղինակության բարձրացման ու ներդրումների ընդլայնման միջոցով:

6. Ռազմավարության արդյունքները մեծապես կնպաստեն նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2008թ. հոկտեմբերի 30-ի N 1207-Ն որոշմամբ հաստատված Կայուն զարգացման ծրագրի նպատակների իրականացմանը: Կարևոր է նշել, որ Կառավարության ծրագրի դրույթները հիմնավորվում են նաև Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի (այսուհետ՝ ԱՀՌԾ) դրույթներով. «աշխատատեղ գտնելու և եկամուտ ստանալու առավել սահմանափակ հնարավորությունները...հանդիսանում են այլ քաղաքներում (Երևանից դուրս) էապես բարձր աղքատության մակարդակի հիմնական պատճառը»: 2005թ. մայիսի ԱՀՌԾ ընթացիկ հաշվետվությունն ընդգծում է Երևանի և մնացած տարածաշրջանների միջև գոյություն ունեցող եկամուտի մակարդակների տարբերության կարևորությունը, Եշելով, որ ԱՀՌԾ առաջին տարբերակի մշակումից ի վեր Երևանի ու այլ քաղաքների միջև աղքատության մակարդակի տարբերությունն աճել է: Ի լրումն, ԱՀՌԾ-ն ծրագրում է, որ մինչև 2015թ. ստեղծվելիք 248 000 աշխատատեղերի մեծամասնությունը (231,000) նախատեսված են գյուղատնտեսական ոլորտից դուրս: Ջերմուկում զբոսաշրջության հատվածում աշխատատեղերի ստեղծումը կլուծի այս երկու խնդիրը: Ավելին, հաշվետվությունում նշված աղքատության մակարդակի կրճատման խոչընդոտները ներառում են տեղական մակարդակով մասնակցության գործընթացների բացակայությունը: Այն փաստը, որ Ռազմավարությունը մշակվել է տեղական հանրության զգալի ներդրման շնորհիվ, քայլ է այդ խնդրի լուծման ճանապարհին:

7. Ռազմավարությունը ներառում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2009թ. հունիսի 26-ի N 728-Ն որոշման հավելված 4-ը և հավելված 10-ը Ջերմուկի քաղաքային համայնքի մասով:

8. Համաձայն Եվրամիության «Եվրոպական հարևանության քաղաքականության», Հայաստանի կառավարությունը ստանձնել է մի շարք հավակնոտ խնդիրներ ընդհանուր արժեքների և քաղաքական, տնտեսական ու կառուցվածքային բարեփոխումների վերաբերյալ: Եվրամիություն-Հայաստան գործողությունների ծրագրի իրականացումը կօգնի իրագործելու «Գործընկերության ու համագործակցության մասին» համաձայնագրի (ԳՀԳ) դրույթները, և միտված է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխանեցմանը Եվրամիության պահանջներին: Սույն ռազմավարությունը նպաստում է այդ Գործողությունների ծրագրի երրորդ առաջնահերթ ոլորտին, այն է՝ խթանել տնտեսական զարգացումը, հզորացնել աղքատության նվազեցմանն ուղղված ջանքերը և սոցիալական ամբողջականությունը, այդպիսով նպաստելով կայուն զարգացման, այդ թվում նաև բնապահպանության ոլորտի, երկարաժամկետ նպատակին: Հատուկ ուշադրությամբ են դիտարկվել Միջոցառումների ծրագրի այն գործողությունները, որոնք վերաբերում են Ջերմուկի զարգացմանը:

9. 2008թ. փետրվարի 13-ին ՀՀ կառավարության հավանությանն արժանացավ Ջրոսաշրջության զարգացման հայեցակարգը, որտեղ ներկայացված են մինչև 2030թ. զրոսաշրջության ոլորտում պետական քաղաքականության նպատակներն ու խնդիրները: Հայեցակարգով սահմանված պետական քաղաքականության նպատակներից է մեծացնել զրոսաշրջության ներդրումը ազգային եկամտի ավելացման համաչափ տարածքային զարգացման, բնակչության կենսամակարդակի բարձրացման և աղքատության նվազեցման գործընթացում:

10. Հայեցակարգը նաև սահմանում է, որ զրոսաշրջության զարգացման գործընթացը պետք է հիմնված լինի մրցունակության, միջազգային ինտեգրման, նեղ մասնագիտացման, համագործակցության, կայուն զարգացման, զրոսաշրջությունը որպես տնտեսության զերակա ճյուղ դիտարկելու, բնության ու շրջակա միջավայրի պահպանության սկզբունքները վրա: Ռազմավարությամբ նախանշված խնդիրներն ու միջոցառումները համահունչ են պետական քաղաքականության և հայեցակարգում սահմանված նպատակների ու խնդիրների հետ:

11. «Ջրոսաշրջության զարգացման հայեցակարգից բխող 2008-2012թթ. միջոցառումների ծրագիրը» հաստատվել է ՀՀ կառավարության 2008թ. հոկտեմբերի 16-ի N 1322-Ն որոշմամբ: Միջոցառումների ծրագիրը սահմանում է Հայաստանի մարզերում առողջարանային, գյուղական ու ձնեռային զրոսաշրջության զարգացումը որպես պետական քաղաքականության առաջնահերթ խնդիրներ առաջիկա չորս տարիների ընթացքում:

12. Ռազմավարությունը մշակվել է Հայաստանի Հանրապետությունում գործող համապատասխան օրենսդրությանը համահունչ:

13. Ռազմավարության մշակման համար հիմք է հանդիսացել նաև Ջերմուկ քաղաքի գլխավոր հատակագիծը:

ԲԱԺԻՆ 2. ԱՌՈՂՋԱՐԱՆԱՅԻՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍԱՇՆԱՐՀԱՅԻՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԵՎ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԸ

Գլուխ 1. Համաշխարհային զրոսաշրջային շուկայում առողջարանների և հանգստի գոտիների սահմանումը

1. Հանգստի գոտին արձակուրդը կամ հանգստյան ու տոնական օրերն անցկացնելու նպատակով այցելուներին զրավող հանսգտյան կամ վերկանգնողական վայր է: Դրանք սովորաբար փորձում են բավարարել հանգստացողների ցանկությունները, ինչպիսիք են սնունդը, խմիչքը, կացարանը, սպորտային միջոցառումները, ժամանցը և զնունների կատարման հնարավորությունները:
2. Առողջարանը, մյուս կողմից, հյուրանոցային տնտեսության օբյեկտ է, որի առաջնային նպատակն է ուղղորդել այցելուներին առողջ ապրելակերպին բնորոշ սովորություններ ձևավորելու ու հանգստի համար նպաստավոր պայմաններ ստեղծելու համար: Նման հաստատությունները սովորաբար առաջարկում են ընդգրկուն ծրագրեր, որոնք ներառում են առողջարանային ծառայություններ, ֆիզիոթերապիա, առողջ ապրելակերպի ուսուցում, առողջ սնունդ, սթրեսից կազդուրվելու միջոցառումներ և հատուկ ժամանց ըստ հետաքրքրությունների:
3. Առողջարանում հյուրերը բնակվում են ու մասնակցում ծրագրին՝ ուղղակի բուժման կամ արձակուրդային հանգստի փոխարեն: Այդ հաստատությունների մի մասը տեղակայված են էկզոտիկ վայրերում կամ առողջարանային քաղաքներում:

Գլուխ 2. Եվրոպական առողջարանների ծագումն ու նորագույն պատմությունը

1. Եվրոպական առողջարանների մասին ներկայիս պատկերացումը սկիզբ է առնում հայտնի հռոմեական բաղնիքներից: 1900-ականներին եվրոպական առողջարանների մեծ մասը վերակազմավորվեց հիդրոթերապիայի ու լուգանքների ծառայությունների շուրջ: Դրանք սովորաբար բաժանվում էին երկու դասի՝ ենթադրաբար բուժիչ հատկություններ ունեցող համաքային ջրերի առողջարաններ և թալասոթերապիայի առողջարաններ, որոնք հիմնվում էին հիդրոթերապիայի վրա՝ ծովաջրի, ջրիմուռների և ծովային հանքային աղերի կիրառմամբ:
2. 1990-ականներին եվրոպական առողջարանները ստիպված էին հարմարվել, քանի որ առողջարան այցելելու կառավարության օժանդակությունը (ֆինանսական աջակցության տեսքով) կրճատվեց ֆինանսական խնդիրների հետևանքով: Եվրոպական առողջարանները ստիպված էին վերակազմավորվել փոփոխվող շուկայի պայմաններին հարմարվելու նպատակով՝ հիմնելով առողջարաններ այնպիսի վայրերում, ինչպիսիք են դահուկային սպորտի գոտիները կամ ծովափնյա տարածքները՝ քիրալսելով ամենահարուստ այցելուներին:
3. Այնուամենայնիվ, վերջին 20 տարիների ընթացքում առողջարանների ու դրանցից օգտվողների թիվը կտրուկ մեծացել է: Այս երևույթը նպաստել է այն բանին, որ առողջարանների այցելուների պահանջները էապես ընդլայնվել են: Մեր օրերում

առողջարանի այցելուն, ունենալով երեկոցե ամենամեծ ընտրության հնարավորությունը, շատ ավելի տեղեկացված է ու պահանջկոտ:

Գլուխ 3. Ջերմուկ քաղաքի նկարագիրը

1. Ի սկզբանե Ջերմուկը եղել է ամրոց, որը կառուցվել է մ.թ. 189թվականին, և որն ավելի ուշ դարձել է հարևան շրջանների հայ իշխանների ամառանոց: 20-րդ դարի սկզբում կառավարության առողջապահական մարմիններն սկսեցին խորապես ուսումնասիրել Ջերմուկ քաղաքի ջրերը, իսկ գիտնականները հավաստեցին դրանց «անկասկած բուժիչ հատկությունները»: 1945 թ. Խորհրդային իշխանությունները որոշեցին Ջերմուկը դարձնել պետական նշանակության առողջարան, հիմնվելով ջրերի բուժիչ հատկությունների վրա: 1970-ականներին տարեկան 25,000-ից 30,000 մարդ, ներառյալ գեներալներ ու կառավարության բարձրաստիճան պաշտոնյաներ, այցելում էր Ջերմուկի առողջարան: Այդ ժամանակահատվածում Ջերմուկն ուներ շատ մեծ պահանջարկ՝ մինչև ժամանակ ունենալով անբավարար առաջարկ: Ինչպես և այլ առողջարաններ եվրոպայում, պետական ֆինանսավորման առողջապահական ծառայությունը ներկայացնում էր հիմնական պահանջարկը, այցելուների մեծամասնությունն այցելում էր հիվանդի, այլ ոչ թե զբոսաշրջի կարգավիճակով: Խորհրդային Միության անկման ու փլուզման արդյունքում Ջերմուկի ծառայությունների պահանջարկն էլ ավելի անկում ապրեց, և տարածքի հաստատություններից շատերը, ինչպես նաև ենթակառուցվածքը, մատնվեցին քայքայման: Այցելուների թիվը նվազեց մինչև ներկայիս տարեկան 5,000 մարդ:
2. Առողջարանային հաստատությունների քայքայման հետ միասին, դադարեց նաև ենթակառուցվածքների զարգացումը, և Ջերմուկը հայտնվեց աճող գործազրկության պայմաններում: Քաղաքի բնակչության թիվը նվազեց, և, ըստ մարդահամարի տվյալների, 2001թ. կազմում էր 5146 մարդ (1989թ. բնակչությունը կազմել է 9000): Քաղաքն ունի մի շարք լքված հյուրանոցներ ու առողջարաններ, որոնց շինարարությունն սկսվել էր դեռևս Խորհրդային շրջանում, բայց մինչև օրս չի ավարտվել: Դրանք բացասաբար են ազդում քաղաքի զեղազիտական տեսքի վրա:
3. Ջերմուկը տեղակայված է Երևանից դեպի հարավ-արևելք 175կմ հեռավորության վրա գտնվող հարթավայրի վրա, շրջապատված Ջանգեզուրի արևելյան լեռնաշղթայով, ծովի մակարդակից մոտ 2100մ բարձրության վրա: Համայնքի տարածքը կազմում է մոտ 5664 հա: Կլիման բնութագրվում է մեղմ ձմեռներով (միջին ջերմաստիճանը հունվարին -8.1 աստիճան ըստ Ցելսիուսի սանդղակի) և տաք ու չոր ամառներով (միջին ջերմաստիճանը օգոստոս ամսին 15.6 աստիճան ըստ Ցելսիուսի սանդղակի): Տարեկան տեղումների միջին մակարդակը կազմում է 800մմ: Քաղաքը նշանավորվում է արևափայլի երկարատևությամբ (տարեկան 2409 ժամ): Օդի հարաբերական խոնավությունը տատանվում է 62%-ից (օգոստոսին) մինչև 72% (հունվարին): Չյունածածկն առաջանում է դեկտեմբերի սկզբին և պահպանվում մինչև ապրիլի կեսը, իսկ դրա բարձրությունը փետրվարին հասնում է մինչև 60-75 սմ:
4. Համաձայն Ջերմուկի քաղաքապետարանի կողմից տրամադրված տեղեկությունների, քաղաքի ներկայիս բնակչությունը համայնքում (ներառյալ Կեչուտ գյուղը) կազմում է մոտավորապես 6300 մարդ (112 մարդ՝ մեկ կիլոմետր տարածքում խտությամբ): ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների համաձայն Ջերմուկ քաղաքի բնակչությունը կազմում է մոտ 5200 մարդ, որը կազմում է Խորհրդային շրջանի բնակչության 58%-ը: Համարվում է, որ Ջերմուկի բնակիչների մեծամասնությունը արտագաղթել է արտասահման (հիմնականում Ռուսաստանի Դաշնություն)՝ որպես արտագնա աշխատուժ: Բացի այդ, բնակիչների մի ստվար զանգված (բարձրագույն կրթությամբ) տեղափոխվել է Երևան՝ աշխատանք գտնելու կանկալիքով:
5. Ջերմուկում գործազրկության մակարդակը (գործազրկության մակարդակի հարաբերակցությունը տնտեսապես ակտիվ բնակչության թվին) համարվում է բարձր՝ այլ մարզերի հետ համեմատ: «Ջերմուկգրուպ» հանքային ջրերի գործարանը քաղաքի ամենամեծ և ամբողջ տարին գործող գործատուն է:

6. Մոտ 800 բնակիչ (աշխատունակ բնակչության 24%) ներգրավված են արտադրական արդյունաբերության մեջ (հիմնականում սննդամթերքի ու խմիչքի արտադրություն): Թե՛ս սեզոնին զբոսաշրջության հատվածում աշխատում է մոտ 400-450 մարդ, իսկ հանգիստ սեզոնին՝ մոտ 200-250 մարդ: Եինարարությունը քաղաքի ամենակարևոր արդյունաբերության տեսակներից մեկն է և ունի մոտ 200-250 աշխատող: 441 բնակիչ զբաղված են որպես գործազուրկ, որը նախորդ տարիների համեմատ ցածր ցուցանիշ է: Ի լրումն գրանցված գործազուրկների, Ջերմուկի մոտ 300 բնակիչ (ներառյալ Կեչուտ ու Գնդեվազ գյուղական համայնքները) կարող են համարվել գործազուրկ, բայց աշխատունակ. բնակիչները հիմնականում ներգրավված են գյուղատնտեսական աշխատանքներում:
7. Ջերմուկն ու հարակից տարածաշրջանը մեծ ճանաչում ունեն նաև այդտեղ գտնվող պատմամշակութային կոթողների ու եկեղեցիների շնորհիվ: Դրանց թվում են Գնդեվաճը (8-րդ դար), Սր. Աստվածածնի վանքը (13-րդ դար), Նորավանքը (12-րդ դար), Թանաթ վանքը (13-րդ դար), Տաթևի վանքը (9-13 դար) (Գորիսի շրջան), ինչպես նաև գեղատեսիլ վայրեր, ներառյալ Գնդեվազի լավային գոյացությունները, ջրամբարը, հրաբխային կոները, տարատեսակ լավային ծագման քարերը, ժայռերը, Ջերմուկի ջրվեժը, բնական կամուրջը, լեռնային արջուրները, տաք հանքային ջրերն ու բազմաթիվ բնական լեռնային զանգվածները:
8. Ժամանցի այլ վայրերի թվում են Ջերմուկի պատկերասրահը, որը Հայաստանի ազգային պատկերասրահի մասնաճյուղն է, Փիլկահաս քարանձավները՝ Կեչուտ գյուղից մոտ 1 կմ և Վայք-Սիսիան մայրուղուց մոտ 18 կմ հեռավորության վրա, «Մամարազ» բնակավայրը՝ Գնդեվազից մոտ 5 կմ հեռավորության վրա, և Գնդեվաճի համալիրը՝ Արփա գետի ծախ ափին և Գնդեվազ գյուղից 1 կմ դեպի արևմուտք:
9. Խորհրդային տարիներին ձևավորվել է երկու արգելանոց: Ջերմուկի արգելանոցը հիմնվել է 1958 թ. և ծածկված է 3865 հա Ջերմուկի կաղնու անտառներով, գտնվում է Արփա գետի վերին հոսանքի շրջակայքում: Ջերմուկի ջրամբարը հիմնվել է 1981 թ. և պարունակում է 18,000 հա ջրային զանգված:
10. 2008թ. առաջին ինը ամիսների ընթացքում քրեական հանցագործության ընդամենը չորս դեպքերի գրանցմամբ, երկուսն հանցագործությունների ամենացածր մակարդակն արձանագրված է Ջերմուկում:

Գլուխ 4. Զբոսաշրջությունը Ջերմուկ քաղաքում

1. Ջերմուկը Հայաստանի ամենամեծ ու ճանաչված առողջարանային քաղաքն է, որն ունի յոթ գործող առողջարան՝ մոտ 1400 մահճակալով: Խորհրդային տարիներին Ջերմուկը 2000 մահճակալով սպասարկում էր տարեկան մոտ 25,000 - 30,000 զբոսաշրջիկ: Առողջարաններից յուրաքանչյուրը ամառվա թե՛ս սեզոնին աշխատում է լրիվ զբաղվածության պայմաններում, իսկ հանգիստ սեզոնին այդ ցուցանիշը նվազում է մինչև 20%: Առողջարաններից միայն երկուսն («Արմենիան» ու «Օլիմպիան») ունեն 110 սենյակ՝ հիմնովին վերանորոգված վերջին երեք տարիների ընթացքում: «Ջերմուկ աշխարհ» (132 սենյակ), «Թուլիս» (80 սենյակ) և «Նարեկն» են (5 տնակներով ու երկհարկանի շենքերով համալիր) իրականացրել զգալի վերանորոգում, սակայն դեռևս կարիք ունեն ներքին ու արտաքին հարդարման աշխատանքների: «Արարատ» (Մոր և մանկան կենտրոն) և «Գլածոր» առողջարանները տրամադրում են շուկայում առկա էժան ծառայություններ և կարիք ունեն նաև վերանորոգման: Առողջարանային երկու ծրագիր ներկայումս մշակման փուլում են գտնվում՝ «Հանգստյան տունը» (500 սենյակ) և «Հայաթ» առողջարանը (80 սենյակ): Երկուսն էլ, ամենայն հավանականությամբ, մասնակիորեն կամ ամբողջությամբ ֆինանսավորվում են «Հայաթ» հյուրանոցային ցանցի կողմից, և դրանց շինարարությունը նախատեսվում է ավարտին հասցնել մինչև 2011 թ. վերջ: Ընդհանուր առմամբ, բոլոր գործող առողջարանները տրամադրում են ծառայությունների ու բուժումների քիչ թե շատ նույն բազմազանությունը, հիմնականում սահմանափակված հանքային ջրերով բուժումներով (լոգանքներ, որդուներ, 9

ինհալացիաներ և այլն) ու առողջարանային ավանդական ծառայություններով, ինչպիսիք են մերսուռը, ախտորոշումը և տորֆ/պարաֆինային բուժական միջոցառումները:

2. Մեծածավալ առողջարանների ու առողջարանային նախագծերի հետ զուգահեռ, Ջերմուկում կա նաև վեց հյուրանոցային տնտեսության օբյեկտներ՝ ընդհանուր առմամբ 110 մահճակալով: Այս հյուրանոցային տնտեսության օբյեկտները առողջարանային բուժման ծառայություններ չեն տրամադրում: Դրանք են. «Վերոնան» (24 մահճակալ), «Կասկադը» (16 մահճակալ), «Անուշը» (30 մահճակալ), «Կյանքը» (12 մահճակալ) և «Եվմարին» (28 մահճակալ):

3. Գործում են չորս ռեստորաններ նստելատեղերի տարբեր քանակով, տարբեր վիճակում կամ վերանորոգման ընթացքում: Բոլորը միասին ունեն 1500 նստելատեղ: Բոլոր չորսն էլ գտնվում են քաղաքի աջափնյա հատվածում (առողջարանային տարածք)՝ լինելով շատ մատչելի ու հարմար առողջարանների հյուրերի համար: Այնուամենայնիվ, ռեստորաններից միայն երկուսն են՝ «Ջերմուկն» ու «Գնդեվանքը», որ ունեն համեմատաբար բարձրակարգ ներքին ու արտաքին հարդարանք և գործում են ամբողջ տարվա ընթացքում: «Ֆորտե» ու «Այունիք» ռեստորանները գործում են միայն զբոսաշրջային սեզոնի: Ընդհանուր առմամբ, առողջարանային ու առանձին գործող ռեստորաններն ունեն մոտավորապես 2000 նստելատեղ:

4. Վերջերս կառուցված ճուպանուղին Ջերմուկին հաղորդում է ժամանակակից ու հրապուրիչ հանգստյան գոտու տեսք: Չմռանը ձյան տեղումների քանակությունը, արևափայլի տևողությունը և ձմեռային հրապուրիչ ջերմաստիճանը (ավելի տաք եղանակ, քան Երևանում) դահուկային սպորտի ամհարաժեշտ հարմարությունների ստեղծման հնարավորություն են ընձեռում: Դահուկավազքի երկու մակարդակները (կարմիրը – 1300 մետր և կանաչը – 1350 մետր), որոնց շինարարությունը մոտենում է ավարտին, կծառայեն և փորձառու, և սկսնակ դահուկորդներին: Նախատեսվում է կառուցել նաև ճամապարհի սահնակների համար: Ճուպանուղու վարձավճարը կազմում է 1000 ՀՀ դրամ: 2008թ. ամառվա ամիսներին (հուլիս և օգոստոս) ճուպանուղուց օգտվել է 15,000 հաճախորդ, քաղաքապետարանին բերելով 15 միլիոն ՀՀ դրամի եկամուտ: Ճուպանուղին կառուցվել է «Լայթներ» շվեցարական կազմակերպության կողմից, միջազգային չափանիշներին համապատասխան, որի շինարարության արժեքը կազմել է 5 միլիոն եվրո (ֆինանսավորումը՝ ՀՀ պետական բյուջեյից): Կազմակերպությունը նաև իրականացրել է տեղական աշխատակազմի համար տեխնիկական ուսուցում, ինչը հնարավորություն կտա հետագայում հնարավոր առաջացող խնդիրների 90% լուծել տեղական ուժերով: Ճուպանուղու երկարությունը ներկայումս կազմում է մեկ կիլոմետր, այնուամենայնիվ, կախված նախաձեռնության հաջողությունից, նախատեսվում է հետագայում այն դարձնել 16 կիլոմետր ձգվածություն ունեցող ճուպանուղու ցանց: Դահուկային սպորտի հարմարությունները ներառում են լրիվ մոր սարքավորումների վարձակալություն, 250 մեքենայի համար նախատեսված ավտոկանգառ, սննդի կազմակերպման կետեր: Ծաղկածորից դահուկասպորտի երկու մարզիչ վերապատրաստել են տեղացի ութ մարզիչ:

5. Ժամանցի այլ ձևերն ընդգրկում են 12 հեկտարանոց քաղաքային զբոսայգին, տաք հանքային ջրերի աղբյուրները, կիրճը և ջրվեժը: Խորհրդային տարիներին շատ տարածքներ են հատկացվել սպորտային միջոցառումներին ու ժամանցին: Դրանցից մի քանիսը դեռևս շարունակում են գործել առողջարաններում, սակայն գտնվում են վատ վիճակում: Քաղաքում կան նաև մի քանի պատմամշակութային հուշարձաններ, սակայն դրանք չեն դասվում զբոսաշրջության տեսանկյունից խոշոր նշանակության օբյեկտների թվին:

Գլուխ 5. Ջերմուկի հանքային ջրերի բաղադրությունն ու բուժիչ հատկությունները

1. Ջերմուկի հանքային ջրերի մասին տեղեկություններն, ըստ պատմաբան Ս. Օրբելյանի, վերաբերում են 13-րդ դարին: 1830թ. աղբյուրներն ուսումնասիրվել են Գ. Վոսկրեսնիկովի կողմից, ապա առավել մանրակրկիտ 1925թ.: Այդ ուսումնասիրությունները հիմք ծառայեցին կառավարության այն որոշման համար, համաձայն որի քաղաքը պետք է դառնար առողջարանային կենտրոն: Քաղաքն իր համբավի կիզակետում է եղել Խորհրդային տարիներին, երբ սպասարկում էր տարեկան 25000-ից 30000 այցելու:

Մեկ լիտրի բաղադրությունը	Կարլովի Վարի (ըստ Ս.Մ. Օվչիննիկովի)	Ջերմուկ (ըստ Գ. Բոգոյանի)
Կատիոններ		
Լիթիում	0,0033	0,0037
Ամոնիում	0,0001	-
Կալիում	0,1042	0,0890
Նատրիում	1,7180	1,2110
Մագնեզիում	0,0465	0,0744
Կալցիում	0,1025	0,1480
Ստրոնցիում	0,0003	0,0038
Երկաթ	0,0001	0,0008
Անիոններ		
Քլոր	0,6170	0,4757
Բրոմ	0,0014	0,0001
Ֆտոր	0,0024	0,0001
Սուլֆատ	1,6620	0,9000
Ֆիդրոֆոսֆատ	0,0001	0,0150
Ֆիդրոկարբոնատ	2,1000	2,2430
Ֆիդրոարսենատ	0,0001	---
Ազոտ	0,40	0,5-0,8
Չոր մնացորդ (105C)	5,39	3,792
Ջրի ջերմաստիճան C	73	64

միջև եղած տարբերությունները: Գոյություն ունեն գրոսաշրջության բուժական, կազդուրիչ ու առողջապահական հատվածների մի շարք սահմանումներ, այնուամենայնիվ, փորձագետներն, ընդհանուր առմամբ, համաձայնում են, որ միջնաշրջության գրոսաշրջության բուժական և կազդուրիչ տեսակները համարվում են առողջապահական գրոսաշրջության ենթադասեր, համարվում է, որ կազդուրիչ գրոսաշրջությամբ զբաղվում են միայն «առողջ» մարդիկ, որոնց հիմնական նպատակն է պահպանել կամ էլ ավելի լավացնել իրենց առողջությունը, իսկ բուժական գրոսաշրջիկներն ունեն հատուկ առողջական վիճակ կամ հիվանդություն: «Առողջարանային գրոսաշրջություն» եզրույթը, արևմտյան գրոսաշրջիկների պատկերացմամբ, առավել հակված է դեպի «հիվանդությունների կանխարգելման», քան «բուժական գրոսաշրջությունը», չնայած նախկին Խորհրդային Միությունում «առողջարան» և «սանատորիա» հասկացությունները կիրառվել են փոխկապակցված ձևով և վերաբերել են «բուժական գրոսաշրջությանը»:

2. «Կազդուրում» (wellness) եզրույթը գործածության մեջ դրվեց 1961թ. ամերիկացի բժիշկ Չալբերթ Դաննի կողմից, երբ վերջինս միացրեց «WELLbeing» և «fitNESS» բառերը: Մյուսներն ու Լանց-Կաուֆմանը (2001թ.) «կազդուրված լինելը» սահմանում են որպես. "առողջական վիճակ, որ բնութագրվում է հետևյալ հիմնարար տարրերով. մարմնի, մտքի, հոգու ներդաշնակություն, ինքնապատասխանատվության զգացում, ֆիզիկապես մարզված վիճակ/զեղեցկության խնամք, առողջ սնունդ/սննդակարգ, համգիստ վիճակ (սթրեսից դուրս գալու պահանջմունք)/հոգեվարժանք, մտավոր գործունեություն/կրթություն և շրջակա միջավայրի նկատմամբ զգայունություն/սոցիալական շփումներ»:

3. Կազդուրիչ գրոսաշրջությունից օգտվողները կարող են ստանալ նույնատիպ բուժում, ինչ և բուժական գրոսաշրջությունից օգտվողները, սակայն տարբեր են դրդապատճառները, որոնց առաջինների դեպքում կայանում են առողջության պահպանման կամ այն էլ ավելի բարելավելու մեջ: Ընդհանուր առմամբ, կազդուրիչ շարժումը ընդգծում է այն ակտիվ մոտեցումը, որի դեպքում մարդիկ փորձում են փաստորոշել առողջական հնարավոր խնդիրները և կանխարգելել դրանց հետագա զարգացումն այնպես, որ պահպանեն իրենց ֆիզիկական ու հոգեկան առողջությունը: Զանի դեռ մարդիկ զբաղվում են իրենց առողջության կազդուրմամբ արձակուրդի ընթացքում, գրոսաշրջությունը դառնում է առողջությունը խթանող կատարյալ միջոց:

4. Առողջարանային արդյունաբերության հատվածը համարվում է առողջապահական և կազդուրիչ գրոսաշրջության առաջատարը: «Առողջարան» (spa) եզրույթը կազմված է լատիներեն «*sanus per aquam*» արտահայտության բաղկացուցիչ բառերի սկզբնատառերից, ինչը նշանակում է «առողջություն ջրի միջոցով»: Այն ներկայումս սահմանվում է որպես «ջրային կամ անջուր ծառայություններ, որոնք կիրառվում են թե ֆիզիկական, և թե հոգեկան ընդհանուր ինքնազգացողությունը բարելավելու համար մասնագիտացված ծառայությունների և բուժական միջոցառումների միջոցով»: Առողջարանային արդյունաբերությունը մեծապես հիմնվում է բնական միջոցների (այդ թվում նաև առողջ կլիմայի) օգտագործման վրա՝ ներառելով բժշկական խնամքի տարր և թերապիտիկ դրույթներով պայմանավորված ընդհանուր մոտեցում: Այսօր առողջարանային գրոսաշրջության արդյունաբերությունը, կարծես թե, վերածնունդ է ապրում: Առողջարանների ներկայիս այցելուների համար կարևոր դրդապատճառ է հանդիսանում առօրյա լարված կյանքի հոգսերը թոթափելու և հանգստանալու, ինչպես նաև առողջությունն ու ֆիզիկական լավ վիճակը պահպանելու ցանկությունը:

5. Առողջարանային տարբեր տեսակները սահմանելու նպատակով առողջարանային հարմարություններն ընդհանուր առմամբ դասակարգվում են հետևյալ կերպ.

- 1) Մեկօրյա առողջարան. հաստատություն, որը տրամադրվում է առողջարանային մասնագիտացված ծառայությունների տեսակամի մեկ օրվա կտրվածքով:
- 2) Նպատակային առողջարան. հաստատություն, որի առաջնային նպատակն է առողջարանի այցելուներից յուրաքանչյուրի մոտ ձևավորել առողջ ապրելակերպին բնորոշ սովորույթներ, ինչն ուղեկցվում է առողջարանային

ծառայություններից, ֆիզիկական մարմնամարզումներից, առողջ ապրելակերպի մասին դասընթացներից և առողջ սննդից բաղկացած ընդգրկուն ծրագրով:

- 3) Բուժական առողջարան. առողջարան, որը գործում է արտոնագրված բուժաշխատողի շուրջօրյա անմիջական վերահսկողության տակ, որի առաջնային նպատակն է տրամադրել ամբողջական բժշկական և կազդուրիչ խնամք մի միջավայրում, որն համադրվում է առողջարանային ծառայությունները, ինչպես նաև ավանդական, լրացուցիչ և/կամ այլընտրանքային թերապիայի և բուժման ձևերը:
- 4) Հանքային ջրերի վրա հիմնված առողջարան. առողջարան, որը տեղակայված է հանգստյան գոտում և առաջարկում է բնական հանքային, տաք ջրերի կամ ծովաջրի կիրառում հիդրոթերապիայի բուժումների ընթացքում:
- 5) Այլ առողջարան. հաստատություններ, որոնք իրենց գործունեության մեջ կիրառում են առողջարանային փոխօգնությունն ու սկզբունքներ ջրային թերապիայի նվազագույն հարմարություններով և այցելուի ցանկությունների իրականացման սահմանափակ հնարավորություններով, օրինակ, ատամնաբուժական առողջարան, զեղեցկության սրահների առողջարաններ, եղունգների խնամքի առողջարաններ:
- 6) Հանգստյան տուն/հյուրանոցային առողջարան. առողջարան, որը պատկանում է հանգստյան գոտու կամ հյուրանոցի, և տեղակայված է դրանց տարածքում, սովորաբար տրամադրվում է առողջարանային ծառայություններ լրացուցիչ մարմնամարզական տարրերի և առողջարանային սննդի ընտրանու համադրությամբ:

Գլուխ 8. Առողջարանային գրոսաշրջության զարգացման միտումները

1. Ներկայումս շուկայի առողջարանային և կազդուրիչ գրոսաշրջության հատվածների, դրանց չափի և արժեքի վերաբերյալ իրականացվել են չափազանց փոքրածավալ հետազոտություններ, և առկա են շատ քիչ տեղեկություններ: Այնուամենայնիվ, մոտավոր հաշվարկների համաձայն համաշխարհային շուկայի ծավալը գնահատվում է տարեկան մոտավորապես հինգ միլիոն միջազգային ճանապարհորդությամբ: Այս թիվը ներառում է միայն այն ճանապարհորդությունները, որոնք իրականացվում են առողջարաններ այցելելու նպատակով և չեն դիտարկվում այլ նպատակով իրականացված ճանապարհորդությունները, որոնց ընթացքում կատարվել է այցելություն առողջարան: Կանխատեսվում է, որ այս հատվածը կշարունակի արագընթաց կերպով աճել, հիմնվելով, առաջին հերթին, առողջության ու լավ ինքնազգացողության նկատմամբ մարդկանց դիրքորոշումների վրա: Ի վրումն սրան նշենք, որ, չնայած այն հանգամանքին, որ ավանդապես առողջապահական ու կազդուրիչ գրոսաշրջության հաճախորդներ են համարվել կանայք և արդեն չափափաս դարձած ու առանձնացած երեխաների ծնողները, կա հետաքրքրվածության որոշակի միտում երիտասարդների (20-24 տարեկան) շրջանում: 50-65 տարեկանների խումբը դեռևս մնում է չուսումնասիրված շուկա, մինչդեռ այդ խումբը գրավիչ է, քանի որ ունի ավելի շատ ազատ ժամանակ և կարող է ավելի երկար մնալ առողջարանում: Առողջարանային արդյունաբերության աճը կարելի է կապել առողջ ապրելակերպի նկատմամբ աճող հետաքրքրությամբ, որի ապացույցն է ֆիզիկական մարմնամարզության համար ծախսվող գումարների չափը, ինչպես նաև օրգանական ու առողջ սննդի պահանջարկը:

2. 2007թ. նոյեմբերին լույս տեսած Միջազգային առողջարանային ասոցիացիայի (ISPA) կողմից իրականացված հետազոտության համաձայն, աշխարհում կա առողջարանների ավելի քան 150 միլիոն այցելու: Առողջարանների այցելուների բացարձակ թվով Միացյալ Նահանգները գտնվում են առաջատար դիրքերում, ունենալով առողջարանների 32.2 միլիոն այցելու: Թայլանդը գրավում է երկրորդ տեղը՝ 27.1 միլիոն այցելու, որից հետո երրորդ տեղը զբաղեցնում է ճապոնիան՝ 19.1 միլիոն այցելուով,

հտալիան՝ 17.8 միլիոն այցելուով և Գերմանիան՝ 11.5 միլիոն այցելուով: Համաձայն ISPA-ի վերջին տվյալների, ողջ աշխարհում բուժական առողջարաններն ունեցել են տարեկան 69% աճ և համարվում են զբոսաշրջության արդյունաբերության ամենաարագ աճող հատվածը: Համաձայն փորձագետների գնահատումների, մինչև 2025թ. առողջարանային զբոսաշրջությունը կդառնա աշխարհում երկրորդ ամենազարգացած արդյունաբերությունը, առողջապահականից հետո:

3. Ինչպես նշվել է, շուկայի նպատակային առողջարանների հատվածը սրընթաց փոփոխվում է: Էլլիսը և «Ֆեյլթ Ինլանդիա» Ազգային տուրիզմի զարգացման կազմակերպությունը «Առողջություն և կազդուրում» պարբերականում լուսաբանում է այդ փոփոխություններից մի քանիսը՝

- 1) Առողջարանների վերակազմակերպումը ուղղակի այցելության վայրից դեպի ամբողջական կենսակերպ,
- 2) Բժշկության և առողջարանների համադրման աճ,
- 3) Տղամարդկանց սպասարկող և տղամարդկանց հատուկ բուժումներ առաջարկող առողջարանների քվի աճ,
- 4) Ամուսնական զույգերի բուժման առողջարանային համալիրների ստեղծում,
- 5) Միավորվելու առավել մեծ միտում և մրցակցություն՝ համադրված աշխատուժի արժեքի աճով: Առողջարանները փորձում են տարբերակվելու ուղիներ գտնել, օրինակ բուսական ծագման սննդատեսակներ, տնային կենդանիների և երեխաների խմանքի հնարավորություններ, արկածային ժամանցի հնարավորություններ կամ բիզնես խմբերի սպասարկում առաջարկելու ճանապարհով,
- 6) Ինտերնետի լայն օգտագործում, որպես ինչպես շուկայավարության, այնպես էլ պատվերներ կատարելու միջոց: Ինտերնետը զարգացման նոր ասպարեզ է ստեղծել առողջարանների համար՝ ներմուծելով բարձր տեխնոլոգիաներ ավանդական բարձրակարգ առողջարանային միջավայրում,
- 7) Օրգանական և կայունության խնդիրների վերաբերյալ աճող մտահոգություն և, դրան զուգահեռ, «էկո-առողջարանների» զարգացում,
- 8) Առողջարանների այն այցելուների աճ, որոնք ծամփորդելիս գերադասում են օգտվել բուն տեղական բուժամիջոցներից և ապրանքներից (օրինակ, Դուբայում անապատային ավազներում աճող բույսերից պատրաստված «Ուսուլ» մաշկի քերամայությունից), որոնք հաճախ հիմք են հանդիսանում եզակի ապրանքների և բուժամիջոցների համար (օրինակ, Մեռյալ ծովի սև տիղմի լոգարանները կամ Ֆրանսիայում գինու առողջարանները),
- 9) Ժամանցի և սպորտային միջոցառումների ընդլայնված հնարավորություններ,
- 10) Առողջարանային սպասարկման տարբերազատում տեղական մշակույթի և ավանդույթների տարրերի ներմուծման շնորհիվ (օրինակ, մշակութային արկածային միջոցառումներ Բուբանում, կամ անդորրի վայելք Թայլանդում),
- 11) Շեշտված շքեղություն այն հաճախորդների համար, որոնք ցանկանում են ճաշակել առավել բացառիկ, մեկուսի, նպատակային, բարձրաճաշակ, արտառոց պայմաններ: Այս ամենը կարող է ներառել հոգևոր և կազդուրիչ խորհրդատվություն, նոր, տարաշխարհիկ յուրեր մերսումների համար, չորսժամյա մերսումներ, եռակողմ բուժումներ (երեք մասնագետ բժիշկների համակարգված նշանակումներով), առողջարանային ստորջրյա միջոցառումներ, մեկուսացված հյուրանոցային/առողջարանային սենյակներ, գերշքեղ առողջարաններ՝ նախագծված ճանաչված դիզայներների կողմից,
- 12) Առողջարանային և կազդուրիչ միջոցառումներ, որոնք կնպաստեն այցելուների առողջության հետ կապված նպատակների իրականացմանը, օրինակ թողնել

ծխելը, վշտից վերականգնումը, հոգևոր իրազեկվածության ձեռքբերում և օրգանիզմի մաքրում թունավոր նյութերից,

- 13) Ապրանքանիշի զարգացման հստակ շեշտադրում,
- 14) Առողջարանային խոհանոցի գովազդումը, լայն ընտրանու, օրինակ, բուսական, բարձր պրոտեինային, ցածր ածխաջրային և ցածր յուղային բաղադրության կերակրատեսակների առաջարկով:

Գլուխ 9. Չմեռային զբոսաշրջության զարգացման միտումները

1. Չմեռային զբոսաշրջությունը հաճախ ընկալվում է որպես ձմեռային սպորտաձևերի և զարժանքների հետ առնչվող բացօթյա միջոցառումներ, այնուամենայնիվ, այն շատ ավելի լայն հասկացություն է: Չմեռային զբոսաշրջությունը ներառում է ցանկացած զբոսաշրջային արդյունք կամ ծառայություն, որն առաջարկվում է նույնպես ամսից մինչև ապրիլ (հյուսիսային կիսագնդում), անկախ այն հանգամանքից, թե այն մատուցվում է բացօթյա, թե փակ տարածքում: Կանադայի «Չմեռային զբոսաշրջության ենթահանձնաժողովի» սահմանման համաձայն, ձմեռային զբոսաշրջության միջոցառումները կարող են դասակարգվել հետևյալ կերպ.

- 1) Դահուկասահք. Ալպերին բնորոշ կազմակերպված գործունեություն, օրինակ, սարնիվար դահուկասահք, ձնատախտակ (snowboarding), ուղղաթիռադահուկասպորտ (heli-skiing)
 - 2) Բացօթյա միջոցառումներ. էկոզբոսաշրջություն, արկածային գործունեություն, օրինակ, դահուկավազք, ձնամեքենաների վարում, զբոսանք սահնակներով, զբոսանք շներով լժված սահնակներով, ձմեռային ճամբարներ, վայրի կյանքի դիտարկում
 - 3) Քաղաքային միջոցառումներ. քաղաքային կյանքի տարրեր, ինչպիսին են օրինակ. գնումներ, ճաշկերույթ, տեսարժան վայրերի այցելություն, թանգարանների, թատրոնների, համերգների, սպորտային միջոցառումների հաճախում
 - 4) Փառատոներ/միջոցառումներ. ձմեռային միջոցառումներ
 - 5) Ուսուցողական/մշակութային միջոցառումներ. լեզվի ուսուցման տարր պարունակող արձակուրդ, տեղական միջավայրին ու մշակույթին բնորոշ միջոցառումներ, խոհարարական դպրոցներ
 - 6) Հանգստյան տներ և առողջարաններ
 - 7) Տոնական օրեր. Սուրբ Ծննդի, Ամանորի և այլ տոների հետ կապված հատուկ միջոցառումներ
2. Այնուամենայնիվ, ձմեռային արձակուրդում գտնվող հաճախորդների հիմնական դրոշմաբանությունը մնում է սպորտը (օրինակ, դահուկավազք և սնուբորդինգը (snowboarding)): Արձակուրդն անցկացնելու վայրի (հանգստյան գոտու) ընտրության չափանիշները ներառում են հասանելիությունը, գինը, ծառայությունների ու հարմարությունների որակը: (Բնական) ծյան բավարար պայմանները համարվում են ընտրվող վայրի ամենակարևոր բնութագիրը:
3. Չմեռային ճանապարհորդների հիմնական խթան է ճաշակել առանձնահատուկ, արտառոց և/կամ արկածային արդյունքներ: Արկածային արձակուրդի տեսակները տարբերակվում են ըստ թիրախային խմբի և կարող են հիմնված լինել հետևյալի վրա.
- 1) Յուրահատուկ բնություն/մշակույթ (օրինակ, հյուսիսափայլը, սաամյան մշակույթը)
 - 2) Գործունեության տեսակների բազմազանություն (օրինակ, դահուկային սպորտ, սնուբորդինգ, ձնամեքենաների վարում, զբոսանք շներով լժված սահնակներով)

- 3) Գործունեության արկածային տեսակներ (օրինակ՝ արկածային սաֆարի):
4. Դահուկային սպորտը ձմեռային զբոսաշրջության ամենատարածված հատվածներից է: Ենթադրվում է, որ այստեղ զբոսաշրջիկները ակնկալում են զբաղվել միայն դահուկային սպորտով: Մասնավորապես, միասին ճանապարհորդող երիտասարդները ցանկանում են իրենց այցելության ընթացքում դահուկավազքի վրա անցկացնել հնարավորինս շատ ժամանակ:
5. Ինչպես և առողջարանային զբոսաշրջության դեպքում, մի շարք համաշխարհային հետազոտություններ են կատարվել միջազգային ձմեռային զբոսաշրջության շուկայի վերաբերյալ: Դրանց արդյունքում ստացվել են հետևյալ տվյալները.
- 1) Ձմեռային հանգստավայրեր մեկօրյա այցելությունների քանակի աճ,
 - 2) Դահուկորդները պահանջում են նոր վայրեր, եթե դահուկային պայմանների որակը նույնն է մնում,
 - 3) Դահուկորդների և նրանց բնութագիրների (այցելության տևողությունը, կենցաղային նախասիրությունները, սեռը, էթնիկական պատկանելությունը և այլն) էությունը վերջին տարիներին անձանց փոփոխություն է կրել
 - 4) Սնուկորդինգը ապրել է ավելի արագ ընթացք աճ, քան դահուկային սպորտը. հիմնականում այն պատճառով, որ երիտասարդներն են սկսել սպորտով զբաղվել, չնայած մեծ սերունդն էլ դեռևս հետաքրքրություն է ցուցաբերում
 - 5) Ձմեռային զբոսաշրջությունն աճում է մեծապես ընկերների ու ընտանիքի անդամների կողմից տրված խորհրդի/առաջարկի շնորհիվ
 - 6) Ձմեռային հանգստյան գոտիներն ընդլայնում են իրենց կողմից առաջարկվող գործունեության տեսակների/միջոցառումների բազմազանությունը՝ ձյան հնարավոր վատ որակի հետ կապված ռիսկի գործոնի նվազեցման նպատակով
6. Բացառությամբ մի քանի տեղային հետազոտությունների, շատ փոքրածավալ քանակական տվյալներ կան համաշխարհային ձմեռային զբոսաշրջության արդյունաբերության ոլորտում:

Գլուխ 10. Առողջարանային ու ձմեռային զբոսաշրջային արդյունաբերությունների միջև մրցակցությունը

1. Չնայած այն բանին, որ առողջարանային ու ձմեռային առողջարանային արդյունքների պահանջարկը մեծանում է, մեծ քանակությամբ հանգստյան վայրեր մրցում են զբոսաշրջիկներին գրավելու համար: Չափազանց կարևոր է, որ զբոսաշրջության արդյունաբերության մշակողներն ու շահագրգիռ կողմերը Ջերմուկի գարգացումն իրականացնելիս հաշվի առնեն, թե հանգստյան այդ վայրերն ինչ են իրենցից ներկայացնում և մատուցեն բարձրորակ զբոսաշրջության հնարավորություններ, որոնք կդառնան այդ վայրերի նկատմամբ մրցակցային առավելություններ: Վերջին երկու տարիներին իրականացված հետազոտությունը ցույց է տալիս, որ Հայաստանի հիմնական շուկան ներառում է զբոսաշրջիկներ Արևմտյան Եվրոպայից (մասնավորապես, Ֆրանսիայից, Իտալիայից, Գերմանիայից և Սիլացյալ Թագավորությունից), Ռուսաստանից և ամերիկահայ սփյուռքից: Այդ իսկ պատճառով կարևոր է հասկանալ, թե ուր և ինչ նպատակով են ժամանում այս զբոսաշրջիկները:
2. Ավստրիան համարվում է Եվրոպայի ամենաճանաչված առողջարանային ու կազդուրիչ զբոսաշրջության կենտրոնը՝ ավելի քան 550 մասնագիտացված հյուրանոցներով ու հանգստյան տներով և ավելի քան 100 բուժիչ լուսանոցների կենտրոններով: Ավստրիան զբաղեցնում է Եվրոպական առողջարանային շուկայի 10%՝ ավելի քան 11 միլիոն այցելուներով, որոնք ժամանում են առողջության բարելավման նպատակով: Ավստրիան նաև գրավել է Ալպերի ձմեռային զբոսաշրջության համարյա թե մեկ հինգերորդ մասը:

- Առողջարանային կարևոր քաղաքներ են համարվում Բադենը, Բարինթհան, Բադենշթայնը, Զալցբուրգը, Զել ամ Սիին, Շլադմինգ Դախշբերին-Թաուերնը, Գաշթայնը, Դոլսբերնիզը և Տիրոլը:
3. Գերմանիան նույնպես համարվում է կազդուրիչ զբոսաշրջության Եվրոպայի առաջատարներից մեկը՝ մոտ 900 առողջարանային կենտրոններով, ներառյալ ավելի քան 300 ժամանակակից առողջական կենտրոններով, 50 կլիմայական, 48 ծովափնյա առողջական կենտրոններով, 62 Քնայի հիդրոթերապիայի առողջարաններով և ավելի քան 160 հանքային ջրերի ու ցեխի առողջարաններով: Գերմանիայում հայտնի առողջարանային քաղաքներ են Բադեն-Բադենը, Շտուտգարթը, Բադեն-Վյուրտեմբերգը, Բադ Նոիայնը, Վիսբադենը, Բադ Քիսինգենը, Բադ Էլսթերը, Բադ Դյուրքհայմը, Բինցը, Բադ Ռեյչենհոլը, Բադ Յոննիսը, Բադ Օենհաուզենը, Սբ. Պետրոսի Օրդինգը, Օբերհոֆը, Յելիզենդամը և Յեսսեն:
4. Ֆրանսիան Եվրոպայի ձմեռային զբոսաշրջության առաջատարն է՝ Ալպերում զբոսաշրջության 37%-ով և տրամադրելով դահուկավազքի ավելի քան 480 կմ երկարություն ունեցող ճանապարհի և 150 ճոպանուղիներ: Ծանաչված քաղաքներն են Կուրշավելը, Սերիբելը, Շամոնին, Վալ դ'Իզերը, Լորդես, Էվիան-լե-Բեինը և Դան:
5. Շվեյցարիան առաջարկում է Ավստրիայի արդյունքին նման արդյունք՝ առողջարանային ու ձմեռային զբոսաշրջության հնարավորությունների համադրությամբ: Գոյություն ունեն 164 միջինից մեծ լայն ճանաչում ունեցող դահուկային սպորտի հանգստավայրեր և բազմաթիվ առողջական կենտրոններ ու առողջարաններ: Ծանաչված վայրերի շարքում են Ադելբոդենը, Ապենցելերլանդը, Էնգադինը/Շուլը, Վալեյը/Լյոթերբադը, Վեզիսը, Լյուցերնը, Մորշախը, Վիտցնաուն, Դավոսը, Բլոսթերսը, Սենթ Մորիսը, Թաշը, Ցերմատը, Վերբին և Լա Ցունազը:
6. Իսպանիան նման է Ֆրանսիային իր առողջարանային ու ձմեռային զբոսաշրջության առաջարկներով: Այն ունի գրանցված ավելի քան 2000 տաք ջրերի աղբյուր, 90 լուգանքային և 120 առողջարանային կենտրոններ: Այն նաև ունի դահուկավազքի 837 կիլոմետր երկարությամբ ճանապարհ Ֆորմիգալի, Բաքեյրա, Բեդեթ և Սիերա Նեվադա հանրաճանաչ հանգստավայրերում: Այլ նշանավոր վայրերի թվում են Ռիաս Բեքսասը, Բանեիրո դե Արքեման, Մադ Մենորը, Լենջարոնը, Բալներո դե Արնեդիլոն, Բալներո դե Ֆիտերոն, Բալներո դե Ֆորտունան, Բալներո դե Լեդեսման և Բալներո դե Լուգոն:
7. Հունաստանն ունի 75 մասնագիտացված առողջարանային ու լուգանքային կենտրոն և դահուկային սպորտի 19 կենտրոն դահուկային սպորտի սկսնակ սիրահարների համար: Ծանաչված վայրերն են. Կաիմակսայան, Քելարիան, Ֆտերոպակոսը, Վասիլիցան, Յելմոսը, Խամիան, Զերակլիոնը, Լասիտին, Միկոնոսը, Նաքսոսը, Ռոդեսը, Սանտորինին, Սիֆոսոսը և Թինոսը: Հունաստանի նմանությամբ Կիպրոսը ևս առաջարկում է համեմատաբար փոքրաթիվ (մոտավորապես 20) առողջարանային կենտրոններ:
8. Չնայած այն բանին, որ Արևմտյան Եվրոպան գերիշխում է առողջարանային ու ձմեռային զբոսաշրջության արդյունաբերության մեջ որակի, ծախսերի և զբոսաշրջության ծավալի առումներով, նախկին Խորհրդային Միության երկրները տեղ են գտել շուկայում, հիմնականում իրենց ավանդական առողջարանային զբոսաշրջության և առողջարանների շնորհիվ, բավարարելով արևմտաեվրոպական երկրներից ժամանող զբոսաշրջիկների պահանջները: Նույնը կարելի է ասել և այդ երկրների բուժական զբոսաշրջության հատվածի վերաբերյալ, որն ունի մեծ թվով մասնավոր այցելուներ, որոնք ճանապարհորդում են արևմուտքից արևելք ատամնաբուժական և վիրաբուժական նպատակներով:
9. Հունգարիան ճանաչված է մասնավորապես իր առողջարանային զբոսաշրջության արդյունաբերության շնորհիվ, որը ներառում է 59 առողջարանային տիպի հյուրանոց և 55 կազդուրիչ կենտրոն: Հունգարիան զբաղեցնում է աշխարհում հինգերորդ տեղը տաք ջրերի մատակարարման ոլորտում՝ ունենալով 1289 տաք ջրերի աղբյուր: Ծանաչված վայրերը ներառում են Բուդապեշտը, Բուքը, Գևիզը, Էգերը, Դարկանին, Գյուլան,

Զալակարոսը, Լենտին, Մակոն, Գունարասը, Միսկուցը, Դերեցեցնը, Դամբովար-Գունարասը, Դայրուշորշուն և Սարվարը:

10. Վերջին տարիներին, Հունգարիայի նմանությամբ, Չեխիայի Համրապետությունը դարձել է արևմտաեվրոպական զբոսաշրջիկների համար ամենազարգացած առողջարանային վայրերից մեկը: Չնայած այն հանգամանքին, որ շատերը լսել են միայն Կարլովի Կարիի մասին, երկիրն ունի 176 առողջարանային կենտրոններ, որոնցից շատերը տեղակայված են 40 առողջարանային քաղաքների շրջակայքում: Այլ ճանաչված վայրերի թվում են Փոբերբադին, Մարիանսկե Լաժնեն, Ֆրանտիշկովի Լաժնեն, Յաշինովը, Բեքինը, Դարկովը, Վրաժը, Կոնստանտինովի Լաժնեն, Յանսկե Լաժնեն, Յեսենիկը և Լուիակովիցեն:
11. 2008թ. եվրամիության անդամ երկրներ դառնալուց հետո ինչպես Ռուսիայի, այնպես էլ Բուլղարիան, գնալով մեծ ճանաչում են գտնում իրենց առողջարանային կենտրոնների և ձմեռային զբոսաշրջության առումով:
12. Աշխարհագրական դիրքով Հայաստանին առավել մոտիկ Ռուսաստանն ու Վրաստանը նույնպես առաջարկում են ձմեռային ու առողջարանային զբոսաշրջության հնարավորություններ: Ռուսաստանի Դաշնության Ջրոսաշրջության Ջրոսաշրջման ռազմավարության համաձայն, այնտեղ գործում է մոտ 150 դահուկային սպորտի կենտրոն, որոնք տեղակայված են հիմնականում կենտրոնական Ռուսաստանում Պոլովոիեի շրջանում (Վոլգա գետի ափին), Ալթայում, Ուրալում և Կովկասում, Կոլսի և Կամչատկա թերակղզիներում, ինչպես նաև Բայկալ լճի շրջակայքում: Համարահայտ հանքային ջրերի առողջարանները տեղակայված են Պյատիգորսկում, Կիսլովոդսկում, Ժելեզնովոդսկում (Կովկասում), Վլադիվոստոկում, Կամչատկայի և Կարելիայի շրջաններում, Սև ծովի մերձակայքում, Ալթայ գետի և Բայկալ լճի ափերին:
13. Վրաստանն ունի դահուկային սպորտի երկու կենտրոն, որոնք գտնվում են Բակուրիանիում և Գուդաուրիում, ինչպես նաև մի շարք հանքային ջրերի առողջարաններ, որոնցից ամենաճանաչվածներն են. Բորժոմիի, Աբասթուանիի, Նուրիսիի, Սայրմեի, Ցխալթուբույի, Բեշուսի, Շուքիի և Ջեկարիի շրջանները:

ԲԱԺԻՆ 3. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

1. Կայուն զարգացումը առավել հաճախ սահմանվում է համաձայն Բրունդուլանդի հանձնաժողովի սահմանման՝ տրված 1987թվականին: Այն սահմանում է, որ զարգացումը պետք է «բավարարի ներկայի պահանջները, չզոհաբերելով հետագա սերունդների իրենց կարիքները հեղալու հնարավորությունը»: Որպես առողջարանային ու ձմեռային զբոսաշրջության կենտրոն Ջերմուկի զարգացումը պետք է իրականացվի համապատասխան հոգալով ներկայիս բնակչության և այցելու զբոսաշրջիկների սոցիալական, մշակութային, տնտեսական և շրջակա միջավայրի պահպանության կարիքները, հաշվի առնելով նաև ապագայում Ջերմուկում բնակվողներին և այցելուներին:
2. Սա ոչ միայն կարևորվում է բարոյական տեսանկյունից, քանի որ «կայուն զարգացում» եզրույթը դեռևս մնում է տարածված, և քանի որ այլ կենտրոնները նույնպես սենթված են կայուն զարգացման վրա: Դա կարևոր է Ջերմուկի, որպես զբոսաշրջության կենտրոնի, երկարաժամկետ հաջողության համար, քանի որ այնտեղ զբոսաշրջային արդյունաբերությունը ուղղակիորեն կախված է շրջակա միջավայրի որակից, քաղաքի բնույթից/դեմքից, տեղական մշակութային ու տեղացիներից: Կարճաժամկետ ձեռքբերումները չպետք է զերակայեն երկարաժամկետ նպատակների նկատմամբ:
3. Կայուն զբոսաշրջությունը կարող է սահմանվել հետևյալ կերպ. «Ջրոսաշրջություն, որի զարգացման ողջ ընթացքում հաշվի են առնվում զբոսաշրջության ներկա ու ապագա ազդեցությունը տնտեսության, սոցիալական ոլորտի և շրջակա միջավայրի վրա՝

միաժամանակ հաշվի առնելով նաև այցելուների, արդյունաբերության, շրջակա միջավայրի և հյուրընկալող համայնքների կարիքներն ու պահանջները»:

4. Ջերմուկի զբոսաշրջության երկարաժամկետ զարգացման ապահովման համար կիրառելի են 2005թ. ՄԱԿ Ջրոսաշրջության Համաշխարհային Կազմակերպության և ՄԱԿ Շրջակա միջավայրի պահպանության ծրագրի համատեղ մշակած կայուն զբոսաշրջության զարգացման հետևյալ 12 հիմնական սկզբունքները.
 - 1) **Տնտեսական կենսունակություն** – ապահովել զբոսաշրջային կենտրոնների ու ոլորտում ձեռնարկատիրությունների կենսունակությունն ու մրցունակությունը այնպես, որ դրանք երկար ժամանակ ի վիճակի լինեն զարգանալ և ստանալ շահույթ (հասկանալով շուկան, բավարարելով այցելուների պահանջները, պահպանելով առևտրային լավ պայմաններ, պահպանելով ու կառուցելով զրավիչ կենտրոններ, ինչպես նաև օժանդակելով գործարարության զարգացմանը):
 - 2) **Համայնքային զարգացում** – առավելագույնի հասցնել զբոսաշրջության ու տնտեսական զարգացման ներդրումը հյուրընկալող համայնքների զարգացման գործում, ներառյալ տեղում այցելուների ծախսերի համամասնությունը (նվազեցնելով արտահոսքի մակարդակը, տնտեսավարող սուբյեկտների միջև կապերի ամրապնդմամբ, ձևավորելով այցելուների ծախսերի սահմանային մակարդակներ):
 - 3) **Զբաղվածության որակը** – մեծացնել զբոսաշրջության շնորհիվ ստեղծված աշխատատեղերի քանակն ու որակը, ներառյալ աշխատավարձերի մակարդակը, աշխատանքային պայմանները ու մատչելիությունը առանց զենդեբային, ռասայական, հաշմանդամության կամ որևէ այլ խտրականության (մեծացնելով աշխատանքի հնարավորությունները և ամբողջ տարվա կտրվածքով աշխատատեղերի համամասնությունը, խրախուսելով, որ ձեռնարկությունները նախաձեռնեն հմտությունների զարգացման դասընթացային ծրագրեր և տրամադրեն մասնագիտական զարգացման հնարավորություններ ի բարձրություն աշխատողների):
 - 4) **Սոցիալական հավասարություն** – ապահովել զբոսաշրջությունից ստացված տնտեսական եկամտի և սոցիալական օգուտների համատարած ու արդարացի բաշխումը հյուրընկալող համայնքում, ներառյալ աղքատներին հասանելի հնարավորությունների, եկամուտների ու ծառայությունների բարելավումը (ստեղծելով եկամտաբեր գործունեության հնարավորություններ կարիքավորների համար՝ զբոսաշրջությունից ստացված եկամուտն ուղղելով սոցիալական ծրագրերի իրականացմանը):
 - 5) **Այցելուների պահանջների բավարարում** – այցելուներին տրամադրել ապահով, լիարժեք և սպասված ծառայություններ, առանց զենդեբային, ռասայական, հաշմանդամների կամ որևէ այլ խտրականության (բարելավելով մատչելիությունը բոլորին, տրամադրելով հանգստի հնարավորություն տնտեսապես ու սոցիալապես խոցելի խավերին, իրականացնելով այցելուների խնամքի հետ կապված պարտականությունները և ապահովելով այցելուների բավարարվածությունն ու տրամադրվող ծառայությունների որակը):
 - 6) **Տեղական վերահսկողություն** – տեղական համայնքներին ներգրավել ու լիազորել տարածաշրջանում զբոսաշրջության կառավարման ու հետագա զարգացման այլ շահագրգիռ կողմերի հետ համատեղ պլանավորման ու դրա վերաբերյալ որոշումների կայացման գործընթացներում (ապահովելով տեղական համայնքների ներգրավվածությունն ու մասնակցությունն համապատասխան մակարդակ, բարելավելով տեղական մակարդակում որոշումների արդյունավետ կայացումը):
 - 7) **Համայնքային բարեկեցություն** – պահպանել ու բարելավել տեղական համայնքներում կյանքի որակը, ներառյալ սոցիալական կառույցներն ու ռեսուրսները, հարմարությունները և օժանդակ սոցիալական համակարգերի մատչելիությունը, խուսափելով սոցիալական դեգրադացիայի կամ շահագործման

որև ձևից (սահմանելով այցելությունների ճիշտ ծավալը, տևողությունը, վայրը, նվազեցնելով զբոսաշրջային այցելությունների կուտակումները, ապահովելով արդյունավետ պլանավորում և զբոսաշրջային հաստատությունների ու ենթակառուցվածքների կառավարում, խրախուսելով հարմարությունների ու ծառայությունների համատեղ օգտագործումը տեղացիների ու այցելուների կողմից, ձևավորելով զբոսաշրջիկների վերաբերմունք տեղական համայնքների նկատմամբ):

8) **Մշակութային ժառանգություն** – հարգել ու զարգացնել պատմամշակութային ժառանգությունը, տեղական մշակույթը և ավանդույթները, ինչպես նաև հյուրընկալող համայնքների յուրօրինակ հատկությունները (ապահովելով մշակութային կրթողների տարածքների արդյունավետ կառավարումը և պահպանությունը, աշխատելով համայնքների հետ դրանց լավագույն ներկայացման ու մատուցման ուղղությամբ):

9) **Տեղանքի բնական վիճակ** – պահպանել և զարգացնել տեղանքի բնական որակը, թե քաղաքային ու թե գյուղական համայնքներում, խուսափել շրջակա միջավայրի ֆիզիկական ու տեսողական դեգրադացիայից (ապահովելով, որպեսզի զբոսաշրջության նոր զարգացումը համապատասխանի տեղական միջավայրի պայմաններին, նվազագույնին հասցնելով զբոսաշրջային գործունեության ֆիզիկական ազդեցությունը, պահպանելով գյուղական ու քաղաքային բնակավայրերի՝ որպես զբոսաշրջային ռեսուրսների, որակը):

10) **Կենսաբազմազանություն** – աջակցել բնական ռեսուրսների, բնակավայրերի ու վայրի բնության պահպանմանը և նվազագույնի հասցնել դրանց հասցվող վնասը (համագործակցելով բնության հատուկ պահպանվող տարածքների հետ, խթանելով էկոզբոսաշրջության զարգացումն ու կառավարումը, օգտագործելով զբոսաշրջությունը որպես հողատերերի կողմից հողոգտագործման կայուն ձևերի կիրառման խթան, բարձրացնելով զբոսաշրջիկների իրազեկությունը տեղանքի կենսաբազմազանության վերաբերյալ և ապահովելով դրա պահպանությանն ուղղված միջոցառումներ):

11) **Ռեսուրսների արդյունավետություն** – նվազագույնին հասցնել սակավ ու չվերականգնվող ռեսուրսների օգտագործումը զբոսաշրջային կենտրոնների ու ծառայությունների զարգացման ու զբոսաշրջային գործունեության ծավալման ընթացքում (զբոսաշրջության զարգացման պլանավորման ընթացքում հաշվի առնելով ռեսուրսների մատակարարման գործոնը և, հակառակը, նվազագույնին հասցնելով զբոսաշրջային արդյունաբերության կողմից ջրօգտագործման մակարդակը, ապահովելով զբոսաշրջության զարգացման ընթացքում հողի և հումքի արդյունավետ օգտագործում, խրախուսելով չափավոր օգտագործման, կրկնակի օգտագործման ու վերանշակման տեխնոլոգիաները):

12) **Շրջակա միջավայրի մաքրություն** – նվազագույնին հասցնել զբոսաշրջային կենտրոնների ու այցելուների կողմից օդի, ջրի և հողի աղտոտման ու աղբազոյացման մակարդակը (խրախուսելով էկոլոգիապես առավել անվնաս տրանսպորտային միջոցների օգտագործումը, նվազեցնելով շրջակա միջավայրին վնաս հասցնող քիմիական նյութերի օգտագործումը, խուսափելով կոյուղու արտանետումից գետեր, նվազագույնին հասցնելով աղբազոյացումը):

5. Կերը նշված սկզբունքները պետք է հաշվի առնվեն զարգացման ողջ ընթացքում և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների հետ համատեղ:

ԲԱԺԻՆ 4. ՈՒՇԵՂ ԵՎ ԹՈՒՅՆ ԿՈՒՅՆԻ, ՀԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՌԻՍԿԵՐԻ ՎԵՐՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1. Պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների, մյուս շահագրգիռ կողմերի հետ իրականացված բնարկումների և գյուղային ու մշակույթի ռեսուրսների գույքագրման հիման վրա իրականացվել է Ռազմավարության ուժեղ ու թույլ կողմերի, հնարավորությունների ու ռիսկերի վերլուծություն (այսուհետ՝ Վերլուծություն): Վերլուծությունը դիտարկել է առողջարանային ու ձմեռային զբոսաշրջային կենտրոնի ստեղծման բազմաթիվ կարևոր բարդությունները յուրաքանչյուրը, սկսած առողջարանների ու ձմեռային սպորտաձևերի հարմարությունների որակից մինչև տարածքային կառավարումը: Դրանք բաժանվել են զբոսաշրջության վրա ուղղված ու անուղղակիորեն ազդող գործոնների, որոնք, իրենց հերթին ռազմավարվել են միջոցառումների ծրագրում:

	Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր	Հնարավորություններ	Ռիսկեր
Չբոսաշրջության իրականացման համար անհրաժեշտ է լինող հարմարություններ	• Լավագույն առողջարաններ ունեն թիչ թե շատ գրավիչ մերթի խորությամբ և տարբեր (ներառյալ համապատասխանող սենյակներ, • Լափատեակում է նոր առողջարանի կառուցումը «Հայաթթ» հյուրանոցային ցանցի ներգրավմամբ	• Ստողջարաններից ամենաբարձր արտաքին տեսք ունեն • Ժամանցի հնարավորությունները (տվյալաբար սահմանափակում են քիլոխորտվ մեղանի թեմիսով կամ բարով) • Սենդի որակը ընդհանուր առմամբ ցածր է, առաջարկվում է փոքր ընտրություն • Բոլոր առողջարաններն առաջարկում են միևնույն բուժումները՝ չնչին • Փաթեթների ծնունդություն	• Առողջարաններում ավելի մեծ հնարավորություններ կարգացում, անձնատարող ելանուտ և ժամանակ այն ծախսելու համար ծախսելու մասնագիտացված «Նեղ կամ «Խատուկ» բուժման ձևի մշակում, որը հիմք կդառնա սպորտաբանիչի մշակման համար ու ստորգործակի օպյալ առողջարանը մտազոծներին	• Կյստեղ նշված թույլ կողմերի արդյունքում հնարավոր է, որ Զերմուկի առողջարանները չկարողանան մրցակցել այլ արևմտյան առողջարանների հետ մրցազգային զբոսաշրջիկներին գրավելու գործում • Ծանախարհների, գրասպարու և կանաչ գույնների վատ վիճակը բացասաբար է ազդում առողջարանային շինությունների գրավելու վրա • Առողջարանային հաստատությունների ու ծառայությունների
Չբոսաշրջության իրականացման համար անհրաժեշտ է լինող հարմարություններ	• Լավագույն առողջարաններ ունեն թիչ թե շատ գրավիչ մերթի խորությամբ և տարբեր (ներառյալ համապատասխանող սենյակներ, • Լափատեակում է նոր առողջարանի կառուցումը «Հայաթթ» հյուրանոցային ցանցի ներգրավմամբ	• Ստողջարաններից ամենաբարձր արտաքին տեսք ունեն • Ժամանցի հնարավորությունները (տվյալաբար սահմանափակում են քիլոխորտվ մեղանի թեմիսով կամ բարով) • Սենդի որակը ընդհանուր առմամբ ցածր է, առաջարկվում է փոքր ընտրություն • Բոլոր առողջարաններն առաջարկում են միևնույն բուժումները՝ չնչին • Փաթեթների ծնունդություն	• Առողջարաններում ավելի մեծ հնարավորություններ կարգացում, անձնատարող ելանուտ և ժամանակ այն ծախսելու համար ծախսելու մասնագիտացված «Նեղ կամ «Խատուկ» բուժման ձևի մշակում, որը հիմք կդառնա սպորտաբանիչի մշակման համար ու ստորգործակի օպյալ առողջարանը մտազոծներին	• Կյստեղ նշված թույլ կողմերի արդյունքում հնարավոր է, որ Զերմուկի առողջարանները չկարողանան մրցակցել այլ արևմտյան առողջարանների հետ մրցազգային զբոսաշրջիկներին գրավելու գործում • Ծանախարհների, գրասպարու և կանաչ գույնների վատ վիճակը բացասաբար է ազդում առողջարանային շինությունների գրավելու վրա • Առողջարանային հաստատությունների ու ծառայությունների

<p>հիսնամյա նախնական և միջնակարգ ուսումնական հաստիքային ուսման համակարգում համապատասխան ուսումնական արժեքի գնահատման համակարգի մշակման և ներդրումների գնահատման իրականացումը</p>	<p>գյուղատնտեսության սեկտորում արտադրանքի արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացումը և մրցակցային զբաղմունքի կարողության բարձրացումը</p>	<p>հիմնականում նախնական և միջնակարգ ուսումնական հաստիքային ուսման համակարգում համապատասխան ուսումնական արժեքի գնահատման համակարգի մշակման և ներդրումների գնահատման իրականացումը</p>	<p>արտադրանքի արդյունավետության բարձրացումը և մրցակցային զբաղմունքի կարողության բարձրացումը</p>
<p>արհեստագիտական արտադրանքի արդյունավետության բարձրացումը և մրցակցային զբաղմունքի կարողության բարձրացումը</p>	<p>արհեստագիտական արտադրանքի արդյունավետության բարձրացումը և մրցակցային զբաղմունքի կարողության բարձրացումը</p>	<p>արհեստագիտական արտադրանքի արդյունավետության բարձրացումը և մրցակցային զբաղմունքի կարողության բարձրացումը</p>	<p>արհեստագիտական արտադրանքի արդյունավետության բարձրացումը և մրցակցային զբաղմունքի կարողության բարձրացումը</p>

Վաճառք, Արտադրանքային, Վաճառք, Արտադրանքային

<p>գյուղատնտեսության սեկտորում արտադրանքի արդյունավետության բարձրացումը և մրցակցային զբաղմունքի կարողության բարձրացումը</p>	<p>արհեստագիտական արտադրանքի արդյունավետության բարձրացումը և մրցակցային զբաղմունքի կարողության բարձրացումը</p>	<p>արհեստագիտական արտադրանքի արդյունավետության բարձրացումը և մրցակցային զբաղմունքի կարողության բարձրացումը</p>	<p>արհեստագիտական արտադրանքի արդյունավետության բարձրացումը և մրցակցային զբաղմունքի կարողության բարձրացումը</p>
<p>արհեստագիտական արտադրանքի արդյունավետության բարձրացումը և մրցակցային զբաղմունքի կարողության բարձրացումը</p>	<p>արհեստագիտական արտադրանքի արդյունավետության բարձրացումը և մրցակցային զբաղմունքի կարողության բարձրացումը</p>	<p>արհեստագիտական արտադրանքի արդյունավետության բարձրացումը և մրցակցային զբաղմունքի կարողության բարձրացումը</p>	<p>արհեստագիտական արտադրանքի արդյունավետության բարձրացումը և մրցակցային զբաղմունքի կարողության բարձրացումը</p>

Վաճառք, Արտադրանքային, Վաճառք, Արտադրանքային

<p>վլգմպմեևմպդր դյստմևհ մյրսմնմհմհմհմ վրստմվր ևնդյրս դրսմսիմհմս դրմվրտտմհմդր</p>	<p>դվվգնևնմհմդր դրստմևհ դրմնմվրմդրսմ դրմնմվրմդրսմ դրստմևհ դրմնմվրմդրսմ դրստմևհ դրմնմվրմդրսմ</p>	<p>դրմհմտվրմդր ևնդյրս դրմնմվրմդր դրստմևհ դրմնմվրմդր դրստմևհ դրմնմվրմդր դրստմևհ դրմնմվրմդր</p>	<p>տզպ դրմնմվրմդր մզգնմևհ վրտրմվր դ վրտրմ 'վրտրմ դրմ ևնդյրս դրմնմվրմդր ևնդյրս դրմնմվրմդր</p>	<p>դրս մնմ</p>
<p>տզպ վրտրմ մնմ ևնդյրս դրմնմվրմդր ևնդյրս դրմնմվրմդր ևնդյրս դրմնմվրմդր</p>	<p>մզգնմևհ վրտրմ մնմ ևնդյրս դրմնմվրմդր ևնդյրս դրմնմվրմդր ևնդյրս դրմնմվրմդր</p>	<p>մնմ ևնդյրս դրմնմվրմդր ևնդյրս դրմնմվրմդր ևնդյրս դրմնմվրմդր ևնդյրս դրմնմվրմդր</p>	<p>մնմ ևնդյրս դրմնմվրմդր ևնդյրս դրմնմվրմդր ևնդյրս դրմնմվրմդր ևնդյրս դրմնմվրմդր</p>	<p>ևնդյրս դրմնմ վրմդր</p>
<p>դրսմզգնմ դրմնմ ևնդյրս դրմնմվրմդր ևնդյրս դրմնմվրմդր ևնդյրս դրմնմվրմդր</p>	<p>դրսմզգնմ դրմնմ ևնդյրս դրմնմվրմդր ևնդյրս դրմնմվրմդր ևնդյրս դրմնմվրմդր</p>	<p>մնմ ևնդյրս դրմնմվրմդր ևնդյրս դրմնմվրմդր ևնդյրս դրմնմվրմդր ևնդյրս դրմնմվրմդր</p>	<p>մնմ ևնդյրս դրմնմվրմդր ևնդյրս դրմնմվրմդր ևնդյրս դրմնմվրմդր ևնդյրս դրմնմվրմդր</p>	<p>ևնդյրս դրմնմ վրմդր</p>
<p>մզգնմ ևնդյրս դրմնմ վրմդր</p>	<p>մզգնմ ևնդյրս դրմնմ վրմդր</p>	<p>մզգնմ ևնդյրս դրմնմ վրմդր</p>	<p>մզգնմ ևնդյրս դրմնմ վրմդր</p>	<p>ևնդյրս դրմնմ վրմդր</p>

<p>դրմհմտ ևնդյրս դրմնմ վրմդր</p>	<p>մզգնմ ևնդյրս դրմնմ վրմդր</p>	<p>մզգնմ ևնդյրս դրմնմ վրմդր</p>	<p>մզգնմ ևնդյրս դրմնմ վրմդր</p>	<p>ևնդյրս դրմնմ վրմդր</p>
<p>մզգնմ ևնդյրս դրմնմ վրմդր</p>	<p>մզգնմ ևնդյրս դրմնմ վրմդր</p>	<p>մզգնմ ևնդյրս դրմնմ վրմդր</p>	<p>մզգնմ ևնդյրս դրմնմ վրմդր</p>	<p>ևնդյրս դրմնմ վրմդր</p>

2. Վերլուծության արդյունքների հիմամ վրա մշակվել է Ջերմուկ քաղաքի զարգացման տեսլականը՝ նկատի ունենալով վերջինիս՝ որպես առողջարանային կենտրոնի, ուժեղ կրկնը: Ի լրումն դրա, մշակվել է խնդիրների մի շարք, որոնք անդրադառնում են բացառապես խոչընդոտներին: Այս ամենը հիմք է ծառայում ստորև բերված ռազմավարության համար:

36

	<p>(%ՀՀ տար չ րուցեռի մմրսմտոսիստ վմզիմոի իսմրսմտոսիստ մզոն իզիտստ մզիմոի ցվմոիցոմ իզցնմզի ցվբոիտոպ մսիտցոտր նսլոիտը րսմնսսն րստմսն րտրնոտմոն րոմնսմշոտսմն րսիսրնմզՉ իտ իրսջ•</p> <p>մնզիվս ոզցնվմ ռնզցոպ ցվցրսոտոից մոիոմվը մոտոքսն տոտոցզոմ իզնզսլը•</p> <p>իսնսմվը ռնզցոթվ մնոպ վմզցրսմնմզց ցվմոտսմ Ճրոզիոշը րոմնսցոիոմոնոմ զոիոտոսլոմվ զոիոզստցո րսիոտնքն քնքնիքի քնքն մոլ•</p>	<p>վզցմսմնո րոիոցոցվճ Ճզքմոիցոմ մոցոպ րոմնսզրսքսն րոիոմվտոիմոցսզը իոցոիլ•</p> <p>իոնմոիոը մզմոմ րոմնսմսցո ռս րսմնսցրոիվս մզմոչ•</p> <p>րսմնսցրոիոմ մնզցնսմվը րոցոսոլոմոլ ռս մզցմրսմնոիմոպ մզմոմ նսնեռ ոմի րոմնսզրսքսն րոիոմվտոիմոցսզը իոցոիլ•</p> <p>Ճրոպոտ Վմզցրսմնմզց րսմոիոչ•</p>		<p>մզցոցոց -վճ/մոի -ոմվը մոմ -ոքսն</p>
<p>րոցոտոպոտոցո ռս րոցոստոն ճվընսի վբոիտոպ մսիտցոտր իստոցոտո զոմնսիցոն ռսլոցոտո մզցոսոցոիզ տզիցոթրոցմոի իզցնզեցոպ չ նսմոի մշցվ՝ մզցրսիոթրոցոթրոցո րոիոմվ նսիսպոտո ցրսմնսցրոիոպ վմոիոմվր րոիոչ•</p> <p>վմզցոտնցմշոլ րոցոնոիոցոպ իզցնզեցոպ չ նսմոի</p>	<p>րսցոտոպոտո ռս րսքնզոտ վմոիոմվր մոմոքսն նոսոլոմոլ ռս րսքոմշ նոսոլոմոլ մզո րսմոի վիոնս վմզցրսմնստոք ռս (րստմսն րոմնսզքմոցրսմնո րոմնսմշոտսմն ոզիոիտոպ) վմզցրսմնսցոզ•</p> <p>րսնմոիոցո րոմնսիսպոտո ռս րոմնսցոիոպ վմոիոմվր ոիոմշ ռս վմզջոմ րոցոնոմոն վմվոցո ցվոցոմոնսջը•</p> <p>մոցոիոմնջ վմզցրսմնմզց րսքոիտոպ մսիտցոտր րոիոնսս րսիոշը վնմոիոցոպ</p>	<p>րոցոսոլոմոլ րոմնսցրոիոմ վմզցրսմնմզը•</p> <p>իոնմոիոը մզոն րոցոնոիոցոպ ղճվը վմզցրսմնստոլոլ•</p> <p>մզրսիոմվ ռնզցրսմնոպ իոնզ րոի րոմնսոլսվսի վմզցրսմնսս վտզիոթրոցոպ</p>		
<p>մզիվս</p>	<p>մզցրսմնսցրոց</p>	<p>մզնսի իրսջ</p>	<p>մզնսի նզրս</p>	

ԲԱԺԻՆ 5. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՆՊԱՏԱԿ

Գլուխ 1. Ռազմավարության հայեցակարգային նպատակը

1. Ռազմավարության հայեցակարգային նպատակն է Ջերմուկ քաղաքը դարձնել ամբողջ տարին գործող միջազգային չափանիշներին համապատասխանող առողջ և ակտիվ կենսակերպի զբոսաշրջային կենտրոն ինչպես ներքին այնպես էլ ներգնա զբոսաշրջիկների համար՝ Եվրոպայից, ԱՊՀ երկրներից ու Հյուսիսային Ամերիկայից : Այցելուներին կգրավի անապակ միջավայրի, հաճելի կլիմայի, օրգանական ու առողջ սննդի, հանքային ջրերի աղբյուրների, առողջարանային զբոսաշրջային արդյունքների ու ծառայությունների, բացօթյա միջոցառումների ու ակտիվ ծմեռային զբոսաշրջության հնարավորությունների, ինչպես նաև հոգեվարժանքի ու ստեղծագործելու, մեդիտացիայի հնարավորությունների ուրույն համադրությունը: Ջերմուկի զբոսաշրջային արդյունքն ու ծառայությունները կկենտրոնանան տարբեր տարիքի, տարբեր կարողությունների տեղ և, հատկապես, երիտասարդ խմբերի ու ընտանիքների շրջանում մտքի, մարմնի ու հոգու առողջություն քարոզելու ամբողջական մոտեցմանը: Քաղաքի զարգացումը կհանգեցնի նաև տեղի բնակչության առողջության ու բավարարվածության մակարդակի բարձրացմանը, որոնք հնարավորություն կունենան օգտվել զբոսաշրջիկներին առաջարկվող ապրանքներից ու ծառայություններից:
2. Սույն տեսլականը ձևավորվել է ծավալուն հետազոտության ու վերլուծության հիման վրա, որոնք իրականացվել են Ռազմավարության մշակման ընթացքում: Այն հաշվի է առել՝
 - 1) Առողջարանային ու ծմեռային զբոսաշրջության պահանջարկի միտումները,
 - 2) Ջրոսաշրջության մրցակից կենտրոններում մատուցվող ապրանքներն ու ծառայությունները և դրանց գովազդման ձևերը,
 - 3) Ընդգրկված վերլուծության արդյունքները,
 - 4) Ջրոսաշրջության, տարածքային զարգացման ու աղքատության հաղթահարման ոլորտներում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը:
3. Տեսլականի հիմքում ընկած է նաև Ջերմուկի առողջարանային ծառայությունների մատուցման փորձը:
4. Ինչպես նշվել է Ռազմավարության առաջին մասում, Ջերմուկ քաղաքն ունի հսկայական մրցակցություն Ռուսաստանում, Կովկասում, Արևմտյան ու Արևելյան Եվրոպայի երկրներում թե՛ առողջարանային, և թե՛ ծմեռային զբոսաշրջության բնագավառներում: Հաշվի առնելով այս երկրներում առողջարանային գոտիների ու ծմեռային զբոսաշրջության կենտրոնների ճանաչվածությունը, առկա հաճախորդների պահպանողականությունը, գոյություն ունեցող ծառայությունների ու հաստատությունների որակը, ժամանելու հարաբերական հարմարությունն ու արժեքը, ինչպես նաև գների ցածր մակարդակը (մասնավորապես Արևելյան Եվրոպայի երկրներում)՝ Ջերմուկը փոքր հաջողության կհասնի, եթե փորձի պարզապես կրկնօրինակել զբոսաշրջության առկա առաջարկները: Ջերմուկի առողջարանները չունեն ճոխության, հարմարավետության, բուժումների ու ծառայությունների այն բարձր մակարդակը, որն ունեն շատ առողջարաններ Արևմտյան ու Արևելյան

Եվրոպայի երկրներում: Սույնը վերաբերում է և Ջերմուկի ծմեռային զբոսաշրջության որակին՝ համեմատած Պիրենեյների կամ Ալպերի հետ՝ իր դահուկավազքի համար նախատեսված երկու լանջերով ու դահուկավազքից հետո զբաղմունքի հնարավորությունների բացակայությամբ: Սույնիսկ Ջերմուկում զգալի ներդրումների ու դրա զարգացման պարագայում, այն դեռևս կմնա մրցակցության առումով անբարենպաստ դիրքում, հաշվի առնելով հեռավորությունը իր հիմնական շուկայից, գնային համակարգն ու ենթակառուցվածքները: Ջերմուկը դժվարությունների կհանդիպի, եթե համաշխարհային զբոսաշրջային շուկային ներկայանա որպես զուտ ծմեռային կամ առողջարանային զբոսաշրջային կենտրոն:

5. Այն պետք է տարբերագատվի այլ մրցակից կենտրոններից և չպետք է ընկալվի որպես միայն դահուկային սպորտի կամ առողջարանային քաղաք: Միայն դահուկային սպորտի կամ առողջարանային հնարավորություններ մատուցելու, կամ որպես այդպիսին ներկայանալու փոխարեն, Ջերմուկը պետք է դիտարկվի որպես ամբողջական զբոսաշրջային փարձառություններ տրամադրող զբոսաշրջային կենտրոն և իրականում տրամադրի այդպիսի փորձառություններ: Այդ փորձառությունը պետք է հիմնված լինի կոնկրետ զբոսաշրջային թեմայի վրա, որը կմիավորի զբոսաշրջիկներին առաջարկվող զբոսաշրջային արդյունքի, ծառայությունների ու միջոցառումների լայն տեսականի:
6. Ջերմուկի համբավը որպես Հայաստանի կարևորագույն առողջարանային կենտրոն, Ջերմուկի շուրջ սփռված բնությունը, հանքային ջրերի աղբյուրների առկայությունը, առողջարանները, էկոլոգիապես մաքուր և ամբողջությամբ օրգանական գյուղատնտեսությունը, հաճելի կլիման ու դահուկային սպորտի հնարավորությունը ամբողջությամբ ընդգրկվում են վերը նշված զբոսաշրջային թեմայում, այն է «Առողջ ու ակտիվ ապրելակերպի կենտրոն»:
7. Ջերմուկն այս ուղղությամբ զարգացնելը և զբոսաշրջության համաշխարհային շուկայում ներկայացնելը թույլ կտա Ջերմուկին, որպես զբոսաշրջային կենտրոն առաջարկել ավելին, քան միայն առողջարաններ ամառվա ամիսներին ու դահուկային սպորտ ծմեռանը, դրանով իսկ դուրս գալով շատ ավելի լայնածավալ ու բարձրարժեք զբոսաշրջության շուկա: Ջրոսաշրջիկները կընտրեն Ջերմուկը, քանի որ այն համատեղում է ակտիվ բացօթյա ու ծմեռային միջոցառումները հանգստացնող ու օգտակար առողջարանային բուժումների, առողջարար կլիմայի ու հաճելի բնության, օրգանական սննդի ու հոգեվարժանքի հնարավորությունների հետ:
8. Ջրոսաշրջային միջոցառումների համադրությունը, որ կմշակվեն առավել բարձրարժեք զբոսաշրջային արդյունքներ ձևավորելու նպատակով, կնպաստի իրատեսորեն գրավելու զբոսաշրջիկներ Արևելյան ու Արևմտյան Եվրոպայի երկրներից, Ռուսաստանից ու ԱՊՀ երկրներից, հաշվի առնելով, որ շուկայավարությունը պետք է նպատակաուղղված լինի կոնկրետ երկրների ու յուրաքանչյուր երկրում կոնկրետ հատվածների, որոնց կհետաքրքրեն առաջարկվող զբոսաշրջային գրավչություններն ու հնարավորությունները:
9. Ներգնա զբոսաշրջիկների համար նախատեսված առողջարանային ծառայությունները պետք է մատչելի և հասանելի լինեն նաև տեղի բնակչության համար՝, անհրաժեշտության դեպքում զեղչերի համակարգի կիրառման միջոցով: Դա կոգևորի տեղի բնակչությանն առողջ ապրելակերպի գաղափարով, միաժամանակ

նպաստելով նրանց կողմից ներքին և ցերեզնայ գրոսաշրջիկներին առավել որակյալ գրոսաշրջային ծառայություններ մատուցելուն:

10. Ռազմավարության նպատակների իրականացումը պայմանավորված է հետևյալ խնդիրների լուծմամբ.

1) Ուղղակիորեն գրոսաշրջությանն առնչվող խնդիրներ`

ա. Արդիակացնել ու բարելավել առողջարանային, հյուրանոցային, հյուրատների և այլ հարմարությունների ու ծառայությունների որակն ու բազմազանությունը, դրանք ուղղել այսօրվա ներքին ու ցերեզնայ սպառողի պահանջների բավարարմանը (այդ թվում նաև համապատասխանացում միջազգային չափանիշներին):

բ. Բարելավել ու արդիականացնել առողջարաններում բուժական ծառայությունները, հավաստել դրանց բուժական հատկություններն ու ընդլայնել ծառայությունների շրջանակները, դրանք ուղղել այսօրվա տեղացի ու օտարերկրացի սպառողի պահանջների բավարարմանը:

գ. Զարգացնել ու ընդլայնել դահուկային սպորտի և այլ ծմեռային սպորտաձևերի կենտրոններն ու ծառայությունները Զերմուկում:

դ. Զարգացնել ու խորացնել Զերմուկի, որպես շախմատի միջազգային մրցումների կենտրոնի, համբավը համապատասխան պայմանների ստեղծման ու արդյունավետ գովազդի միջոցով:

ե. Զարգացնել բարձրարժեք ու բարձրորակ համահայկական ու միջազգային երիտասարդական ճամբարներ հյուրընկալելու Զերմուկի կարողությունն ու համբավը համապատասխան պայմանների ստեղծման ու մարդկային ռեսուրսների զարգացման միջոցով:

զ. Բարելավել Զերմուկում գրոսաշրջային արդյունաբերությանը հարող ու օժանդակող արդյունաբերության ոլորտների որակն ու բազմազանությունը, ներառյալ ժամանցի վայրերն ու միջոցառումները, ռեստորանները, խանութները և այլն, որպեսզի հնարավորություններ ստեղծվեն գրոսաշրջիկին ժամանցի ավելի լայն ընտրություն տրամադրելու, մեծացնելու գրոսաշրջիկի օրական ծախսի չափը և նպաստելու առավել երկարատև այցելությունների մակարդակի աճին:

է. Բարելավել գրոսաշրջության կենտրոնն ու դրա կառավարումը, զարգացնել անձնակազմի կարողությունները, ունակություններն ու հմտությունները, ինչպես նաև գործազուրկ աշխատուժի որակը` կազմակերպելով տեղական գրոսաշրջության վերաբեյալ ուսուցողական դասընթացներ, գործնական աշխատանքներ, աշակերտություն և մասնագիտական ուսուցում:

թ. Մշակել Զերմուկի ուրույն «ապրանքանշանը», որը կհամապատասխանի Զերմուկի ներկայիս ու հետագա մրցակցային առավելություններին, որոշել համապատասխան հաճախորդի թիրախային խումբը/խմբերը և ակտիվորեն գովազդել Զերմուկը որպես գրոսաշրջային կենտրոն:

ժ. Արդիականացնել Զերմուկի գրոսաշրջային ծառայությունների վերաբեյալ տեղեկատվությունը, որը կխթանի գրոսաշրջիկների այցելությունները, կօգնի նրանց կողմնորոշվելու և ապահովելու նրանց իրազեկվածությունը Զերմուկում բոլոր հնարավոր անելիքների վերաբեյալ:

2) Զրոսաշրջության անուղղակի առնչվող խնդիրներ

ա. Զարգացնել ու պահպանել Զերմուկի դեմքը որպես գրոսաշրջության կենտրոնի, ինչը բնութագրվում է ճարտարապետությամբ, կամաչ տարածքով, միջավայրի որակով, մաքրությամբ, մարդկանց հյուրընկալությամբ և այլն:

բ. Բարելավել, արդիականացնել ու մեծացնել տրանսպորտի ենթակառուցվածքը և Զերմուկ տանող ու այնտեղից բերող տրանսպորտային ծառայությունները:

գ. Արդիականացնել Զերմուկի հեռահաղորդակցության միջոցները:

դ. Զարգացնել բուժական ու առողջապահական ծառայությունները:

ե. Որոշել, թե քանի նոր աշխատատեղ հնարավոր կլինի ստեղծել այս նախաձեռնության շրջանակներում, և առկա ու հնարավոր աշխատողների համար ապահովել համապատասխան ու մատչելի բնակարանային պայմաններ:

զ. Բարելավել առկա ենթակառուցվածքները` հանձն առնելով քանդել կամ վերանորոգել դրա կարիքն ունեցող շինությունները, բարելավել փողոցային ճանապարհի համակարգը և քաղաքի փողոցների, մայրերի ու գրոսայգու մշամանակակից ու հաճելի տեսքը:

է. Մշակել աղբի ու կոյուղու մաքրման ու վերամշակման մեթոդներ:

ը. Փորձել գյուղատնտեսական արտադրանքը համապատասխանեցնել տեղական հյուրանոցների, ռեստորանների ու մանրածախ առևտրի կետերի կարիքներին, հատուկ ուշադրության արժանացնելով բարձրորակ օրգանական արտադրությունն ու տեղական ավանդույթները:

թ. Տրամադրել հասարակական ծառայություններ` ուղղված տեղաբնակների կենսամակարդակի ու սոցիալական միջավայրի բարելավմանը:

ժ. Գովազդել Վայոց Ձորի ու Զերմուկի պատմաշակութային ժառանգությունը որպես Զերմուկի տեսլականի օժանդակ տարր և ի բարօրություն տեղական համայնքների ու այցելու գրոսաշրջիկների սոցիալական ու տնտեսական առումներով:

ժա. Պահպանել ու զարգացնել Զերմուկի ու դրա շրջակայքի գյուղական միջավայրը:

ժբ. Զերմուկի զարգացման որոշակի պատասխանատվություն հանձնարարել քաղաքին և ակտիվորեն փորձել ներգրավել համայնքը Զերմուկի զարգացման գործընթացում` խրախուսելով մասնակցությունն ու արձագանք Զերմուկի զարգացման կայունությունը ապահովելու նպատակով:

ժգ. Զարգացնել բիզնես միջավայրը` մեծացնելու Զերմուկում մասնավոր հատվածի ներդրում կատարելու միտումը:

11. Սույն գլխով նախատեսված խնդիրների իրականացումն ապահովող գործողությունները, դրանց հիմնավորումը, պատասխանատվության բաշխումն ու առաջնահերթությունների (փուլ առ փուլ) սահմանումը ներկայացված են Ռազմավարության միջոցառումների ցանկում:

Գլուխ 3. Շահագրգիռ կողմերի դերերն ու պատասխանատվության ոլորտները

1. Ռազմավարության արդյունավետ իրականացումը կախված կլինի, թե շահագրգիռ կողմերից յուրաքանչյուրը որքանով կկատարի իր պարտավորությունները և որքանով կհամագործակցի մյուս շահագրգիռ կողմերի հետ:

2. Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց իրավասության սահմաններում պատասխանատվություն են կրում Ռազմավարության միջոցառումների ծրագրի իրականացման, քաղաքում ներդրումների և ձեռնարկատիրական գործունեության համար բարենպաստ միջավայր ապահովելու, քաղաքի տեսքի, տրանսպորտի, հեռահաղորդակցության, առողջապահության, բնակֆոնդի, կոմունալ ծառայությունների, պատմամշակութային ժառանգության պահպանման, կրթության ու բնապահպանության հարցերով:

3. Մասնավոր հատվածը պետք է պատասխանատու լինի, առաջին հերթին, զբոսաշրջությանն ուղղակի առնչվող խնդիրների համար՝ հյուրանոցներ, առողջարանային ծառայություններ, բացօթյա ժամանց ու միջոցառումներ, առևտուր, հասարակական սննդի վայրեր, արհեստների ու հուշանվերների արտադրության ոլորտների բարելավում ու ընդլայնում:

4. Զաղաքացիական հասարակությունը և համայնքը պետք է ներգրավված լինեն զարգացման ողջ գործընթացում, քանի որ Ջերմուկը նրանց քաղաքն է, և իրենք են լինելու զարգացման արդյունքների կրողը: Սա նշանակում է դիմել նրանց կարծիքին գործընթացի տարբեր փուլերում, հաշվի առնել նրանց տեսակետն ու առաջարկությունները և հոգ տանել նրանց անհանգստացնող երևույթների համար:

Գլուխ 4. Մոնիթորինգ և գնահատում

1. Հետազոտությունը, մոնիթորինգն ու գնահատումը որոշիչ դեր ունեն Ռազմավարության միջոցառումների ծրագրի արդյունավետ իրականացման գործընթացում: Վերահսկողության համակարգված ու դինամիկ համակարգը կօգնի պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմիններին հասկանալ սոցիալական, տնտեսական ու շրջակա միջավայրի պահպանությանը վերաբերող հարցերի լայն շրջանակը, որոնք մեծ ազդեցություն ունեն իրենց տարածքի ու տարածքային փոփոխության վրա:

2. Միջազգային լավագույն փորձի հիման վրա անհրաժեշտ է ձեռնարկել հետևյալ կարևոր ու փոխկապակցված գործառնությունները.

- 1) գնահատել, թե որքանով են իրականացվում տեղական զարգացմանը վերաբերող փաստաթղթերում նախանշված գործողությունները,
- 2) բացատրություն տալ չիրականացված գործողությունների համար և որոշել այն քայլերը, որոնք պետք է ձեռնարկվեն այդ գործողությունների իրականացման համար, կամ հիմնավորել որևէ գործողության փոփոխությունը կամ փոխարինումը մեկ այլ գործողությամբ,
- 3) բացահայտել տեղական զարգացման փաստաթղթերում նախանշված և իրականացված գործողությունների ազդեցությունը, ինչպես նաև այն, թե այդ ազդեցությունը արդյոք համապատասխանում է ակնկալվածին,
- 4) որոշել, թե արդյոք անհրաժեշտ է գործողությունները փոփոխել կամ դրանք փոխարինել այլ գործողություններով:

3. Մոնիթորինգի ու գնահատման հաշվետվությունները պետք է արտացոլեն հետևյալը.

1) Արդյոք Ռազմավարությամբ նախատեսված միջոցառումներն ու թիրախները իրականացվել են կամ իրականացման ընթացքում են, կամ, եթե չեն իրականացվել կամ իրականացման ճիշտ ուղու վրա չեն, ապա ինչու,

2) Ինչ ազդեցություն ունեն Ռազմավարությամբ նախատեսված միջոցառումները հանրապետական տարածքային կամ տեղական նշանակության այլ ծրագրերի վրա,

3) Ինչ զգալի հետևանքներ ունի միջոցառումների իրականացումը կայունությունը չափող սոցիալական, տնտեսական ու շրջակա միջավայրին առնչվող խնդիրների վրա, և արդյոք այդ հետևանքները համապատասխանում են ակնկալիքներին, թե՛ ոչ,

4) Արդյոք ռազմավարությամբ նախատեսված միջոցառումները կարիք ունեն փոփոխության կամ այլ միջոցառումներով փոխարինման, եթե դրանց իրականացումը չի համապատասխանում ակնկալիքներին,

5) Արդյոք քաղաքականությունը կարիք ունի փոփոխության պետական կամ տարածքային քաղաքականության փոփոխություններն արտացոլելու նպատակով,

6) Ինչ գործողություններ են անհրաժեշտ քաղաքականության փոփոխության անհրաժեշտության դեպքում:

4. Ռազմավարությունը մշակելիս փորձագետների թիմը հիմնվել է Ջերմուկի վերաբերյալ առկա սահմանափակ տեղեկությունների վրա: Տեղեկություններից շատերը ներկայացված են Գույքի գրանցման ցուցակներում: Այնուամենայնիվ, վերլուծելով առկա տվյալները, պարզ դարձավ, որ դրանց մեծամասնությունը հին կամ մոտավոր տվյալներ էին: Այս տիպի տվյալները կարող են համարվել համատեքստային և ներառվել մոնիթորինգի ու գնահատման համակարգում: Հնարավոր է, որ տվյալներն ուղղակիորեն չառնչվեն նպատակներին ու խնդիրներին, սակայն հարկավոր են ռազմավարության իրականացման վրա ազդող փոփոխությունները հասկանալու համար.

1) Ժողովրդագրական կառուցվածք՝ բնակչության թիվը, տնային տնտեսությունների տեսակները, սոցիալական խմբերը,

2) Սոցիալ-մշակութային հարցեր՝ քրեական հանցագործությունների մակարդակը, գործազրկության ու աղքատության մակարդակը,

3) Տնտեսություն՝ տնտեսական գործունեության մակարդակը, տնային տնտեսությունների եկամուտի չափը, տների գնային համակարգը, արտադրողականության և զբաղվածության մակարդակը,

4) Շրջակա միջավայր՝ հիմնական բնական հարստությունները,

5) Բնակֆոնդ և կառուցապատված տարածք՝ բնակֆոնդի պայմանները և որակը, կառուցապատված տարածքի գույքը,

6) Տրանսպորտ և միջտարածքային կապ՝ տրանսպորտի հասանելիություն, փոխադրամիջոցների օգտագործում և ճանապարհային պայմաններ:

5. Առանձին միջոցառումների ցուցիչները ներկայացված են միջոցառումների ծրագրում:

ՄԱՍ 2. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԲԱԺԻՆ 1. ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Գլուխ 1. Զբոսաշրջությանն ուղղակիորեն առնչվող խնդիրներ

- 1) Արդիակացնել ու բարելավել առողջարանային, հյուրանոցային, հյուրատների և այլ հարմարությունների ու ծառայությունների որակն ու բազմազանությունը, դրանք ուղղել այսօրվա ներքին և ներգնա սպառողի պահանջների բավարարմանը (այդ թվում նաև համապատասխանեցում միջազգային չափանիշներին)
- 1) Քաղաքի շինությունների զգալի մասի արտաքին տեսքի բարելավումը առաջնահերթ խնդիր է: Շինարարությունը (ներառյալ շինանյութի ընտրությունը) պետք է իրականացվի քաղաքի ճարտարապետական ոճին, պատմամշակութային ժառանգությանը համապատասխան՝ շինարարական նորմերի պահպանմամբ: Մասնավորապես պետք է խրախուսվի բազալտի օգտագործումը՝ որպես տեղական քար: :
- 2) Գյուրանոցներն ու առողջարանները պետք է հաճախորդներին հաղորդեն ավելի հյուրանոցային, քան բժշկական հաստատության տրամադրություն, եթե դրանք միտված են գրավելու զբոսաշրջիկներին: Սալիկապատ հատակներին զգված գորգերը, պատերից կախված նկարները, լամպերով լուսավորված սեղանների շուրջ առավել հարմարավետ նստելատեղերը, հասարակական վայրերում և հյուրասենյակներում սենյակային բույսերի առկայությունը կնպաստեն հաստատությանն առավել ջերմ մթնոլորտ հաղորդելուն: Այս բոլոր հավելումները, բնականաբար, պետք է լինեն բարձրաճաշակ և բարձրորակ: Թանկարժեք հյուրանոցներում և առողջարաններում պետք է բարելավվեն հյուրանոցային համարները՝ հարմարավետ մահճակալներ, որոնք չեն ճկվում միջնամասում, փափուկ ծածկոցներ և փափուկ ու մաքուր սավաններ, տարբեր չափի ու ձևի բարձրի հավաքածուներ, փափուկ սրբիչներ, լողասենյակի բացառիկ ու գրավիչ պարագաներ էժանագին չինական օճառների ու շամպունների փոխարեն, զուգարանի փափուկ թուղթ, լողասենյակի խալաթների և հողաթափերի տրամադրում և այլն:
- 3) Հարմարությունների ու ծառայությունների շրջանակը կարելի է էլ ավելի ընդլայնել, ներմուծելով առօրյա օգտագործման պարագաների և հուշանվերների փոքր խամուբներ, բիզնես կենտրոններ, սենյակային ծառայությունների մատուցում, ճանապարհորդային գործակալի ծառայություններ, ողջույնի փաթեթների առկայություն սենյակներում, որոնք կներկայացնեն հյուրանոցում տրամադրվող ծառայությունները, վացքատների և չոր մաքրման ծառայությունները, ինչպես նաև չիրկիզվող պահարանների առկայությունը: Ի լրումն, հյուրանոցների ներսում ենթակառուցվածքները հաճախ չեն արտացոլում տեխնոլոգիաների վերջին նորարարությունները: Օրինակ, առողջարաններից և ոչ մեկը չի առաջարկում համարներում մալուխային կամ անլար ինտերնետ կապի ծառայություն, և միայն մի քանիսն են առաջարկում ինտերնետ կապ հյուրանոցի որևէ մի կետում: Առաջարկվող հեռուստաալիքները հիմնականում հայալեզու կամ ռուսալեզու են:

առողջարանների մեծամասնությունը չի տրամադրում այլընտրանքային տարբերակներ անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և այլ լեզուներով:

- 4) Հաճախորդների սպասարկման ծառայությունը նույնպես մեծապես արտացոլում է Խորհրդային ժամանակների մոտեցումները: Անձնակազմը հաճախ կարող է անուշադիր լինել հաճախորդների կարիքներին և հազվադեպ է դրսևորում սիրալիր ու հոգատար վերաբերմունք, ինչը մեծ պահանջարկ ունի օտարերկրացի այցելուների շրջանում: Անձնակազմի սովորական պարտականություններն իրականացվում են այնպես, կարծես նրանք ստիպված են կամ անհարմար են զգում դա անելիս: Անձնակազմը հազվադեպ է դրսևորում իրենց աշխատանքից բավականության կամ գոհունակության նշաններ: Անձնակազմերի ոչ բոլոր անդամներն են կրում համազգեստ կամ անվանաքարտ:
- 5) Այցելուների անվտանգության ու ապահովության համար հյուրանոցային հաստատությունները պետք է ունենան հակահրդեհային ազդակներ, ջրցան համակարգեր, ծխի դետեկտորներ և տեղեկատվություն տարիանման ճանապարհների վերաբերյալ:
- 6) Առողջ և ակտիվ կենսակերպի գաղափարախոսության համաձայն, հյուրանոցները, առողջարանները և այլ նմանատիպ հաստատությունները պետք է լրջորեն մոտենան այնպիսի հասարակական վայրերի, ռեստորանների և սենյակների առկայության հարցին, որտեղ ծխելն արգելված կլինի: Ցանկալի է, որ հատուկ տարածքները նախատեսված լինեն ոչ թե չծխողների, այլ ծխողների համար:
- 7) Կառավարման ձևերը ևս չեն արտացոլում հյուրանոցային կառավարման լավագույն փորձը: Պատվերների ընդունման համակարգը կարելի է արդիականացնել տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով՝ պատվերների իրականացման համակարգի և հյուրընկալության կառավարման ձևերի ներմուծմամբ: Սա հնարավոր կդարձնի անհրաժեշտության դեպքում գնային տարբերակված առաջարկների համակարգը. օրինակ, առավել ցածր գներ ոչ թե՛ սեզոններին, զեղչերի համակարգ երկարատև կեցության պարագայում և այլն:
- 8) Կարելի է բարելավել հյուրերին առաջարկվող սննդի տեսականին ու որակը: Առողջարաններից շատերը առաջարկում են միայն սահմանված կերակրացանկ և սահմանված կոնկրետ ժամեր սննդի ընդունման համար: Այս բնագավառում բազմապիսի նորարարության հնարավորություն կա: Դրանք ներառում են կերակրացանկ առողջ սնունդ օգտագործողների համար (սա հատկապես կարևոր է Ջերմուկի դեպքում, որը համդիսամում է առողջ ապրելակերպի կենտրոն), ինչպես նաև խառը կերակրացանկ՝ հայկական ավանդական ճաշատեսակների ու առողջ սննդի համադրումներով: Ընտրանին ու ճկունությունը չափազանց կարևոր են օտարերկրացի հյուրերի համար: Նրանք նախընտրում են ճաշել, երբ կցանկանան, և ընտրություն կատարել այնպիսի կերակրացանկից, որն առաջարկում է տարբեր սննդակարգեր երեխաների, ալերգիկ հյուրերի և ընդհանուր նախասիրությունների տեր մարդկանց համար (անհրաժեշտ է հաշվի

առնել նաև այն հյուրերին, որոնք սննդի ընտրման հարցում առաջնորդվում են կրոնական համոզմունքներով):

9) Վերը նշված հարցերին բավարար լուծում տալու համար տարբերակներից մեկը եվրոպական առողջարանների ասոցիացիայի որակային սխեմայի հիման վրա առողջարանների աուդիտի կազմակերպումն է, ինչը նրանց կխթանի համապատասխանելու և պահպանելու հարմարությունների ու ծառայությունների բարձր չափանիշներ: Այդ սխեմայի առավելություններից են օտարերկրյա գործակալների գնահատականը, գովազդը Ասոցիացիայի միջոցով, առողջարանների հաճախորդների շրջանում միջազգային որակի ճանաչումը, բուժումների որակի գնահատումը, արհեստավարժության գնահատումը, պարբերական մոնիթորինգը և մրցակցության վերլուծությունը:

10) Առավել մանրամասն նշված սխեման վերլուծում է հետևյալը.

Կառավարման համակարգը և համապատասխանությունը

ա) Առողջարանային գործունեության ընդհանուր պահանջներ

- Բուժական միջոցառումների և կառուցվածքի որակ
- Բուժման պլան
- Կանխարգելիչ միջոցառումներ
- Ամբողջական ակտիվություն, առողջարանային բժշկի կողմից տրված գրություն
- Տեղական բնական բուժիչ միջոցների հատկությունների ուսումնասիրություն (օրինակ, բուժիչ ջրեր, պելոիդներ (բուժիչ ցեխեր), կլիմա)
- Բալնեոլոգիական ուսումնասիրություն և հաշվետվություն

բ) Ընդհանուր համապատասխանություն բնական բուժիչ ռեսուրսների և շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ գործող օրենսդրության պահանջներին

- Բնական բուժիչ միջոցների (բուժիչ ջրեր, պելոիդներ և այլն) օգտագործման թույլտվություն
- Խմելու ջրի որակ
- Կոյուղու և աղբի մաքրում

գ) Բուժական համապատասխան ենթակառուցվածքներ և սպասարկման կազմակերպում

- Բժիշկների և այլ բուժ. աշխատողների որակավորում

- Բժիշկների կողմից ապահովվող առողջարանային և ընդհանուր առողջապահական չափանիշներ
- Որակի և անվտանգության կառավարման պատասխանատու/ներ

դ) Որակի և անվտանգության ընդհանուր կառավարում

- Բուժական պրոցեդուրաներ
- Համապատասխան բուժական միջոցառումների որակի հավաստում
- Տեղեկատվության պաշտպանություն/ գաղտնիություն
- Հիգիենիկ կակոնակարգեր, պաթոգենների կանխարգելման միջոցառումներ
- Արտակարգ իրավիճակներից պաշտպանության կանոնակարգեր
- Անվտանգության ապահովման համակարգեր (հակահրդեհային պաշտպանություն, վարակների կանխարգելում, դժբախտ պատահարների կանխարգելում և այլն)

ե) Որակի և անվտանգության կառավարում (առողջարաններին բնորոշ ոլորտներ)

- Բուժիչ ջրերի և պելոիդների ուսումնասիրություն և դասակարգում

- Բուժման մեթոդների ուսումնասիրության վերաբերյալ փաստաթղթեր
- Բուժիչ նյութերի և հումքի արտահանման համար անհրաժեշտ որակի հավաստում
- Բժշկական գործունեության հետ կապված ռիսկերի վերլուծություն
- Բժշկական նյութերի և սարքավորումների հետ կապված մաքրման և վարակագրծման միջոցառումներ

զ) Որակի վերլուծական վերահսկողություն

- Տվյալների կառավարում
- Լոգարանների, ինհալացիանո սարքերի և ցեխային միջոցառումների պարբերական վերլուծություն
- Տեղանքի հիգիենա

Բուժիչ նյութերի մատակարարում և տրամադրում

ա) Բուժիչ ջրերի աղբյուրների և պելոիդների պահպանություն

- Բնության և բնական ռեսուրսների պահպանություն
- Աղբյուրներ

բ) Բուժիչ նյութերի (բուժիչ ջրեր, պելոիդներ) արտադրություն, մշակում և պահեստավորում

- Պահեստավորում, մշակում և փոխադրում
- Հիգիենա
- Մաքրում և վերամշակում
- Լոգանքաջրերի մաքրում
- Շրջակա միջավայրի պահպանություն, անվտանգության կառավարում

Թերապիա, բուժում, լողավազաններ, կազդուրում

ա) Բժշկական հատված

- Հիվանդների կառավարում, հիվանդության պատմության/փաստաթղթերի վարում
- Բժշկական սենյակներ
- Դեղամիջոցների կառավարում
- Շտապ օգնության կառավարում

բ) Բուժում և հանգստյան գոտիներ

- Հիգիենայի կառավարում
- Տարածքի և տեխնիկական ենթակառուցվածքների

ընդհանուր համապատասխանություն գ) Լոգանքների և շոգեբաղնիքների (սաունա) հարմարություններ

- Անվտանգության կառավարում
- Լոգանքների կազմակերպման չափանիշներ
- Լոգասենյակների և դրանց շրջակայքի մաքրում և վարակագրծում
- Անվտանգություն և հիգիենա շոգեբաղնիքներում, համամաներում և գուրշիով գործող բաղնիքներում, ինչպես նաև այլ կազդուրիչ վայրերում և հանդերձարաններում

Հյուրանոցային հարմարություններ

ա) հյուրանոցային ենթակառուցվածքներ

- Սենյակների, սանիտարական հարմարությունների և հասարակական վայրերի չափանիշներ, հիգիենա, այցելուների անվտանգություն, առողջարաններին բնորոշ այլ սպասկետներ
- Անվտանգության և հիգիենայի կանոնակարգեր

Սնունդ

բ) Խոհանոց

- Խոհանոցի հիգիենա ընդունված չափանիշների համաձայն
- Կերակրատեսակների ընտրանի
- Սննդի կետեր

11) Այլ երկրների առողջարանային ասոցիացիաները նույնպես ունեն ուղեցույցներ և որակի գնահատման սխեմաներ, որոնք կարող են օգտակար լինել հյուրանոցային ու առողջարանային ենթակառուցվածքների և ծառայությունների համապատասխան սխեմաների մշակման գործում: Դրանց հաջող օրինակ կարող է ծառայել Միացյալ Թագավորության Առողջարանային ասոցիացիան: Վերջինիս կողմից գործածվող սխեման, ի տարբերություն եվրոպական սխեմայի, առավել կենտրոնանում է հաճախորդներին մատուցվող ծառայությունների վրա՝ տեղեկատվություն և դրա տրամադրում, պատվերների ընդունման և ժամանումների կազմակերպում, առողջարանային այլ հարմարություններ և հյուրընկալություն:

12) Առողջարանների և դրանց կողմից մատուցվող բուժական ծառայությունների ու հարմարությունների հետ կապված ցանկացած նորարարություն պետք է համապատասխանի ՀՀ կառավարության կողմից հաստատված Ջերմուկի՝ որպես առողջարանային և հանգստի կենտրոնի զարգացման հայեցակարգին:

13) Առաջարկվող միջոցառումներն են՝

- ա. Վերանորոգել և կահավորել հյուրանոցային տնտեսության օբյեկտներն այնպես, որ դրանք արտացոլեն հյուրանոցային միջազգային շուկայում առկա լավագույն փորձը, անհրաժեշտության դեպքում փոփոխել առողջարանների ճարտարապետական տեսքը և առողջարանային հարմարությունները և բարելավել շինությունների արտաքին ու ներքին տեսքը: Ապահովել հաստատությունների մատչելիությունը հաշմանդամ հյուրերի համար: Բարեկարգել հաստատությունների շրջակա տարածքները,
- բ. արդիականացնել հաճախորդներին մատուցվող ընդհանուր ծառայություններն այնպես, որ դրանք համապատասխանեն վճարունակ ներգնա զբոսաշրջիկների պահանջներին՝ անլար ինտերնետ կապի առկայություն հյուրանոցային համարներում, բիզնես կենտրոններ, միջազգային հեռուստատիվների ընտրանու առկայություն,
- գ. ներդնել հյուրանոցների կառավարման արդիական ձևեր՝ պատվերների և ամրագրման ընդունում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման միջոցով և հյուրընկալության կառավարման ձևերի կիրառում, որոնք հնարավոր կդարձնեն կիրառել գնային տարբերակված մոտեցումներ՝ կախված սեզոնից, պատվիրելու պահից մինչև այցելություն ընկած ժամանակահատվածից, կեցության տևողությունից և այլն,
- դ. բարելավել հյուրերին մատուցվող սննդի տեսականին և որակը. առաջարկել բազմազան առողջ սննդակարգեր (շաքար չպարունակող, խիստ բուսական, բուսական և այլն), առաջարկել խառը կերակրացանկեր՝ հայկական ավանդական ճաշատեսակների ու առողջ սննդի համադրումներով,
- ե. հավատարմագրել առողջարանները համաձայն եվրոպական առողջարանների ասոցիացիայի սխեմայի՝ ենթակառուցվածքների և ծառայությունների բարձր չափանիշների ներդրման և պահպանման նպատակով:

2. Բարելավել ու արդիականացնել առողջարաններում բուժական ծառայությունները, հավաստել դրանք բուժական հատկություններն ու ընդլայնել ծառայությունների շրջանակները, դրանք ուղղել այսօրվա ներքին և ներգնա սպառողի պահանջների բավարարմանը

1) Առողջարանային ծառայությունները հանդիսանում են Ջերմուկի սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարական հիմք: Հիմնվելով այն փաստի վրա,

որ Ջերմուկի հանքային ջրերն ունեն բուժիչ առողջարարական արժեքավոր հատկություններ, ինչպես նաև այն հանգամանքի վրա, որ Ջերմուկը Հայաստանի համար առաջնային առողջարանային կենտրոն է, վերջինս իր կողմից մատուցվող ծառայությունների, ենթակառուցվածքների, օժանդակ ծառայությունների և ժամանցային հնարավորությունների մշակման գործում պետք է հաշվի առնի համաշխարհային առողջարանային զբոսաշրջության լավագույն փորձը:

2) Ներկայումս առողջարանային ծառայությունները զարգանում են հատուկ հիվանդությունների և խանգարումների բուժման ուղղությամբ: Գոյություն ունի նման ծառայությունների լայն շրջանակ և այդ բուժումների կազմակերպման գործում մասնագիտացված անձնակազմ: Ուազմավարության մշակման ընթացքում նախաձեռնած ուժեղ և թույլ կողմերի ուսումնասիրության արդյունքում Ջերմուկում զրանցվել են բուժական և առողջարարական հետևյալ պրոցեդուրաները՝

- ա. լուգանքներ հանքային ջրերով
- բ. տորֆային/պարաֆինային բուժումներ
- գ. քառախցիկ գալվանական լուգանքներ
- դ. ստորջրյա մերսում
- ե. զինեկոլոգիական ներլվացումներ
- զ. հիդրոկոլոնոթերապիա
- է. ստամոքսային/դուոդենալ լվացումներ
- ը. ինհալացիաներ հանքային ջրերով և բույսերով
- թ. էլեկտրական իմպուլսային մերսումներ
- ժ. բուժում ուլտրամառուշակագույն ճառագայթներով
- ժա. բուսական դիմաքսուքներ
- ժբ. դասական մերսում
- ժգ. տորֆային էլեկտրաթերապիա
- ժդ. էլեկտրաֆիզիոթերապիա

3) Վերը նշված միջոցառումների արդյունքների վերաբերյալ ուսումնասիրությունները իրականացվել է հորհրդային տարիներին, և այդ իսկ պատճառով դրանք չեն կարող համարվել արդիական: Ջերմուկում ներկայումս իրականացվող բուժումների բրենդինգն ու համբավը ամրապնդելու համար անհրաժեշտ է, որ տեղի հանքային ջրերի վերաբերյալ նախկինում կատարված ուսումնասիրությունների արդյունքները վերանայվեն արտերկրյա անկախ բժշկական հանձնաժողովի կողմից, որը կտրամադրի Ջերմուկի հանքային ջրերի բուժիչ հատկությունների առավելությունների գիտական հիմնավորում: Սոր ուսումնասիրություն կպահանջվի այն դեպքերում, երբ կասկած կառաջանա, որ բուժումները կարող են վնաս հասցնել, կամ, եթե նախկինում իրականացված ուսումնասիրությունների որակը կասկածելի թվա: Գիտական արդիականացված վկայության բացակայությունը թույլ չի տալիս Ջերմուկում իրականացվող բուժումների արդյունավետ գովազդումը հնարավոր զբոսաշրջիկների նոր շուկայում. օտարերկրացի հաճախորդները զգուշանում են այցելել իրենց համար անժանոթ և անկախ փորձագետների կողմից չգնահատված առողջավայրեր և, առավել ևս, այնտեղ բուժում ստանալ: Ի լրումն, Ջերմուկի առողջարաններից շատերը հին են և կարիք ունեն վերանորոգման՝ բաց լարեր, կամ էլեկտրական հոսանքով աշխատող սարքավորումների անբավարար վիճակ, տեսանելի ժանգոտվածություն և ստուգվածքներ և այլն: Մարքավորումները պետք է ստուգաչափվեն և ստուգվեն յուրաքանչյուր տարի (հատկապես, եթե դրանք

աշխատում են էլեկտրական հոսանքով) և անհրաժեշտության դեպքում արդիականացվեն:

4) Ավելին, Ջերմուկի զբոսաշրջության հատվածի զարգացման և նոր այցելուներ գրավելու համար պետք է ընդլայնել և առավել ճկուն դարձնել առողջարանային ծառայությունները, որպեսզի դրանք ի վիճակի լինեն բավարարել հաճախորդների բազմապիսի խմբերի կարիքները: Առաջին հերթին պետք է կենտրոնանալ «կազդուրիչ» զբոսաշրջության շուկայի վրա, քանի որ Ջերմուկն արդեն իսկ տրամադրում է բուժական զբոսաշրջությանը բնորոշ ծառայություններ:

5) Կարող է դիտարկվել առողջարանային բուժման տեսակների լայն շրջանակ, և այս ոլորտի մասնագետներն էլ առավել կայուն դիրք կունենան իրենց առաջարկներով: Նման ծառայությունների օրինակ կարող են ծառայել դիմափորձարարումը, մատնահարդարումը, ռեֆլեքսոլոգիայի, շոգեբաղնիքները, սաունաները, ջակուզիները, արոմաթերապիայի մեթոդները, մարմնի խնամքը, հիդրոթերապիան, պարաֆինային էպիլյացիան, մարմնի յուղային խնամքը, մաշկի մաքրումը և դերմաբրազիան, քարային բուժումները և այլն: Շատ առողջարաններ առաջարկում են իրենց կողմից մշակված հատուկ բուժումներ, և Ջերմուկը կարող է հետևել դրանց օրինակին:

6) Ի հավելում հատուկ առողջարանային բուժումների, կազդուրիչ ծառայությունները կարող են նաև կենտրոնանալ առողջ սննդակարգի, սեռական առողջության, սթրեսի կառավարման, ավելորդ քաշի դեմ պայքարի, մարզվածության, հոգեկան առողջության, առողջության վերաբերյալ դասընթացների, յոգայի և մեդիտացիայի տարբեր ձևերի վրա: Գործունեության տեսակների ընտրությունը պետք է հիմնվի հնարավոր շուկաների և շուկայի պահանջարկի հետագա ուսումնասիրությունների վրա: Օրինակ, ձմեռային սպորտի սիրահար զբոսաշրջիկները կարող են լինել նաև առողջարանների այցելուներ, սակայն հնարավոր է, որ նրանք ունենան այլ կարիքներ և նախասիրություններ: Եթե Ջերմուկը մտադիր է առաջարկել մի շարք ակտիվ բացօթյա միջոցառումներ, ապա դրանք պետք է նաև հաշվի առնեն առողջարարական բուժումներ կամ խնամք տրամադրելու հնարավորություններ: Քանի որ հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ Ջերմուկի այցելուների մեծամասնությունը այնտեղ չի գիշերում, հնարավոր է, որ Ջերմուկն ունենա մեկօրյա կամ կեսօրյա բուժումներ պահանջող ծավալուն շուկա:

7) Ջերմուկում առկա առողջարանները պետք է փորձեն նաև տարբերվել և առանձնանալ մյուսներից՝ զբոսաշրջիկներին տրամադրելով զբոսաշրջային փորձառությունների և ծառայությունների տեսակների ընտրություն:

8) Առողջարանների և դրանց կողմից մատուցվող բուժական ծառայությունների ու հարմարությունների հետ կապված ցանկացած նորարարություն պետք է համապատասխանի Ջերմուկի՝ որպես առողջարանային և հանգստի կենտրոնի զարգացման հայեցակարգին:

9) Առաջարկվող միջոցառումներն են՝

ա. քննության առնել գոյություն ունեցող ուսումնասիրություններն այնպես, որ դրանք տրամադրեն գիտական վկայություններ հանքային ջրերով բուժումների արդյունքների վերաբերյալ (ինհալացիաներ, վացումներ, լոգանքներ և այլն), մասնավորապես համեմատելով այն ջրերի ուսումնասիրությունների հետ, որոնք ունեն Ջերմուկի հանքային ջրերի կամ նման բաղադրություն: Բացի այդ, նախաձեռնել արտաքին անկախ բժշկական փորձախնամքի հետազոտություն, որը կտրամադրի Ջերմուկի հանքային ջրերի բուժիչ հատկությունների վերաբերյալ գիտական վկայություն,

բ. վերակազմավորել և բազմազանել առողջարանային ծառայություններն ու բուժումները, ներառյալ օժանդակ առողջապահական ծառայությունները, հաշվի առնելով կազդուրիչ զբոսաշրջության հատվածի նկատմամբ աճող հետաքրքրությունը: Ուշադրությունը կենտրոնացնել հատուկ բուժումների վրա և ձևավորել բուժումների փաթեթներ՝ հաշվի առնելով շուկայի պահանջարկը ձմեռային սպորտի սիրահար զբոսաշրջիկների, ինչպես և առողջարանների հաճախորդների, տարբեր տարիքային խմբերի, սեռային խմբերի և այլոց համար: Ապահովել առողջարանների տարբերակվածությունը տարածաշրջանում և քաղաքում գոյություն ունեցող այլ առողջարաններից: Ուշադրությունը կենտրոնացնել մեկօրյա, ինչպես նաև Ջերմուկում գիշերող այցելուներին տրամադրվող առողջարանային ծառայությունների մատուցման վրա,

գ. արդիականացնել և առավել ժամանակակից դարձնել առողջարանային բուժումների համար օգտագործվող սարքավորումներն ու հարմարությունները՝ հիմնվելով եվրոպայի լավագույն առողջարանների օրինակի վրա:

3. Ջարգացնել ու ընդլայնել դահուկային սպորտի և այլ ձմեռային սպորտաձևերի կենտրոններն ու ծառայությունները Ջերմուկում

1) Ջերմուկում վերջերս կառուցված դահուկային սահուղին միջոց է Ջերմուկը ամբողջ տարին գործող հանգստյան կենտրոն դարձնելու համար: Այնուամենայնիվ, այն իրապես համաշխարհային մասշտաբի կենտրոն դարձնելու ձգտումը իրականացնելու համար դեռևս պահանջվում են մի շարք գործողություններ:

2) Դահուկային սպորտի ներկա հնարավորությունները դեռևս սահմանափակվում են մեկ լանջի վրա կառուցված սահուղիով (մյուսը դեռևս կառուցման ընթացքում է, որը շուտով ավարտին կհասցվի): Լրացուցիչ սահուղիներ անհրաժեշտ կլինեն՝ Ջերմուկին անհրաժեշտ է վերահսկել զբոսաշրջային թեժ և ոչ պասիվ սեզոններին այցելուների թիվը՝ որոշելու համար, թե արդյոք լրացուցիչ ներդրումը կունենա դրական արդյունք:

3) Ներկայումս սահուղիները հարմար են միայն այն անհատների համար, որոնք արդեն իսկ կայացած դահուկորդներ են: Գոյություն չունի ոչ միայն մասնագետ մարզիչների կենտրոն, այլ նաև բացակայում է երկրորդ դահուկավազային ճանապարհը (որը դեռևս շինարարության փուլում է), որը տեսականորեն նախատեսված է սկսնակների համար, բայց բավականին զառիթափ է և հարմար չի շահագործել սկսնակների համար: Անհրաժեշտ միջոցառում է մասնագիտացված դահուկասպորտի դպրոցի հիմնումը՝ հազեցած ժամանակակից սարքավորումներով (արդեն իսկ ձեռքբերված սարքավորումների հետ մեկտեղ, ինչպիսին են դահուկները և երկարաճիտ կոշիկները), և արհեստավարժ

մարզիչների առկայությունը, որոնք կսովորեցնեն և երիտասարդ, և մեծահասակ սկսնակ դահուկորդներին: Մարզիչների համար օգտակար կլինեն լեզվի դասընթացները, որպեսզի նրանք կարողանան պարապել տարբեր ազգության դահուկորդների հետ:

4) Մեկ այլ խոչընդոտ կարող է լինել փոխադրումը դեպի սարալանջ: Չնայած մի քանի առողջարաններից ուղի ճանապարհ է տանում դեպի սարալանջ, այն գտնվում է մի քանի կիլոմետր հեռավորության վրա: Նրանք, ովքեր չեն ցանկանում քայլել, ստիպված են մեքենայով հասնել լանջ: Քեթ սեզոնին ավտոմեքենաների կանգառը կարող է սահմանափակ լինել: Անհրաժեշտ միջոցառում է հյուրանոցներից և առողջարաններից դեպի քաղաքի կենտրոն և ճոպանուղի տանող հասարակական տրանսպորտի շահագործումը: Երեսուն րոպե մեկ շարժվող երթուղային տաքսին, թերևս, բավարար չափով կլուծի այս խնդիրը:

5) Ինչպես նշված է առողջապահական ծառայություններին վերաբերող խնդրի սահմանման մեջ, անհրաժեշտ է ապահովել զբոսաշրջիկների անվտանգությունը մասնագիտացված առաջին բուժօգնություն տրամադրողների (ցանկալի է բազմապրոֆիլ մասնագետների) կողմից, և առաջին բուժօգնության կետերի ու հարմարությունների ստեղծման միջոցով:

6) Բացի այդ, այլ նորանուծությունները կարող են մեծացնել դահուկավազքի համար նախատեսված սարալանջերի գրավչությունը: Օրինակ՝ դահուկային սահուղիներից օգտվելու տոմսերի տարբերակում մեկօրյա և երկարատև հանգստի ժամանած այցելուների համար, ձմեռային այլ սպորտաձևերի ներմուծում, ինչպիսին են, օրինակ, դահուկավազքը, սահնակային սպորտը և ձմեռային զբոսաշրջության թեմաներով հատուկ միջոցառումների և մրցումների կազմակերպումը: Նման մրցումները կարող են շատ լուրջ դեր ունենալ ժամանցի և միջոցառումների առումով: Անհրաժեշտ է իրականացնել հետազա ուսումնասիրություն՝ պարզելու շուկայական պահանջարկի ծավալները:

7) Ձմեռային թեթ սեզոնին դահուկավազքի համար նախատեսված տարածքը կունենա սննդի կետեր: Պետք է ապահովել դրանց կողմից պատշաճ սպասարկումը ներգնա և ներքին զբոսաշրջիկներին, տրամադրելով օտար լեզուներով կազմված կերակրացանկեր և սննդի ու ըմպելիքների տեսականի: Կերակրացանկերը, բնականաբար, պետք է հիմնվեն շուկայական պահանջարկի վրա, բայց միևնույն ժամանակ ապահովեն առողջ ապրելակերպի գաղափարախոսությանը համահունչ տարբերակներ:

8) Առաջարկվող միջոցառումներն են՝

ա. վերահսկել դահուկասպորտի համար նախատեսված հարմարությունների գործունեությունը ձմռանը և զբոսաշրջային պասիվ սեզոնին (այցելուների թվի առումով), ինչը հիմք կծառայի ճոպանուղու ու ճանապարհների հետազա ընդլայնման վերաբերյալ որոշումների կայացման համար,

բ. հիմնել դահուկասպորտի մասնագիտացված դպրոցներ՝ հազեցած ժամանակակից սարքավորումներով, ընդունել վերապատրաստված և որակավորում ունեցող, տարբեր լեզուների տիրապետող մարզիչներ, որոնք կկարողանան պարապել թե երիտասարդ, և թե մեծահասակ սկսնակ դահուկորդների հետ, գ. ապահովել հյուրանոցների և առողջարանների տրանսպորտային կապը քաղաքի կենտրոնի և ճոպանուղու հետ, դ. մշակել և իրականացնել սահուղիներից օգտվելու տոմսերի համակարգ մեկօրյա և երկարատև հանգստի ժամանած այցելուների համար, ե. ուսումնասիրել և գնահատել ձմեռային այլ սպորտաձևերի ներմուծման հնարավորությունները. (դահուկավազք, սահնակային սպորտ, բացօթյա չմշակասպորտ և այլն), զ. կազմակերպել և իրականացնել ձմեռային զբոսաշրջության թեմաներով հատուկ միջոցառումներ և մրցումներ. դահուկասպորտ, սահնակային սպորտ և այլն, դրանք համարելով մշակութային տարրերի հետ:

4. Զարգացնել ու խորացնել Ջերմուկի՝ որպես շախմատի միջազգային մրցումների կենտրոնի համբավը համապատասխան պայմանների ստեղծման ու արդյունավետ գովազդի միջոցով

1) Շախմատի հայկական ֆեդերացիայի կողմից Ջերմուկը համարվում է Հայաստանում շախմատի կենտրոն: Իրապես, մի շարք ազգային և միջազգային մրցումներ անց են կացվել Ջերմուկում: Համաձայն Ֆեդերացիայի՝ քաղաքի օգտագործումն ընդլայնելու համար խոչընդոտ են հանդիսանում գոյություն ունեցող հարմարությունների սահմանափակ հնարավորությունները (դպրոցը կարող է սպասարկել ընդամենը 120 հոգու), քաղաքի հասանելիությունը՝ պայմանավորված ոչ բարվոք վիճակում գտնվող ենթակառուցվածքներով և Երևանից հեռավորությամբ, ինչպես նաև մրցումների համապատասխան գովազդման և մրցանակային ֆոնդի համար պահանջվող ֆինանսավորման աղբյուրների պակասը:

2) Հարմարությունների հնարավորությունները կարելի է ընդլայնել՝ ստեղծելով սպորտային մեծ համալիր (տես խնդիր 5): Ֆինանսավորումը հնարավոր կլինի ավելացնել քաղաքապետարանի կամ մասնակիցներին հյուրընկալող հյուրանոցների և առողջարանների աջակցությամբ: Հետագայում Շախմատի հայկական ֆեդերացիան շախմատի ազգային մրցումների կազմակերպման գործում պետք է աջակցություն ստանա նաև համայնքից և տեղական իշխանություններից:

3) Ջերմուկի՝ որպես շախմատի կենտրոնի հեղինակության բարձրացման համար անհրաժեշտ է նաև կազմակերպել շախմատի վարպետների կողմից կանոնավոր անցկացվող դասեր սեմինարներ կամ այլ համապատասխան միջոցառումներ:

4) Առաջարկվող միջոցառումներն են՝

ա. հաշվի առնել Հայաստանի շախմատի ֆեդերացիայի կարիքները Ջերմուկում նոր շինություններ նախագծելու և կառուցելու ընթացքում՝ շախմատային

մեծածավալ մրցումների իրականացումը Ջերմուկում հնարավոր դարձնելու նպատակով,

բ. աջակցել Հայաստանի շախմատի ֆեդերացիային Ջերմուկը (և Ջերմուկի համապատասխան հարմարություններն ու ծառայությունները) Շախմատի միջազգային ֆեդերացիայի շրջանակներում և միջոցով գովազդելու գործում և մրցանակների համար ֆինանսավորում տրամադրել՝ խրախուսելու համար Հայաստանում անցկացվող մրցումներին մասնակցության հետաքրքրվածությունը:

5. Ձաղագսները Ջերմուկի մշակութային ու համբավը՝ որպես համահայկական ու միջազգային երիտասարդական ճամբարների հավաքատեղի՝ համապատասխան ենթակառուցվածքների ստեղծման ու մարդկային ռեսուրսների զարգացման միջոցով

1) Ջերմուկը հաջողությամբ հյուրընկալել է «Բազե» համահայկական երիտասարդական երկու ճամբարին: Դրանցից յուրաքանչյուրը տևել է տասը օր և ունեցել է մոտ 600 երիտասարդ մասնակից: Նրանց 25%-ը ժամանել էր սփյուռքից: Ճամբարների մասնակիցները հյուրընկալվել էին «Գլաձոր», «Նարեկ» և «Թուլխ» հյուրանոցներում, որպեսզի երիտասարդները հնարավորություն ունենային տեղակայվելու քաղաքի մի հատվածում: Մասնակցության խիստ կանոնները ապահովված էին, որպեսզի ոչ մի անկարգություն չխանգարի քաղաքում հյուրընկալվող հյուրերի հանգիստը:

2) Ճամբարների կառուցվածքն ու չափածոն, դրանց կազմակերպման գաղափարախոսությունը՝ կառուցված ֆիզիկական, հոգեկան և մշակութային շփման շուրջ, միանգամայն համահունչ է Ջերմուկի ընդհանուր տեսլականի հետ: Այնուամենայնիվ, Համահայկական երիտասարդական ֆեդերացիայի փոխտնօրենի կողմից բարձրացված երկու հարց դեռևս լուծման կարիքն ունեն:

3) Դրանցից առաջինը վերաբերում է Ջերմուկում կեցության հարցերին: Չնայած ներկայումս հյուրանոցային տնտեսության օբյեկտների հնարավորությունները բավարար են (մասնակիցների հյուրընկալման համար ընտրված երեք հյուրանոցներում մահճակալների թիվը բավարար է), այնուամենայնիվ, պահանջվում են նաև բազմապիսի միջոցառումների համար (վիկտորիաներ, մշակութային ներկայացումներ, ժամանց, նորաձևության ցուցադրություններ, բանավեճեր և այլն) նախատեսված համապատասխան տարածքներ: Այս խոչընդոտը հնարավոր է վերացնել՝ կառուցելով ընդարձակ մարզահամալիր, որը կկարողանա տեղավորել տվյալ թվով մասնակիցների:

4) Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել ճամբարների հյուրընկալման կայունությանը: Կեցության արժեքը Ջերմուկում ներկայումս համեմատաբար էժան է, սակայն այն կարող է զգալիորեն աճել, երբ Ջերմուկի զբոսաշրջային ներուժն ու պահանջարկը մեծանան: Եթե ներկայումս ճամբարների մասնակիցներին հյուրընկալող հյուրանոցները վերանորոգվեն և/կամ ընդլայնվեն, դրանք հնարավորություն կունենան առավել վճարունակ հաճախորդներ գրավելու, այդպիսով սահմանափակելով Ֆեդերացիայի հնարավորությունները՝ վճարելու կեցության արժեքը, որը իրականում կազմում է ճամբարների կազմակերպման հետ կապված ծախսերի մեծ մասը:

5) Երկրորդ խնդիրն առնչվում է քաղաքում հնարավոր գործունեության տեսակներին: Ջերմուկն ունի չափազանց գեղեցիկ բնություն երիտասարդական ճամբարի համար, սակայն իրատեսորեն շատ փոքր հնարավորություն այն առավել գրավիչ դարձնելու համար հանգստի այլ գոտիների համեմատությամբ, օրինակ, Ծաղկածորի, որը գտնվում է Երևանից շատ ավելի փոքր հեռավորության վրա և իր առանձնահատկություններով հարմարություններով հանդերձ ունի շատ ավելի լայն հնարավորություններ ֆիզիկական ակտիվ գործունեության համար: Ջերմուկը կլինի առավել նախընտրելի, եթե այն կարողանա երիտասարդների համար առաջարկել բացօթյա ակտիվ ֆիզիկական գործունեության տեսակների առավել լայն ընտրամի:

6) Այն կարող է ներառել ժայռազնացությունը, լեռնային հեծանվազնացությունը, նավազնացությունը, թիավարությունը, ալպինիզմը, ծիավարությունը և արգելքների ուղին: Նման սպորտաձևերը կլրացնեն առողջ և ակտիվ ապրելակերպի շրջանակը և կհետաքրքրեն զբոսաշրջիկներին՝ այդպիսով ապահովելով ամբողջ տարի ֆինանսական կայունության հավանականությունը: Այդ իսկ պատճառով առաջարկվում է, որ Ջերմուկում հիմնվեն մի շարք սպորտային և արկածային ակումբներ (քաղաքի տարածքում և դրա սահմաններից դուրս) որոնք կունենան արհեստավարժ մարզիչներ, սեմինարների և տեսական դասընթացների համար նախատեսված համապատասխան հարմարություններ, ժամանակակից սարքավորումներ, սանիտարական հարմարություններ (զուգարաններ և ցնցուղներ/լոգարաններ) և յուրաքանչյուր սպորտաձևի համար պահանջվող այլ հարմարություններ:

7) Առանձին սպորտաձևերի կազմակերպումը պետք է լինի մասնավոր վճարովի հիմունքներով, որպեսզի դրանցից ստացված եկամուտը ներդրվի ընդլայնման և սարքավորումների արդիականացման համար, իսկ դրամաշնորհները կարող են դիտարկվել դրանք հիմնելու և մարզիչների առաջին խումբը վերապատրաստելու և մասնատիպ այլ ծախսերի համար: Բոլոր հարմարությունները պետք է համապատասխանեն անվտանգության միջազգային չափանիշներին, իսկ մարզիչները պետք է լինեն հավատարմագրված՝ համապատասխան միջազգային մարմինների կողմից, սահմանված չափանիշների համաձայն: Նման սպորտաձևերից առաջինի ընտրությունը պետք է հիմնված լինի համայնքի շահերի/հետաքրքրությունների գնահատման և Հայաստանում սպորտաձևերից յուրաքանչյուրի ընդլայնման աճի միտման վրա:

8) Ֆիզիկական դաստիարակության և սպորտի վերաբերյալ ՀՀ կառավարության քաղաքականությանը համապատասխան բնակչության առողջության բարելավումը, աճախոսների ներդաշնակ զարգացման համար պայմանների ստեղծումը, տարբեր տարիքային և սոցիալական խմբերի շարունակական ֆիզիկական դաստիարակությունը և ֆիզիկական դաստիարակության և սպորտի մատչելիությունը երիտասարդներին ֆիզիկապես պատրաստում են վերջիններին հայրենիքի պաշտպան դառնալու համար, ինչպես նաև պատրաստում են հմուտ մարզիկների՝ ապահովելով ի դեմս նրանց, Հայաստանի Հանրապետության

արդյունավետ մասնակցությունը Օլիմպիական խաղերին, համաշխարհային և եվրոպական մրցումներին:

9) Առաջարկվող միջոցառումներն են՝

ա. ստեղծել հանգստի մատչելի ենթակառուցվածքներ, հարմարություններ և ծառայություններ (տարբեր սպորտային ակումբների ձևով), որոնք կլրացնեն Ջերմուկի ակտիվ ու առողջ կենսակերպի շուրջ կառուցված տեսլականը: Սրանք կներառեն ֆուտբոլի դաշտեր և բազմապրոֆիլ սպորտային կենտրոն (լեռնային հեծանվասպորտ, ժայռագնացություն, ձիավարություն, դելտապլանինգ, քիավարություն և այլն): Անհրաժեշտ է իրականացնել տեղի համայնքի հետաքրքրությունների և սպորտային դասընթացներով հետաքրքրվածության զննահատում: Սպորտային հարմարությունները պետք է մշակվեն այնպես, որ հաշվի առնվեն դրանց հետագա օգտագործման առանձնահատկությունները տեղացի և օտարերկրացի զբոսաշրջիկների կողմից, բ. կահավորել բազմապրոֆիլ սպորտային կենտրոնը (սպորտային ակումբները) ժամանակակից և անվտանգ սարքավորումներով և ընդունել որակավորված մարզիչներ, գ. կառուցել նպատակային սպորտային կենտրոն, որը կներառի գործող մարզադահլիճ (ֆիթնես կենտրոն), լողավազան, բռնցքամարտի, ծանրամարտի և մարտարվեստների դահլիճ: Այստեղ նաև անհրաժեշտ է նկատի ունենալ շախմատի միջազգային մրցումների համար նախատեսված համապատասխան տարածք:

6. Զարգացնել Ջերմուկում զբոսաշրջության արդյունաբերությանը հարող ու օժանդակող արդյունաբերության ոլորտները, ներառյալ ժամանցի վայրեր, ռեստորանները, խանութները և այլն, որպեսզի հնարավորություններ ստեղծվեն զբոսաշրջիկին ժամանցի ավելի լայն ընտրություն տրամադրելու, մեծացնելու զբոսաշրջային ծախսերը և նպաստելու առավել երկարատև այցելությունների մակարդակի աճին:

1) Զնայած առողջարաններն ու դահուկային ճոպանուղին Ջերմուկում ժամանցի առաջնային ձևերն են, անհրաժեշտ է նաև նկատի ունենալ արդյունաբերության այն ոլորտները և հատվածները, որոնք օժանդակում են զբոսաշրջության զարգացմանը: Սա կարևոր է, քանի որ հաճախորդների բավարարվածության մակարդակը բարձրացնելուց բացի, դրանք նաև վերջիններին համար հնարավորություն են ստեղծում գումար ծախսելու, առավել մեծացնելով մեկ օրվա ընթացքում կատարվող զբոսաշրջային ծախսերի չափը՝ ներկայիս ցածր մակարդակի համեմատ:

2) Զնայած այն բանին, որ ներակայումս առողջարաններն առաջարկում են ծառայությունների ընդգրկում փաթեթներ, որոնք ներառում են օրական երեք անգամ սնունդ, ակնկալվում է, որ դա ավելի երկարատև ժամանակահատվածում կփոխվի, քանի որ հաճախորդները կցանկանան սնվել ցանկացած վայրում և ունենալ սննդատեսակների առավել լայն ընտրանի: Ամեն օր միևնույն միջավայրում միևնույն կերակրատեսակները մատուցելը չի համապատասխանում համաշխարհային զբոսաշրջային շուկայի ներկա պահանջներին, բացառությամբ այն դեպքերի, երբ սննդակարգը հատուկ կարգավորման կարիք ունի՝ բժշկական նպատակներից ելնելով: Այնուամենայնիվ, Ջերմուկում զբոսաշրջիկները

ներկայումս շատ փոքր ընտրության հնարավորություն ունեն թե ռեստորանների, և թե կերակրացանկի առումներով: Ռեստորաններում առաջարկվող ուտեստները չեն տարբերվում առողջարաններում մատուցվողներից, թերևս, բացառությամբ խորոված մսի: Անհրաժեշտ է խրախուսել, որ ռեստորաններն ունենան առավել հարմարավետ և զեղազիտական տեսանկյունից գրավիչ ներքին հարդարանք, փողոցներում տեղադրված մանրամասն նշանացույցներ՝ հեշտ կողմնորոշվելու և դրանք գտնելու համար, կերակրացանկի առավել լայն ընտրանի (որոնք մասնավորապես կհամապատասխանեն առողջ սննդի գաղափարին ու արևմտյան զբոսաշրջիկների ճաշակին), օրվա հատուկ ճաշատեսակներ, ինչպես նաև անձնակազմ, որը կտիրապետի օտար լեզուների և ի վիճակի կլինի կերակրացանկի վերաբերյալ առաջարկություններ անել: Բոլոր ռեստորաններում պետք է պարբերաբար իրականացվեն սանիտարական և անվտանգության ստուգումներ՝ ՀՀ համապատասխան օրենսդրության համաձայն: Անհրաժեշտ է ապամոնտաժել այն ռեստորանները, որոնք չեն գործում կամ ենթակա չեն վերանորոգման:

3) Առողջ և ակտիվ ապրելակերպի գաղափարախոսությանը համահունչ ռեստորաններն ու հասարակական այլ վայրերը պետք է լրջորեն դիտարկեն չժխողների համար նախատեսված տարածքների և սենյակների առկայությունը: Ցանկալի է, որ չժխողների համար հատուկ նախատեսված տարածքների փոխարեն, այդպիսիք նախատեսվեն ծխողների համար:

4) Ջերմուկն ու դրա մերձակայքը հայտնի են օրգանական և բնական ճանապարհով աճեցվող սննդամթերքով: Ջերմուկը նաև ճանաչված է իշխան և կարմրախայտ ձկնատեսակներով: Ռեստորանների սեփականատերերը և մենեջերները պետք է ձգտեն համատեղել Ջերմուկի և ընդհանրապես հայկական խոհանոցը առողջ սննդատեսակների հետ՝ գրավիչ կերպով ներկայացված նոր կերակրացանկերի ներմուծմամբ, օգտագործելով տեղական արտադրանքը առողջ սննդի պատրաստման նպատակով, ինչը և կբավարարի տարբեր ճաշակներ ունեցող հաճախորդների պահանջները:

5) Ամբողջ աշխարհում դահուկային սպորտի շատ կենտրոններում ծնեային սպորտաձևերի մասնակիցները սիրում են օգտվել հետսպորտային հարմարություններից: Գաղափարը կայանում է նրանում, որ վերջին սահիցի հետո նրանք՝ ղեռնա դահուկասպորտի համազգեստով մտնում են բար: Սա նման է գոլֆում, այսպես կոչված, «19-րդ անցքի» ավանդույթին, երբ գոլֆ խաղացողները սիրում են գոլֆի մեկ ռաունդից հետո ժամանակ անցկացնել իրենց ընկերների հետ: Հետդահուկային հարմարությունները սովորաբար լինում են սննդի, խմիչքի, պարելու, շինման վայրեր և տարբեր մշակութային միջոցառումներում մասնակցելու կամ դրանք դիտելու հնարավորություն: Ներկայումս Ջերմուկում նման հաստատությունների գաղափարը սահմանափակվում է դահուկային ճոպանուղու ստորոտում գտնվող փոքրիկ սրճարանով: Այս հարմարությունները անհրաժեշտ է ընդլայնել. պարտադիր չէ, որ դրանք լինեն հետդահուկային ժամանցի ավանդական վայրեր, սակայն պետք է հյուրերին տրամադրել երեկոյան ժամանցի հնարավորություն, որը ներկայումս չափազանց սահմանափակ ընտրություն է առաջարկում:

6) Ինչպես նշված է հինգերորդ խնդրում, բացի դահուկասպորտի և առողջարանային ծառայությունների հնարավորություններից, Ջերմուկի այցելուներին անհրաժեշտ է տրամադրել, զբաղմունքի կամ ժամանցի մեծ ընտրություն: Որպես առողջ և ակտիվ կենսակերպի կենտրոն, Ջերմուկը պետք է կարողանա բավարարել զբոսաշրջիկների, ինչպես նաև տեղացի բնակչության կարիքներն ու հետաքրքրությունները: Նմանօրինակ ժամանցի տարբերակներն արդեն նկարագրվել են: Այնուամենայնիվ, օտարերկրացի զբոսաշրջիկները կպահանջեն լրացուցիչ հարմարությունների ու ծառայությունների առավել մեծ ընտրություն, քան հայ զբոսաշրջիկները: Չհարշավի և լեռնային հեծանվասպորտի համար անհրաժեշտ է մշակել հատուկ երթուղիներ՝ հնարավորինս հարմարավետություն ապահովելով նրանց համար, ով դեռևս ծանոթ չի Հայաստանի բնությանն ու աշխարհագրությանը: Նրանք պետք է ի սկզբանե տեղյակ լինեն առանձին երթուղիների բարդության մակարդակի և դրանք անցնելու համար պահանջվող ժամանակի մասին: Օտարերկրացի զբոսաշրջիկները, հավանաբար, առավել պահանջկոտ կլինեն մարզագույքի և հարմարանքների, օրինակ, լեռնային հեծանվասպորտի սաղավարտների և ծիարշավի գլխարկների, հանդեպ, որոնք հայերը սովորաբար չեն կրում: Յուրաքանչյուր հյուրամուտում և առողջարանում պետք է տրամադրվի բոլոր երթուղիների, ինչպես նաև ձիերի և հեծանիվների վարձակալության կետերի, դրանց արժեքի մասին տեղեկատվություն: Նկարագրված յուրաքանչյուր գործունեության տեսակի համար պատասխանատու անձնակազմը պետք է առնվազն ինչ-որ չափով տիրապետի օտար լեզվի/լեզուների, ինչը հնարավոր կդարձնի նրանց արդյունավետ շփումը օտարերկրացի զբոսաշրջիկների հետ: Օգտագործվող ողջ մարզագույքը պետք է պատշաճ կերպով շահագործվի և պահպանվի:

7) Բացառությամբ սննդամթերքի, կենցաղային իրերի և հուշանվերների մի քանի խանութի, զբոսաշրջիկների համար գնումներ կատարելու շատ փոքր հնարավորություն կա: Խնդիր 19-ը նկարագրում է ձեռագործ և արվեստի իրերի վաճառքի ձևերը, սակայն տեղական ձեռնարկությունները նույնպես հնարավորություն ունեն վաճառելու Ջերմուկի ապրանքանշանը կրող ապրանքներ, դահուկային համազգեստ և սարքավորում, բացօթյա ժամանցի պարագաներ (հագուստ, քարտեզներ, վրաններ, պարաններ և այլն), տեղական արտադրության սննդամթերք և լուսանկարներ:

8) Ջերմուկում կա ինտերնետային հաղորդակցության հնարավորությունների ակնհայտ պակաս: Անհրաժեշտ է ստեղծել ինտերնետ սրճարաններ թե այն հյուրերի համար, ովքեր չեն գիշերում Ջերմուկում, և թե նրանց համար, ովքեր ապրում են այն առողջարաններում ու հյուրանոցներում, որտեղ ինտերնետային կապ չկա: Ջբոսաշրջիկներին անհրաժեշտ կլինեն նաև միջազգային VISA, MasterCard, Diners Club and American Express քարտեր սպասարկող բանկոմատներ և տարադրամի փոխանակման կետեր:

9) Ջերմուկում և դրա շրջակայքում գոյություն ունեն զբոսաշրջության գրավչության մի շարք վայրեր, որոնք կարող են հրապուրել զբոսաշրջիկներին ակտիվ սպորտային ժամանցից և առողջարաններից հետո: Դրանցից են Փիլկահաս քարանձավները և

Մամարգա բնակավայրը: Տեղական կամ ազգային նշանակության ցանկացած վայր պետք է գովազդվի, դառնա առավել հասանելի և դրանց վերաբերյալ տրամադրի տեղեկատվություն՝ բազմալեզու տեղեկատվական վահանակների կամ կողմնորոշիչ նշանների տեսքով՝ այցելուների տպարավորությունը առավել հաճելի դարձնելու նպատակով:

10) Առաջարկվող միջոցառումներն են՝

ա. վերանորոգել, բարեկարգել և ընդլայնել զբոսաշրջության գրավչության օբյեկտները, ինչպիսին են Փիլկահաս քարանձավները, Մամարգա բնակավայրը. ապահովել բազմալեզու տեղեկատվական ծանոթագրական վահանակների առկայությունը, ավտոմեքենաների և հետիոտն ճանապարհների վրա կողմնորոշիչ նշանների առկայությունը, բարելավել դեպի այդ օբյեկտներ տանող ճանապարհները,

բ. խրախուսել չգործող ռեստորանների վերանորոգումը կամ դրանց վաճառքը և ընդլայնել գործող ռեստորանների կողմից առաջարկվող ընտրամիս. բազմազան կերակրացանկեր, առողջ սննդակարգի ներդրում, կողմնորոշիչ նշանների բարելավված համակարգ, բազմալեզու կերակրացանկեր,

գ. ստեղծել հետդահուկային ժամանցի հարմարություններ և հնարավորություններ՝ բարեր, երաժշտական ակումբներ, մշակութային ժամանցի վայրեր, հաշվի առնելով թիրախային շուկաներն ու Ջերմուկի ոճն ու բնույթը,

դ. մշակել լեռնագնացության և հեծանվասպորտի տարբեր բարդության և տևողության երթուղիների ցանց և ապահովել դրանց վերաբերյալ ճանապարհային կողմնորոշիչ նշանների առկայությունը, երթուղիների մաքրումը և անհրաժեշտ ենթակառուցվածքների ստեղծումը (կամուրջներ, սեյվատարներ, աստիճաններ և այլն), նշանների և ծանոթագրական վահանակների ապահովում, քարտեզների մշակում,

ե. ստեղծել լեռնային հեծանվասպորտի և ծիարշավի երթուղիներ, դրանց վերաբերյալ մշակման կետերի ապահովում, հեծանիվների վարձակալման և վերանորոգման կետերի հիմնում, գտնել կամ հիմնել ծիարշավի կենտրոն՝ հազցեցած որակյալ սարքավորումներով և մարզված ձիերով, քարտեզների մշակում,

զ. խրախուսել և հիմնել օտարերկրացի և տեղացի զբոսաշրջիկների կարիքներին համապատասխան մանրածախ առևտրի կետեր, այդ թվում հուշանվերների/ձեռագործի, բացօթյա ժամանցի և դահուկասպորտի պարագաների խանութներ,

է. խրախուսել զբոսաշրջության լրացուցիչ ծառայությունների ստեղծումը, ինտերնետ սրճարանների (ոչ խաղասրահների), տարադրամի փոխանակման կետերի, միջազգային կրեդիտ և դեբիտ քարտեր սպասարկող դրամի բանկոմատների կետեր:

7. Ձարգացնել զբոսաշրջության կենտրոնն ու բարելավել դրա կառավարումը, զարգացնել անձնակազմի կարողությունները, ունակություններն ու հմտությունները, ինչպես նաև գործազուրկ աշխատուժի մասնագիտական որակը՝ կազմակերպելով ուսուցողական դասընթացներ, գործնական աշխատանքներ, աշակերտություն և մասնագիտական ուսուցում

1) Ջերմուկի ունակությունը՝ զբոսաշրջիկների պահանջները բավարարող արտադրանք և ծառայություններ մատուցելու առումով, մեծապես կախված է աշխատուժի որակից (և քանակից): Ներկայումս զբոսաշրջության և

հյուրընկալության արդյունաբերության ոլորտում զբաղվածները չունեն հատուկ մասնագիտական կրթություն, չնայած կան և բացառություններ: Ջերմուկից շատ ուսանողներ Երևանում ուսումնառում են զբոսաշրջային կամ հարակից մասնագետներ պատրաստող բուհերում կամ ֆակուլտետներում: Այնուամենայնիվ, Ջերմուկի զբաղվածության կենտրոնի աշխատակիցների հետ ունեցած զրույցների արդյունքում պարզ դարձավ, որ ուսանողներից շատերը ուսումնառությունից հետո չեն վերադառնում Ջերմուկ: Ջերմուկին ամենամոտ գտնվող բարձրագույն ուսումնական հաստատությունը Երևանի պետական համալսարանի Եղեգնաձորի մասնաճյուղն է: Այն վերջերս է սկսել զբոսաշրջությանն ու հյուրընկալությանն առնչվող մասնագետներ պատրաստել: «Արմենիա» առողջարանը գործնական հարաբերություններ է սկսել Երևանի «Մարիոթ» հյուրանոցի հետ՝ իր անձնակազմի վերապատրաստման նպատակով: Այնուամենայնիվ, փաստ է, որ քաղաքում զբոսաշրջության ոլորտի ձեռնարկություններում աշխատող անձնակազմի և ղեկավարների վերապատրաստման կարիք կա:

2) Սույն ռազմավարության իրականացման արդյունքում ակնկալվող զբաղվածության մակարդակի աճի հետ մեկտեղ, կարևոր է նաև նոր սերնդի աշխատուժի վերապատրաստումը: Ակնկալվող նոր աշխատատեղերի մեծամասնությունը առնչություն կունենա ծառայությունների ոլորտի հետ, այդ իսկ պատճառով մասնագիտական կրթությունը պետք է լինի ուշադրության կենտրոնում: Մասնագիտական կրթություն ունեցող մեներգների պահանջը կլինի համեմատաբար ավելի փոքր:

3) Կառավարման ոլորտում վերապատրաստումը անհրաժեշտ կլինի հիմնականում հյուրընկալության, առողջարանային գործի, սննդի և խմելու կետերի գործի, միջոցառումների կազմակերպման, շուկայավարության և ընդհանուր բիզնես կառավարման բնագավառներում:

4) Մասնագիտական ոլորտում վերապատրաստման կարիքը կկրի առավել լայն բնույթ, և անհրաժեշտ կլինի, որ այն կենտրոնանա մեծ ձեռնարկություններում հատուկ աշխատատեսակների վրա.

- ա. հյուրանոցային հաստատություններ – խոհարարներ, մատուցողներ, բարմեններ, ադմինիստրատորներ, դռնապաններ, գործավարներ, հավաքարարներ, վարպետներ, սպասարկողներ,
- բ. առողջարանային ծառայություններ - բժիշկներ, բժշկական և բուժական անձնակազմ, սնուցման մասնագետներ, ֆիթնես խորհրդատուներ, ընդհանուր խորհրդատուներ,
- գ. ռեստորաններ – խոհարարներ, մատուցողներ,
- դ. դահուկասպորտի հաստատություններ – օպերատորներ, մարզիչներ, սպասարկողներ,
- ե. սպորտի և ժամանցի ծառայությունների մատուցողներ – մարզիչներ,
- զ. այլ - զբոսավարներ և ուղեկցողներ, ծամփորդական գործակալներ, թանգարանային զբոսավարներ:

5) Կան նաև վերապատրաստման մի շարք այլ առարկաներ, որ վերաբերում են ամբողջ անձնակազմին: Դրանք են առաջին բուժ. օգնություն, հաճախորդների սպասարկում և օտար լեզուներ:

6) Հնարավորության սահմաններում վերապատրաստման դասընթացները պետք է համապատասխանեն միջազգային չափանիշներին, դրա համար կարելի է հրավիրել փորձառու դասախոսների/դասընթացավարների և օգտագործել ընդունված առկա ուսումնական պլանները և նյութերը: Գոյություն ունեցող միջազգային հնարավորությունների օգտագործումը կարող է ավելի թանկ լինել, բայց հանգեցնել հաճախորդների բավարարվածության առավել բարձր մակարդակի:

7) Գոյություն ունեն մնացած դասընթացների կազմակերպման մի շարք եղանակներ: Պահանջվող դասընթացի բնույթը մեծապես կախված է լսարանից և այն հմտություններից, որոնց շուրջ վարվում է դասընթացը, այնուամենայնիվ այդ եղանակները հիմնականում ներառում են հետևյալը՝

- ա. գործնական ուսուցում - այս եղանակը ուսանողներին հնարավորություն է ընձեռում իրական միջավայրում գործի դնել ունեցած մասնագիտական գիտելիքները/հմտությունները: Այն նաև հնարավոր գործատուներին տրամադրում է էժան, կարճատև աշխատուժ ունենալու հնարավորություն, և, որն ամենակարևորն է, հնարավորություն է, հնարավորություն զնախատելու հետազայում, դասընթացի ավարտից հետո, աշխատանքի համար դիմորդ-թեկնածուներին: Մասնագիտական ոլորտներում այս եղանակը առավել արդյունավետ է:
- բ. աշխատություն - շատ արդյունավետ է արհեստների դեպքում: Աշխատությունը ուսանողներին հնարավորություն է ընձեռում մասնագիտացնելու ունեցած հմտությունները՝ փորձառու վարպետի գլխավորությամբ:
- գ. մասնագիտական դասընթացներ - այս եղանակը, համալսարանական կրթության համեմատությամբ, շատ արդյունավետ է հմտությունների ձեռքբերման արագության առումով:
- դ. վերապատրաստում - առողջարաններն ու հյուրանոցները կարող են նաև առաջարկել իրենց գործունեության բնույթին հատուկ հմտությունների վերապատրաստում հենց տեղում: Սա շատ արդյունավետ եղանակ է արդեն իսկ աշխատող անձնակազմի վերապատրաստման առումով, հատկապես, երբ կազմակերպությունը չի ցանկանում հրաժարվել այդ աշխատողներից ուսուցման ողջ ընթացքում:

8) Վերապատրաստման մնացած եղանակները նշված են ՀՀ կառավարության գործունեության 2008թ. ծրագրում, համաձայն որի ուղղակի կապ է անհրաժեշտ հաստատել գործարար միջավայրի և կրթօջախների միջև: Ռազմավարությունը շեշտում է նաև հաշմանդամների համար կրթության մատչելիության հարցը՝ թիրախային վերապատրաստման իրականացման և մասնագիտական կրթության հնարավորությունների ստեղծման միջոցով: Նման մոտեցում սահմանված է նաև Եվրամիության Եվրոպական հարևանության քաղաքականության 2007-13թթ. Գործողությունների ծրագրում: Կրթության, մասնագիտական կրթության/վերապատրաստման, ինչպես նաև շարունակական/մեծախսակների կրթության ոլորտի հետագա բարեփոխումների իրականացում (մարդակային ռեսուրսների զարգացումը՝ որպես Կայուն զարգացման ծրագրի հիմնասյուններից մեկի, իսթանման նպատակով): Եվրամիության Գործողությունների ծրագիրը առաջարկում է նաև. բարեփոխել և արդիականացնել կրթական և

վերապատրաստման համակարգերը Հայաստանի Եվրամիության չափանիշներին և փորձին համապատասխանելու ծրագրերի շրջանակներում:

9) Հատուկ ուշադրություն է պահանջում մասնագիտական կրթությունը/վերապատրաստումը: Քանի որ Ջերմուկը չունի բարձրագույն ուսումնական ոչ մի հաստատություն, ինչպես նաև դժվարություն է ներկայացնում դասախոսների Ջերմուկում բնակվելու խնդիրը, ուստի առավել նպատակահարմար է դառնում Եղեգնաձորում Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետի մասնաճյուղի բացումը: Այնուամենայնիվ, տեղացի շահագրգիռ կողմերը որպես լավագույն տարբերակ նշել են դասընթացների կազմակերպումը Ջերմուկում: Շատ կարևոր է, որ դասընթացներից հետո կազմակերպվի որակավորված մասնագետների կողմից վերահսկվող ժամանակաշրջան՝ աշխատուժին դասընթացների ընթացքում ձեռքբերած նոր մեթոդներն ու հմտությունները յուրացնելու աջակցման նպատակով:

10) Առաջարկվող միջոցառումներն են՝

- ա. վերապատրաստել անձնակազմին զբոսաշրջության և հյուրընկալության ընդհանուր հմտությունների ոլորտում - հաճախորդների սպասարկում, օտար լեզուներ,
- բ. վերապատրաստել մենեջերներին և ղեկավար օդակներին հյուրընկալության, ռեստորանների, առողջարանների կառավարման, զբոսաշրջության և շուկայավարության ոլորտներում,
- գ. վերապատրաստել գոյություն ունեցող անձնակազմը՝ նրանց հատուկ պարտականությունների և պատասխանատվության ոլորտներին համապատասխան - արմինիստրատորներ, գործավարներ, խորհրդատուներ, հավաքարարներ, դեմոստրանտներ, մատուցողներ, խոհարարներ, ուղեկցողներ, դահուկային ճուպանուղու աշխատողներ, դահուկասպորտի մարզիչներ, բացօթյա ժամանցի կազմակերպիչներ: Հնարավորության սահմաններում օգտվել միջազգային հավատարմագրված դասընթացների հնարավորություններից,
- դ. Ջերմուկի քաղաքապետարանում ստեղծել զբոսաշրջության հարցերով զբաղվող բաժին, որը կկառավարի զբոսաշրջության զարգացման գործընթացը և կիրականացնի զբոսաշրջային մարքեթինգ: Ֆինանսավորումը պետք է տրամադրվի տեղական բյուջեից, ինչպես նաև մասնավոր հատվածի կողմից կատարվող ներդրումներից:

8. Մշակել Ջերմուկի ուրույն բրենդը, որը կհամապատասխանի Ջերմուկի ներկայիս ու հետագա մրցակցային առավելություններին, որոշել համապատասխան հաճախորդի թիրախային խումբը/խմբերը և ակտիվորեն ներկայացնել Ջերմուկը զբոսաշրջային համաշխարհային շուկայում և թիրախային շուկաներում որպես առողջարանային կենտրոն:

1) Կարևոր է, որ Ջերմուկն ունենա ճանապարհային նշանների, բրոշյուրների, զբոսաշրջության վերաբերյալ տեղեկատվական ինտերնետային կայքերի և այլ գովազդային նյութերի հարուստ ու կազմակերպված բազա, կայացնելու համար իր զբոսաշրջային բրենդն ու տարբերակվելու Հայաստանում և տարածաշրջանում հանգստի սման այլ կենտրոններից: Դա իրականացվում է բրենդի մշակման ռազմավարության միջոցով: Այս գործընթացի առաջին քայլն է որոշել թիրախային շուկաները, որպեսզի Ջերմուկի բրենդը գրավի լինի այդ շուկաների համար:

2) Քաղաքապետարանը պետք է սերտորեն համագործակցի զբոսաշրջության ոլորտում առկա ասոցիացիաների հետ և ապահովի Ջերմուկի հնարավորությունների արդյունավետ գովազդումը և կառավարումը: Սա ենթադրում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների աջակցություն և, անհրաժեշտության դեպքում, համագործակցություն՝ իրականացնելու Ջերմուկ քաղաքի զարգացման ռազմավարության միջոցառումների ծրագիրը: Համագործակցությունը պետք է նաև ընդգրկի ՁՁՀԳ և զբոսաշրջության ոլորտի ասոցիացիաներին, օրինակ՝ Հայ զբոսավարների գիղդիային, Հայաստանի հյուրանոցների ասոցիացիային Հայաստանի ներգնա տուրօպերատորների միությանը և այլն, և դրանց հետ աշխատանքային հարաբերությունների ամրապնդում: Քաղաքապետարանը ըստ կարելիվույն պետք է անի ամեն ինչ՝ զբոսաշրջության ոլորտում Հայաստանի ընդհանուր տեսլականին համահունչ լինելու համար, մինևույն ժամանակ ջանալով, որ զբոսաշրջությամբ զբաղվող այլ կազմակերպությունների կողմից Ջերմուկը ներկայացվի որպես ակտիվ և առողջ ապրելակերպի կենտրոն: Քաղաքապետարանը ըստ կարելիվույն պետք է խրախուսի զբոսաշրջության ոլորտում գործող ասոցիացիաների հզորացումը (օրինակ, աջակցի նրանց անցկացնելու իրենց հանդիպումներն ու հավաքները համայնքային կենտրոններում և այլն), աջակցի Ջերմուկի ձեռնարկատերերին ստեղծել հարաբերություններ այս կազմակերպությունների հետ, ինչը նաև արդյունավետ կլինի Ջերմուկը որպես զբոսաշրջության կենտրոն ներկայացնելու գործում համայնքային մասնակցության և համակարգման բարելավման համար:

3) Բրենդի մշակելուց հետո քաղաքապետարանը պետք է ապահովի, որ Ջերմուկի բրենդը և կարգախոսը ներառվեն զբոսաշրջային տեղեկատվական միջոցներում և նյութերում (կայքեր, բրոշյուրներ, քարտեզներ և այլն) և ենթակառուցվածքներում, այդ թվում նաև քաղաք մտնելու ճանապարհին տեղադրված «բարի գալուստ» վահանակի, զբոսաշրջության տեղեկատվական կենտրոնների նշանների և փողոցային լույսերի մոտ հետագայում տեղադրվելիք գովազդային վահանակների վրա:

4) Ջերմուկի բրենդի մշակման ընթացքում հաշվի առնվող անհրաժեշտ գործոններից է բրենդի գրավչությունը զբոսաշրջիկների տարբեր սեռա-տարիքային, կրոնական և այլն խմբերի համար: Սրան զուգահեռ պետք է ապահովել զբոսաշրջային ծառայությունների վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունը: Նույն նպատակով հիմնական զբոսաշրջային գրավչություններ տամող ճանապարհների պետք է տեղադրվեն կողմնորոշիչ նշաններ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Այս նշանները պետք է մշակվեն ընթեռնելի ու պարզ մեկնաբանությամբ՝ գույների և պատկերների հետևողական շարքի կիրառմամբ բոլոր սման կողմնորոշիչ նշանների համար: Հնարավոր է նաև, որ քաղաքապետարանը ցանկանա սեմինար հրավիրել՝ զբոսաշրջության ոլորտում տնտեսվարող սուբյեկտների ներկայացուցիչների մասնակցությամբ՝ վերջիններիս օգնելու հասկանալ քաղաքապետարանի կողմից կազմակերպվող բրենդինգային կամպանիան, ինչպես նաև հասկանալ իրենց կազմակերպության դերն այդ կամպանիայում և, թե ինչպես իրենք կարող են մշակել իրենց

գովազդային նյութերը՝ համատեղ ներկայացնելով Ջերմուկի և տվյալ հաստատության ուրույն բրենդը:

5) Բրենդն ամրապնդելուն, ինչպես նաև այն տարբեր թիրախային շուկաներին հասցնագրելուն նպաստող միջոցառում կարող է համարվել տարբեր տևողությամբ (կարճատև այց, երկօրյա, եռօրյա, հինգօրյա և այլն) զբոսաշրջային գործունեություն առաջարկող և Ջերմուկի բրենդն ու տեսականը կրող երթուղիների մշակումը, ինչը, իր հերթին, կլրացնի գոյություն ունեցող երթուղիների ցանցը:

6) Անկախ գիտնականների խմբի կողմից իրականացված Ջերմուկի հանքային ջրերի ուսումնասիրությունը (տե՛ս խմբի 2-ը) նույնպես կօժանդակի Ջերմուկի ապրանքանշանի մշակմանը:

7) Առաջարկվող միջոցառումներն են՝

ա. հստակ սահմանել թիրախային շուկաների բնութագիրն ու յուրահատկությունները, այդ թվում սեռա-տարիքային, նախասիրությունների և ակնկալիքների հետ կապված չափանիշները,

բ. մշակել Ջերմուկի բրենդի մշակման և գովազդման ռազմավարություն, որը անաչառ կերպով հստակ կսահմանի Ջերմուկի ինքնությունը, առանձնահատկությունը՝ հիմնվելով թիրախային շուկաների, դրանց կողմից պահանջվող արտադրանքի, ծառայությունների և փորձառությունների, այդ թվում նաև այդ շուկաների գրավման համար պահանջվող հիմնական ուղերձների վրա,

գ. մշակել և տպագրել գովազդային նյութեր (քարտեզներ, տեղեկատվական թերթիկներ, ուղեցույցներ, բրոշյուրներ, պաստառներ և այլն)՝ համագործակցելով Ջրոսաշրջության զարգացման հայկական գործակալության և տեղական տնտեսավարող սուբյեկտների հետ՝ քաղաքը և դրա զբոսաշրջային գրավչությունները միջազգային ավիափերթների, անմիջական հասցեստերների, տեղեկատվական կենտրոնների միջոցով գովազդելու նպատակով,

դ. բարելավել Ջերմուկի գոյություն ունեցող ինտերնետային պորտալը՝ բրենդինգային ռազմավարության համաձայն, որը հնարավոր այցելուներին կտրամադրի քաղաքում առկա ծառայությունների վերաբերյալ բազմալեզու տեղեկատվություն,

զ. մշակել տարբեր տևողությամբ (կարճատև այց, երկօրյա, եռօրյա, հինգօրյա և այլն), Ջերմուկի բրենդն ու տեսականը կրող երթուղիներ, որոնք կլրացնեն գոյություն ունեցող երթուղիների ցանցը:

9. Արդիականացնել Ջերմուկի զբոսաշրջային ծառայությունների վերաբերյալ տեղեկատվությունը, որը կխթանի զբոսաշրջիկների այցելությունների աճը, կօգնի նրանց կողմնորոշվելու Ջերմուկում բոլոր հնարավոր գրավչությունների վերաբերյալ

1) Ի լրումն առաջարկվող ենթակառուցվածքների զարգացման և արդիականացման, զբոսաշրջիկների համար Ջերմուկն առավել գրավիչ դարձնելու և Ջերմուկի բրենդը մշակելու գործում չափազանց կարևոր է նաև, թե Ջերմուկը զբոսաշրջության համաշխարհային շուկայում ինչպես կներկայացնի իր զբոսաշրջային առաջարկները: Այս ներկայացումը պետք է միշտ իրականացնել նկատի ունենալով երկու թիրախ՝ հանգստի վայր փնտրող արտերկրում գտնվող զբոսաշրջիկ և հանգստի ակնկալիքով արդեն քաղաք ժամանած զբոսաշրջիկ: Երկու դեպքերում

էլ Ջերմուկը պետք է շատ հստակ կերպով ձևակերպի իր առաջարկը զբոսաշրջիկների համար:

2) Առաջին դեպքը վերաբերում է միջին զբոսաշրջիկին, որը ինտերնետում փնտրում է հանգստի վայր, և նրա համար չափազանց դժվար է Ջերմուկի վերաբերյալ տեղեկատվություն գտնելը: Հիմնականում շատ աղքատիկ են առողջարաններին վերաբերող տեղեկությունները, որոնք ներկայացված չեն տարբեր լեզուներով, ուստի և զբոսաշրջիկին հնարավորություն չեն ընձեռում ինտերնետային և իրական ժամանակի ռեժիմում վճարել հյուրանոցի և բուժման փաթեթների համար: Ավելին, դահուկային ճոպանուղու համար ներկայանալու մեծ հնարավորություն կլինի, եթե այն տրամադրի այնպիսի տեղեկատվություն, ինչպիսին է սեզոնի բացումը, եղանակային պայմանները, գինը և նմանատիպ այլ տվյալներ: Հնարավոր է նաև կայքում գովազդել դահուկասպորտի դպրոցը:

3) Նմանապես, հանգստի նպատակով ժամանած զբոսաշրջիկները աննշան տեղեկատվություն են գտնում Ջերմուկի կողմից առաջարկվող բոլոր ծառայությունների վերաբերյալ: Քաղաք մտնող մայրուղու վրա չկա տեղեկատվական կենտրոն, որը այցելուներին կտրամադրեր քաղաքի զբոսաշրջային քարտեզներ և տեղեկատվություն Ջերմուկի մասին: Տեսարժան վայրերում չկան ծանոթագրական վահանակներ, որոնք կներկայացնեն, թե այցելուներն ինչ են դիտում կամ ինչով է այն ճանաչված կամ առանձնահատուկ:

4) Ի լրումն վերը առաջարկված լուծումների, համաշխարհային շուկայում Ջերմուկի ներկայացման արդյունավետ միջոց է նաև Հայաստանի և տարածաշրջանային զբոսաշրջության օպերատորների միջոցով քաղաքի զբոսաշրջային հնարավորությունների գովազդումը: Ջրոսաշրջային օպերատորները կարող են գործել ոչ միայն որպես զբոսաշրջային փաթեթներ ձևավորող, այլև որպես շուկայավարող գործակալներ, որոնք Ջերմուկի մասին կխոսեն այն հնարավոր հետաքրքրված անձանց հետ, որոնք չունեն Ջերմուկի մասին բավարար տեղեկատվություն՝ այն որպես հանգստի վայր ընտրելու համար:

5) Առաջարկվող միջոցառումներն են՝

ա. բարելավել զբոսաշրջային հյուրանոցային և առողջարանային վեբ-կայքերի որակն ու արտաքին տեսքը. տեղեկատվության մատչելիությունը տարբեր լեզուներով, ինտերնետ կապի և իրական ժամանակի ռեժիմում հյուրանոցների և բուժման փաթեթների ձեռքբերման հնարավորությունը,

բ. ստեղծել տարբեր լեզուներով ինտերնետային կայք և գովազդային նյութեր դահուկային ճոպանուղու գործունեության վերաբերյալ, որոնք կներկայացնեն մանրամասներ աշխատանքային ժամերի, ծյան վիճակի, գների, դահուկասպորտի դպրոցի, սարքավորումների վարձակալության և դահուկավազքի ճանապարհների մասին,

գ. հիմնել զբոսաշրջիկների տեղեկատվական կենտրոն՝ համագործակցելով Հայաստանում զբոսաշրջության զարգացման գործակալության հետ: Այն պետք է նման լինի Դիլիջանում հիմնված տեղեկատվական կենտրոնին, որը զբոսաշրջիկներին տեղեկատվություն կտրամադրի մինչև նրանց Ջերմուկ ժամանելը և ողջ այցելության ընթացքում, ինչպես նաև կաջակցի հյուրանոցներում համարների ամրագրման և այլնի գործում,

դ. մշակել և տեղադրել տեղեկատվական վահանակներ քաղաքում նկատելի վայրերում, որոնք մանրամասն տեղեկություններ կտրամադրեն մոտակայքում գտնվող ժամանցի վայրերի, հյուրանոցների, խանութների, ռեստորանների և դեպի այդ վայրերը տանող ճանապարհների վերաբերյալ, ե. գովազդել Ջերմուկի զբոսաշրջային նոր հնարավորությունները հայաստանյան և տարածաշրջանային զբոսաշրջային օպերատորների միջոցով:

Գլուխ 2. Զբոսաշրջությանն անուղղակիորեն առնչվող խնդիրներ

1. Զարգացնել ու պահպանել Ջերմուկի՝ որպես զբոսաշրջության կենտրոնի, նկարագիրը՝ բնութագրված ճարտարապետությամբ, կամաչ տարածքով, շրջակա միջավայրի որակով, մաքրությամբ, մարդկանց հյուրընկալությամբ և այլն

1) Զբոսաշրջիկներին գրավելու համար պահանջվում է հետևողականորեն պահպանել քաղաքի ճարտարապետական և այլ տարրերի հաճելի ոճը: Զբոսաշրջիկների կողմից բարձր են գնահատվում ճարտարապետության ուրույն ոճը, տեղական շինանյութի առանձնահատկությունը, ինչպես նաև շրջակա միջավայրի գեղեցիկ տեսարանների հնարավորությունը: Ջերմուկի նման զբոսաշրջության փոքր կենտրոնում ճարտարապետական ոճի, շինությունների տեսակների և օգտագործված շինանյութի բազմազանությունը կարող է ստեղծել չհամակարգված և տհաճ մթնոլորտ: Այդ իսկ պատճառով, Ջերմուկի բնության և դրանով պայմանավորված հանգստյան գոտու համբավը, ինչպես նաև զբոսաշրջության կենտրոն դառնալու Ջերմուկի տեսլականը, պետք է ամրապնդվեն նոր շինարարության կամ վերանորոգումների ճանապարհով:

2) Ջերմուկի ճարտարապետությունը իրենից ներկայացնում է բազմազան ոճերի խառնուրդ: Եստ շենքեր ունեն խորհրդային ժամանակահատվածին բնորոշ պարզունակ ուղղանկյուն ձև, որոշ շենքեր ունեն եվրոպական կամ ազգային հաճելի տեսք, որոշ շենքեր արտացոլում են արդի ճարտարապետական մոտեցումները, իսկ մնացածը նախագծված են զուտ գործառույթային սկզբունքներով՝ ոճի մասին առանց որևէ նկատառումի: Նոր շինարարությունն ու վերանորոգումը ոչ մի դեպքում չպետք է իրականացվեն առանց շրջակա միջավայրի առանձնահատկությունները հաշվի առնելու, քանի որ միջավայրը չափազանց կարևոր դերակատարություն ունի Ջերմուկի զբոսաշրջության արդյունաբերության ոլորտում:

3) Չուտ հայկական ճարտարապետությունը, այնուամենայնիվ, օգտագործում է տեղական նյութեր, գրավիչ է զբոսաշրջիկների համար և օգտագործում է հելլենիստական ճարտարապետության տարրեր: Չելլենիստական ոճի ճարտարապետությունը հատկապես հաճելի է առողջարանների դեպքում և բնորոշ է դրանց, ինչպես օրինակ, Կարլովի Կարի առողջարանային քաղաքում: Նման ճարտարապետության հաջող օրինակներ են «Արմենիա» և «Օլիմպիա» առողջարանները, «Թուլիս» հյուրանոցը, որոնք կարող են օրինակելի դառնալ քաղաքաշինության հետագա ճարտարապետական ուղղվածության համար: Տեղական ճարտարապետությանը զուգահեռ պետք է քննության առնվեն եվրոպական ճարտարապետության այլ ոճեր, ինչպիսին է օրինակ, դահուկային տնակների՝ «չալե» ոճը («Ինթերլայք», Շվեյցարիա) կամ ֆրանսիական ու չեխական

ճարտարապետության տարրեր, որպեսզի Ջերմուկի տեսքը համապատասխանի զբոսաշրջության այն ուղղությանը, որին ձգտում է քաղաքը:

4) Ջերմուկում նշաններն ու գովազդային ցուցանակները, կարծես թե, որևէ կերպ չեն կարգավորվում, և դրա արդյունքում որոշ նշաններ հակասում են քաղաքի բնույթին:

5) Ջերմուկի ճանապարհային ցանցը մասամբ համապատասխանում է քաղաքի՝ որպես զբոսաշրջային կենտրոնի զարգացման տեսլականին, և դրա հետագա զարգացումը նույն ուղղությամբ կնպաստի քաղաքի տեսքի պահպանմանը: Ջերմուկի փողոցները ընդհանուր առմամբ մաքուր են և անաղմուկ, ինչը նույնպես լիովին համապատասխանում է քաղաքի վերոնշյալ տեսլականին: Առկա են նաև արվեստի և մշակույթի տարրեր հիմնականում զբոսայգում և հուշարձանների շրջակայքում, ինչը նույնպես համահունչ է քաղաքի տեսլականին և քաղաքի ճարտարապետությանը:

6) Մեծ թվով լքված շինությունները և ոչ գեղագիտական ճարտարապետության որոշ տարրեր մեծապես խոչընդոտում են քաղաքի գեղագիտական տեսքին: Սա պայմանավորված է մի շարք գործոններով, այդ թվում նաև հետագա զարգացման ուղղությամբ կիրառվող ճնշմամբ (ինչպես նաև մարդկանց մեծ թվով հանգեցնում է անճաշակ ճարտարապետության կամ օգտագործման անարդյունավետությանը), Ջերմուկի՝ որպես զբոսաշրջային կենտրոնի, տեսլականի բացակայությամբ, անկանոն կառուցապատմամբ, վատ շահագործմամբ և վերջին երկու տասնամյակների ընթացքում բնակչության և զբոսաշրջիկների կորստով:

7) Ընդհանուր առմամբ, այս խնդիրները կարող են լուծվել շինությունների շահագործման մասին կանոնակարգերի կատարելագործման և առավել արդյունավետ վերահսկողության միջոցով:

8) 33 կառավարության 2008թ. գործունեության ծրագրում սահմանված պարտավորությունները ևս մեկ քայլ են այս խնդիրների լուծման ուղղությամբ: Քաղաքաշինությանը վերաբերող հատվածում նշվում է, որ.

ա. կառավարությունը շարունակելու է քաղաքների ճարտարապետական ժառանգության ու պատմամշակութային միջավայրերի քաղաքաշինական վերականգնման խնդիրների լուծումը՝ որպես բնակավայրերի ինքնատիպության, զրավչության, ինչպես նաև մարդկանց բարեկեցության բարձրացմանն ու նոր աշխատատեղերի ստեղծմանը նպաստող էնդոգեն զարգացման խթան: Գնահատության բնակավայրերի պատմական կառուցապատման քաղաքաշինական վերականգնման ծրագրերի իրականացման համար կկիրառվեն նաև պետական-մասնավոր գործընկերության սկզբունքները՝ միջազգային համամասն փորձի ուսումնասիրության և տեղայնացման միջոցով,

բ. շարունակական բնույթ կկրի քաղաքաշինության բնագավառում ներդրումային գրավչության և գործարար միջավայրի բարելավմանը նպաստակա ուղղված միջոցառումների իրականացումը՝ պահպանելով

կապիտալ շինարարության զարգացման առաջանցիկ տեմպերը և կարևորելով ոչ միայն ծավալային, այլև որակական չափանիշների հետևողական զարժրացումն ու խթանելով ներդրումային նախաձեռնությունները հատկապես թույլ զարգացած տարածքներում,

գ. կառավարությունը հետամուտ կլինի քաղաքաշինական համակարգերի որակական երաշխիքների ապահովման տեսանկյունից կարևոր նշանակություն ունեցող միջազգայնորեն ընդունված սկզբունքներին համահունչ քաղաքաշինական ստանդարտների և նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի համակարգի կատարելագործմանը, դրանով իսկ նպաստելով միասնական շուկայում հանրապետության շինարարական արտադրանքի և ծառայությունների համատեղելիությանը, տեխնոլոգիաների արդիականացմանը, ինչպես նաև նախագծային ու շինարարական աշխատանքների որակի բարձրացմանը,

դ. կառավարության ուշադրության կենտրոնում կլինեն կառույցների սեյսմակայունության և հուսալիության ապահովման խնդիրները՝ սեյսմազիմվածության բարձրացմանը նպատակաուղղված ծրագրերի, ինչպես նաև վտանգավոր արատածին երկրաբանական պրոցեսների ու տեխնածին երևույթների ազդեցության նվազեցման, այդ թվում՝ սողանքային տարածքներում անհրաժեշտ, հիմնականում կանխարգելիչ, ինժեներապաշտպանական միջոցառումների մշակման և իրականացման միջոցով:

9) Զարգացման ցանկացած ծրագրի կարևոր մասերից է գոտիավորումը: Քաղաքաշինության մեջ գոտիավորումը կարևորվել է Խորհրդային շրջանում: Դրանով է, թերևս, պայմանավորվում բնակելի շենքերի մեծամասնության տեղակայումը քաղաքի ծախս մասում (հին օդանավակայանին մոտ): Գոտիավորումը Ջերմուկի գլխավոր նախագծի կարևոր գործոններից մեկն է, և այն պետք է արդիականացվի, հիմնվելով այդ ռազմավարության վրա: Լավագույն տարբերակով զբոսաշրջության ենթակառուցվածքը պետք է զարգանա քաղաքի աջ մասում, որտեղ և ներկայումս տեղակայված են առողջարանների ու հյուրանոցների մեծամասնությունը: Բնակելի շենքերն ու համայնքային կառույցները պետք է լինեն քաղաքի ծախս մասում: Այն ենթակառուցվածքների ստեղծումը, որոնցից օգտվելու են թե տեղացի բնակչությունը, և թե զբոսաշրջիկները, ինչպիսին են օրինակ առաջարկված սպորտային հաստատությունները, դեռևս քննարկումների կարիք ունեն: Հավանաբար, դրանք կտեղակայվեն բնակելի և զբոսաշրջության տարածքների միջնամասում:

10) Զարգացման ծրագրի մաս կազմող գոտիավորումը պետք է նաև հաշվի առնի համայնքային կամ պետական սեփականություն հանդիսացող հողատարածքները, որոնք ենթակա կլինեն կառուցապատման՝ գործող օրենսդրության համաձայն:

11) Առաջարկվող միջոցառումն է մշակել, հաստատել և իրականացնել քաղաքաշինության ներդաշնակ նախագծման քաղաքականություն և ուղեցույց:

2. Բարելավել, արդիականացնել ու ընդլայնել տրանսպորտային ենթակառուցվածքը և Երևան - Ջերմուկ տրանսպորտային երթուղու ծառայությունները

1) Ջերմուկին անհրաժեշտ է քաղաքի կենտրոնից մինչև Երևան գործող ժամանակակից, բարձրորակ, արդյունավետ և հարմարավետ տրանսպորտային ենթակառուցվածք և ծառայություններ:

2) Սայրաքաղաքից մոտավորապես 175 կմ հեռավորության վրա գտնվող այս քաղաքը կարելի է հասնել միայն ավտոճանապարհով մոտավորապես 2.5 – 3 ժամվա ընթացքում: Ավտոբուսով երթևեկելն ավելի երկար ժամանակ է պահանջում: Ճանապարհները, մասնավորապես M2 մայրուղին մինչև Արեւի գյուղ և նույն մայրուղուց մինչև Ջերմուկ քաղաք, բավականին բարվոք վիճակում են, չնայած կան հատվածներ, որոնք պահանջում են վերանորոգում կամ ասֆալտապատում:

3) ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը Ջարգացման ասիական բանկի հետ համատեղ, մշակել են պետական տրանսպորտային համակարգի ռազմավարություն: Այդ ռազմավարության մեջ շեշտված են ոլորտի հիմնգ հիմնական խնդիրներ՝ միջազգային միջանցքների արդիականացում, ճանապարհային ցանցերի վերականգնում, կառավարման և կարգավորման համակարգերի հզորացում, համակարգային կառուցվածքի և կարողությունների բարեփոխումներ և առավել որակյալ և արդյունավետ ծառայությունների մատակարարում: Տրանսպորտային համակարգի ռազմավարությունը համահունչ է Եվրամիության Եվրոպական հարևանության քաղաքականության 2007-13թթ. գործողությունների ծրագրին՝ մշակել և իրականացնել պետական տրանսպորտային ռազմավարությունը, ներառյալ տրանսպորտային ենթակառուցվածքների զարգացումը:

4) Ջերմուկը մեծապես կշահի Երևան և Մեղրի քաղաքների միջև հյուսիսից դեպի հարավ ձգվող միջանցքի զարգացումից: 175 կմ ընդհանուր երկարությամբ մայրուղու միայն 25 կմ տեղական ճանապարհն է գտնվում Ջերմուկի և M2 պետական նշանակության մայրուղու միջև: Ճանապարհի վրա ծախսվող ժամանակը կկրճատվի մեկ երրորդով, եթե Երևանից մինչև Մեղրի ձգվող M2 ճանապարհը բարեկարգվի որպես միջազգային չափանիշներին համապատասխանող երկկողմանի երթևեկության մայրուղի:

5) Նշված ռազմավարության իրականացման հնարավորությունը գնահատելու նպատակով Զարգացման ասիական բանկի խորհրդատուները Հայաստան կվերադառնան 2009թ. սկզբին: Այդ իսկ պատճառով ճանապարհային ենթակառուցվածքի վերաբերյալ կրնկրետ երկարաժամկետ գործողությունները չեն կարող մանրամասնվել մինչև իրականացման հնարավորությունների գնահատման ավարտը: Սա վերաբերում է նաև Երևանը Ջերմուկի հետ կապող նախատեսված ճանապարհային թունելի կառուցմանը:

6) ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունում քննարկվում է նաև Հայաստանի և Իրանի միջև երկաթուղային ճանապարհի կառուցման հեռանկարը: Հնարավոր է

նաև, որ երկաթուղի գործի երևանի ու Ջերմուկի միջև, որը կհանգուցվի երևան - Երասխավան երկաթգծին կամ երևան - Վարդենիս երկաթգծին:

- 7) Ինչպես ավտոճանապարհային ենթակառուցվածքի դեպքում, այնպես էլ այստեղ անհրաժեշտ է իրականացնան հնարավորության գնահատում, մինչև որևէ կոնկրետ գործողության մասին որոշում կայացնելը:
- 8) Ժամանակին Ջերմուկը հնարավորություն ուներ փոքր օդանավներ ընդունելու քաղաքի հարավային մասում կառուցված օդանավակայանում: Օդանավակայանի շենքը և թռիչքային ուղին երկար տարիներ չեն գործել: Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության տրամադրած տվյալների համաձայն, թռիչքուղին այլևս պիտանի չէ փոքր օդանավեր ընդունելու համար, վայրէջքի համար օդանավակայանին մոտենալը անվտանգ չէ, իսկ թռիչքուղու վերջում կառուցված եկեղեցին նույնպես խոչընդոտ է համդիսանում օդանավակայանի շահագործման համար:
- 9) Ջերմուկի շրջակայքում նոր օդանավակայանի հիմնումը որպես Ջերմուկ քաղաքի գերակա խնդիրների իրականացման միջոցառում սահմանված է Ջերմուկ քաղաքը զբոսաշրջային կենտրոն հայտարարելու մասին ԳՀ կառավարության 2008թ. սեպտեմբերի 18-ի N 1064-Ն որոշմամբ: Ընտրվել է երկու հնարավոր տարածք՝ Գորհայք և Կարմրաշեն գյուղերի հարևանությամբ (երկուսն էլ գտնվում են Ջերմուկից 15-20 կմ հեռավորության վրա): Սակայն, երկու դեպքում էլ գոյություն ունեն որոշ խոչընդոտներ: Մեկի դեպքում խանգարող հանգամանք է ուժեղ քամիների առկայությունը, իսկ մյուսի դեպքում՝ չափազանց մեղ թռիչքուղու հնարավորությունը: Համենայնդեպս, թռիչքուղիները պետք է ունենան առնվազն 2000 մ երկարություն, օդի ցածր ճնշման պարագայում օդանավերի գործողությունները հնարավոր դարձնելու համար: Նախքան առավել նպատակահարմար վայրի մասին որոշում կայացնելը, քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության ստանդարտներին համապատասխան, անհրաժեշտ է նախաձեռնել կլիմայի ուսումնասիրություն, որը տևում է առնվազն չորս տարի, այնուհետև յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ:
- 10) Շահագործող կողմերի մեկ այլ խումբ օդանավակայանի տեղակայման համար առաջարկում է այլ վայր քաղաքի հյուսիս-արևելյան մասում:
- 11) Օդանավակայանի համար առավել հարմար տարածքի ընտրության նպատակով կլիմայի ուսումնասիրություն իրականացնելուց բացի, անհրաժեշտ է նաև նախաձեռնել իրականացման հնարավորությունների գնահատում՝ բացառապես գաղափարի իրագործման արժեքը, գրաֆիկով կամ չարտեռային չվերթներ իրականացնելու գործում մասնավոր հատվածի հետաքրքրվածությունը և այդ չվերթների պահանջարկը՝ տրանսպորտային այլ տարբերակների համեմատությամբ: Անհմաստ կլիմի մեծ ներդրումներ կատարել օդանավակայանի ստեղծման համար, եթե վստահություն չլինի, որ այն մեծ պահանջարկ կունենա Հայաստանի քաղաքացիների, ինչպես նաև օտարերկրացի զբոսաշրջիկների

շրջանում, և որ մասնավոր հատվածը հետաքրքրված կլինի դեպի Ջերմուկ չվերթների իրականացմամբ:

- 12) Օդանավակայանի կառուցման այլընտրանքային տարբերակը ուղղաթիռների կայանի կամ ուղղաթիռների վայրէջքի համար համապատասխան վայրի կառուցումն է, հատկապես, որ այն արդեն իսկ դիտարկվել է ԳՀ քաղաքաշինության նախարարության կողմից Ջերմուկի գլխավոր հատակագծի շրջանակներում: Պահանջարկի և մասնավոր հատվածի հետաքրքրվածության հետ կապված նույն նկատառումները վերաբերում են նաև այս գաղափարին: Այնուամենայնիվ, ուղղաթիռների կայանի կառուցման հետ կապված ծախսերը զգալիորեն ավելի փոքր են: Ելնելով այն հանգամանքից, որ Ջերմուկ ժամանող ուղղաթիռների թիվը անկասկած փոքր է լինելու, ենթադրվում է, որ դրանց ազդեցությունը և աղմուկի հետևանքով առաջացած անհարմարությունը շատ սահմանափակ կլինեն: Այդ իսկ պատճառով, Ջերմուկում ուղղաթիռների վայրէջքի հարթակի համար տեղի ընտրությունը առանձնապես բարդ չէ: Այն, ակնհայտորեն, չպետք է տեղակայվի բնության հատուկ պահպանվող տարածքների կամ բնակելի տարածքների հարևանությամբ: Ենթադրվում է, որ ուղղաթիռներով ժամանող այցելուներն, ամենայն հավանականությամբ, կլինեն առողջարանների վճարունակ հաճախորդները, ապա վայրէջքի հարթակը պետք է տեղակայվի առողջարաններից հնարավորինս մոտ: Այս առումով առաջիկա տարիների համար առաջարկվում է դիտարկել միայն ուղղաթիռադաշտի կառուցումը, ինչի համար չեն պահանջվի խոշոր ֆինանսական ներդրումներ: 2008 թվականին կատարված նախնական ուսումնասիրությունների արդյունքում ընտրված ուղղաթիռադաշտի դիրքը հնարավորություն կտա բացառելու կամ նվազագույնին հասցնելու քաղաքի վրայով իրականացվող ուղղաթիռային թռիչքները:
- 13) Վերջին մի քանի տարիների ընթացքում Հայաստանում անձնական ավտոմեքենաների թիվը կտրուկ աճել է: Քանի որ կանխատեսելի ապագայում Ջերմուկի այցելուները քաղաք են հասնելու ավտոճանապարհով, ուստի քաղաքում պետք է ապահովվի ավտոմեքենաների, ամենագնացների, միկրոավտոբուսների և այլ փոխադրամիջոցների համար նախատեսված բավարար քանակությամբ կանգառների առկայություն:
- 14) Հիմք ընդունելով առողջարանային ու հյուրանոցային սենյակների ներկա թիվը (մոտ 1000) և այն ենթադրությունը, որ զբոսաշրջային սեզոնին Ջերմուկ այցելողների 25%-ը կժամանի սեփական փոխադրամիջոցով, ենթադրվում է, որ բոլոր հյուրանոցային հաստատությունները միասին պետք է տրամադրեն առնվազն 250 մեքենայի կայանատեղի:
- 15) Ավելին, հաշվի առնելով թե՛ սեզոնին (այդ թվում նաև դահուկասպորտի սեզոնը) անկապվող մեկ օրով այցելող 1000 զբոսաշրջիկներին, պետք է նախատեսել լրացուցիչ ավտոկայանատեղեր փոքրածավալ ավտոբուսների, մեքենաների և այլ փոխադրամիջոցների համար: Անհրաժեշտ է նաև հաշվի առնել հաշմանդամ և տարեց վարորդների հնարավոր այցելությունները և, այդ առնչությամբ,

վերջիններիս համար նախատեսվող հարմարավետ կայանատեղերի հավելյալ տարածքները:

16) Չաշվի առնելով Ջերմուկի տեսականը, ակնկալվում է, որ քաղաքի փողոցներում կավելանա մոտոցիկլավարների թիվը: Այդ իսկ պատճառով, անհրաժեշտ է նախատեսել նաև մոտոցիկլետների կայանատեղեր օրվա ընթացքում հաճախորդների կողմից առավելագույնս այցելելի վայրերում: Այս վայրերի շարքին են դասվում մշակութային և ժամանցի վայրերը, համաձայն ջրերի աղբյուրները, ջրվեժի և ռեստորանների շրջակայքը:

17) Ջերմուկում այցելությունների թվի աճը անհրաժեշտություն կառաջացնի Ջերմուկը վայրի, Եղեգնաձորի, Մարտունու և Երևանի հետ կապող հասարակական տրանսպորտի ցանցի զարգացման: Նման ծառայությունների առկայությունը, ինչպես և այսօր, համաձայն համապատասխան ընթացակարգի, կպահանջի երթուղիների կազմակերպմամբ և շահագործմամբ զբաղվող ընկերությունների մրցույթ: Նախապատվությունը պետք է տրվի այն տրանսպորտային ընկերություններին, որոնք կառաջարկեն առավել տարողունակ, ժամանակակից, հարմարավետ և շրջակա միջավայրի պահպանության տեսանկյունից անվտանգ փոխադրամիջոցներ:

18) Անհրաժեշտ է նաև հաշվի առնել տրանսպորտային ընկերությունների կողմից բարձրորակ ծառայություններ մատուցելու կարողությունն ու ցանկությունը. այդպիսիք են օրինակ, ինտերնետում զետեղված ժամանակացույցը և ինտերնետով տոմսեր պատվիրելու հնարավորությունը, կանգառներում տարբեր լեզուներով տեղեկատվության մատչելիությունը, տոմսերի ծկուն համակարգը, դրանց ձեռքբերման դյուրինության հնարավորությունները, անգլերեն լեզվին տիրապետող անձնակազմի և օպերատորների, հաշմանդամ հաճախորդների համար հարմարությունների, ամրագրումների առկայությունը, և փոխադրամիջոցների բարձր չափանիշներին համապատասխանող մաքրությունը:

19) Երթուղիների արդյունավետ գործունեությունը ապահովելու նպատակով անհրաժեշտ կլինի տրամադրել ֆինանսավորում համայնքային բյուջեյից:

20) Ներկայումս Ջերմուկում և դրա շրջակայքում տեղացիների համար գործում են երեք միկրոավտոբուսային երթուղիներ: Չի ակնկալվում, որ օտարերկրացի զբոսաշրջիկները կօգտվեն տեղի հասարակական տրանսպորտի ծառայություններից, քանի որ նրանց մեծ մասն այցելելու և ժամանակն անց է կացնելու առողջարաններում և դրանց հարակից տարածքներում:

21) Ջերմուկ քաղաքը զբոսաշրջային կենտրոն հայտարարելու մասին ՀՀ կառավարության որոշման մեջ առաջարկվում է նաև քաղաքն ապահովել էլեկտրական հոսանքով գործող տրանսպորտով: Սա կարող է իրականացվել զբոսաշրջիկների համար հարմար դանդաղընթաց էլեկտրական ավտոտրանսպորտի միջոցով, այցելուներին հնարավորություն ընձեռնելով

ճանապարհորդել քաղաքում, ինչպես նաև դեպի նրա սահմաններից դուրս գտնվող տարբեր վայրեր: Այս ծառայությունը չպետք է կրկնի տեղական հանրային տրանսպորտի այլ տարբերակների երթուղիները:

22) Առաջարկվող միջոցառումներն են՝

- ա. վերանորոգել և պատշաճ վիճակում պահել Երևան – Ջերմուկ մայրուղու որոշակի հատվածները, մասնավորապես, Երասխավանի և Տիգրանաշենի, Չիվա և Արենի գյուղերի, Արփիի ու Եղեգնաձորի միջև ընկած հատվածները,
- բ. ապահովել Երևան – Ջերմուկ ճանապարհի ողջ երկայնքով ճանապարհանշանների պատշաճ և գործող համակարգ (անգլերեն, ռուսերեն և հայերեն լեզուներով), որոնք տեղեկություններ կտրամադրեն ուղղության և հեռավորության վերաբերյալ,
- գ. մշակել երկաթուղային և ավտոճանապարհային երթուղիների հանգույցներ՝ տրանսպորտի մասին ազգային ռազմավարության համաձայն (այն դեպքերում, եթե երկաթգծի կառուցումն ու շահագործումը կհամարվի իրագործելի,
- դ. նախաձեռնել օդանավակայանի և/կամ ուղղաթիռային կայանի կառուցման հնարավորությունների գնահատում, այդ թվում նաև կլիմայի ուսումնասիրություն, պահանջարկի և արժեքի գնահատում,
- ե. պահանջարկի աճին զուգընթաց մշակել հավելյալ ավտոկայանատեղերի (միկրոավտոբուսների, ավտոմեքենաների, հեծանիվների և այլ փոխադրամիջոցների համար) կառուցման պլան՝ որպես Ջերմուկի զարգացման կառավարման ռազմավարության մաս,
- զ. պահանջարկի աճին զուգընթաց մշակել Ջերմուկն այլ քաղաքների հետ կապող հանրային տրանսպորտային ուղիղ հնարավորությունների ընդլայնման պլան՝ որպես Ջերմուկի զարգացման կառավարման ռազմավարության մաս:

3. Արդիականացնել Ջերմուկի հեռահաղորդակցության միջոցները

1) Ջերմուկի՝ որպես զբոսաշրջային կենտրոնի, զարգացումը կպահանջի, որ քաղաքն ունենա բարձրորակ, հուսալի և արդյունավետ հեռահաղորդակցության գծեր: Հեռահաղորդակցության բարելավումը, հիմնականում գյուղական համայնքներում ինտերնետ կապի մատչելիությունը, նույնպես հանդիսանում է ՀՀ կառավարության առաջնահերթ խնդիրներից մեկը, ինչպես նշված է ՀՀ կառավարության 2008թ. գործունեության ծրագրում: Այն նաև Եվրամիության Եվրոպական հարևանության քաղաքականության գործողությունների ծրագրում սահմանված խնդիրներից է. Առաջընթաց Տեղեկատվական Հանրության գործիքների մշակման և օգտագործման ոլորտում:

2) Քաղաքն ունի արբանյակի միջոցով ապահովվող ինտերնետ կապ, չնայած դրա հուսալիությունն ու արագությունը չեն համապատասխանում պահանջվող չափանիշներին: Քաղաքում ինտերնետ կապի որակը նույնպես բավարար չէ. միայն մի քանի առողջարաններ և քաղաքապետարանն ունեն ինտերնետ կապ, ամենայն հավանականությամբ, դրա թանկ և անորակ լինելու պատճառով: Ինտերնետ կապ ունեցող շենքերից յուրաքանչյուրում այն միացված է ընդամենը մեկ կամ երկու համակարգիչների, չնայած այն պետք է մատչելի լիներ մնջասենյակներում և, ցանկալի է, անլար կապի միջոցով:

3) Դյուրանոցային հաստատությունների և զբոսաշրջային այլ ծառայություններ մատակարարողների արդյունավետ գովազդի և հաճախորդների հարցումներին շուտափույթ կերպով արձագանքելու հնարավորության համար անհրաժեշտ է շուրջօրյա և հուսալի ինտերնետ կապի առկայությունը: Սրա ամենահարմար տարբերակը կլինի հիմնական մայրուղուց օպտիկական մալուխի անցկացումը, այնուհետև ինտերնետ ծառայություններ տեղական մատուցողների խրախուսումը, որպեսզի նրանք քաղաքում մատուցեն որակյալ ծառայություններ:

4) Անորակ մալուխներից խուսափելու համար, WiMax տեխնոլոգիան կիրառող օպերատորները պետք է խրախուսվեն և, անհրաժեշտության դեպքում, ստանան պետական աջակցություն:

5) Քաղաքում ինտերնետային ծառայությունների զարգացումը կխրախուսի տեղի տնտեսվարող սուբյեկտներին առավել հաճախ կիրառելու տեղեկատվական տեխնոլոգիաներ: Սա կարող է և պետք է ներառի ինտերնետային և իրական ժամանակի ռեժիմում հյուրանոցային ծառայությունների պատվերների ընդունման տարբերակներ, պլաստիկ քարտերի միջոցով վճարումների ընդունման առավել լայն հնարավորություն և վեբ-տեխնոլոգիաների առավել լայն կիրառում: Դա կխթանի նաև ինտերնետ սրճարանների հիմնումը, ինչը մատչելի հնարավորություններ կտրամադրի տեղացիներին:

6) Զբոսաշրջիկներն էլ ավելի հաճույքով կայցելեն Ջերմուկ, եթե վստահ լինեն, որ կունենան արտաքին աշխարհի հետ անընդհատ կապի հնարավորություն:

7) Չնայած Ջերմուկը գտնվում է և ՎիվաՍելի և Բիլայնի բջջային հեռախոսակապի ծառայությունների ծածկույթի տարածքում, քաղաքում կան կետեր, որտեղ ռադիոծածկույթը թույլ է: Ցամկակի կլիմեր բջջային հեռախոսակապի երկու մատակարարների կողմից ռադիոծածկույթի որակի գնահատումը՝ առկա խնդիրները վերացնելու նպատակով:

8) Առաջարկվող միջոցառումներն են՝
ա. անցկացնել հիմնական մայրուղուց քաղաք մտնող օպտիկական մալուխ և հիմնել WiMax ծառայություններ՝ ձեռներեցների և անհատներին արագընթաց ինտերնետ կապ տրամադրելու նպատակով,
բ. հյրախուսել իրական ժամանակի ռեժիմում պլաստիկ քարտերով վճարումների համար անհրաժեշտ հարմարությունների առավել լայն հնարավորությունների ստեղծումը և դրանց կիրառումը,
գ. Ապահովել բջջային հեռախոսակապի բարելավված որակ:

4. Զարգացնել բուժական ու առողջապահական ծառայությունները

1) Կարևոր է, որ Ջերմուկը՝ որպես «առողջ և ակտիվ կենսակերպի» կենտրոն, առողջապահական ծառայությունների առավել ընդգրկուն շրջանակ տրամադրի զբոսաշրջիկներին, ինչը թույլ կտա վերջիններին զգալու առավել մեծ

հոգածություն և պաշտպանվածություն պատահարների կամ արտակարգ իրավիճակների դեպքում: Առողջապահական բարելավված ծառայություններից կշահի նաև տեղական համայնքը: Դր կառավարությունն իր գործունեության 2008թ. ծրագրում սահմանում է, որ առողջապահական ծառայությունների (հիվանդանոցների և բուժ. աշխատողների) որակն ու մատչելիությունը, հատկապես մարզերում, պետք է համապատասխանեն միջազգային չափանիշներին: Սա արտացոլված է նաև Եվրամիության Եվրոպական հարևանության քաղաքականության 2007-13թթ. գործողությունների ծրագրում՝ առողջապահական հատվածի բարեփոխում:

2) Չնայած այն բանին, որ Ջերմուկն ունի պոլիկլինիկա, որն էլ վիճակի է ցուցաբերել առաջին բուժօգնություն, ներկայումս այնտեղ չկա հիվանդանոց, որը կկարողանար բուժօգնություն ցուցաբերել առավել լուրջ վնասվածքների դեպքում: Նման բուժօգնության հնարավորություն առաջարկող մոտակա քաղաքից (տվյալ դեպքում Երևանից) մի քանի ժամվա ճանապարհի հեռավորության վրա գտնվող ցանկացած զբոսաշրջային կենտրոնում նման հաստատության բացակայությունը իրականում մեծ խնդիր է հանդիսանում: Ջերմուկը՝ որպես առողջ և ակտիվ կենսակերպ փնտրող մարդկանց համար նախատեսված զբոսաշրջային կենտրոն, մտադիր է առաջարկել գործունեության այնպիսի տեսակներ (օրինակ, դահուկային սպորտ և լեռնագնացություն), որոնք վնասվածներ ստանալու լուրջ սպառնալիք են ներկայացնում: Չափազանց կարևոր է ունենալ հիվանդանոց, որտեղ առկա կլինեն համապատասխան անստորոշիչ (օրինակ, ռենտգեն սարքավորում) և բուժական (օրինակ, վիրաբուժություն և անհրաժեշտ դեղորայք) սարքավորումներ և հարմարություններ:

3) Պետք է հնարավոր լինի առաջին բուժօգնությունը ստանալ նաև դահուկային ճուպանուղու տարածքում, վերջինիս աշխատանքային ժամերի ընթացքում բազմապրոֆիլ բուժօռնություններով և սարքավորումներով լիարժեքորեն հագեցած շտապ օգնության մեքենայի առկայությամբ, որը կկարողանա հիվանդներին հասցնել Ջերմուկի հիվանդանոց կամ անմիջապես Երևանի հիվանդանոցներ:

4) Ջերմուկն ունի ատամնաբուժական կենտրոններ, սակայն դրանց կողմից առաջարկվող ծառայությունների շրջանակը սահմանափակ է: Ատամնաբուժական առավել զարգացած ծառայությունները պետք է մատչելի լինեն կամ գոյություն ունեցող կլինիկաներում կամ առաջարկվող հիվանդանոցում:

5) Ներկայումս Ջերմուկը չունի ակնաբույժ: Չնայած սա չափազանց կարևոր չէ, սակայն դրա առկայության հնարավորությունը պետք է դիտարկվի հետագայում, քանի որ ժամանակի ընթացքում Ջերմուկ այցելողների թիվը ավելի է մեծանալու:

6) Գնահատումն իրականացնելիս հետազոտող խումբը չի այցելել դեղատներ: Պետք է իրականացվի դրանցում առկա դեղերի որակի, բազմազանության և մատչելիության վերլուծություն: Հայաստանում գրանցված դեղորայքների ցանկի հիման վրա:

7) Առաջարկվող միջոցառումներն են՝

ա. զարգացնել Ջերմուկի առողջապահական հաստատությունները և սարքավորումները՝ պատահարների դեպքում և արտակարգ իրավիճակներում ծառայություններ տրամադրելու նպատակով, մասնավորապես, մասնագիտացված դահուկային սպորտով զբաղվելու ժամանակ հնարավոր վնասվածքների ստանալու դեպքում,

բ. քաղաքում հիմնել մասնագիտացված ատամնաբուժական և ակնաբուժական կլինիկաներ,
գ. դահուկային սպորտի համալիրն ապահովել վերապատրաստված բուժանձնակազմով և շտապ օգնության մեքենայով:

5. Որոշել զարգացման ծրագրի շրջանակներում ստեղծվելիք նոր աշխատատեղերի հնարավոր քանակը և առկա ու հնարավոր աշխատողների համար ապահովել համապատասխան ու մատչելի բնակարանային պայմաններ

1) Ներկայում Ջերմուկի բնակարանային տնտեսությունը բավարարում է քաղաքի բնակիչների պահանջները: Սակայն գոյություն ունեն բնակարանային տնտեսության վիճակին վերաբերող որոշ խնդիրներ, որոնք կարող են լուրջ խոչընդոտներ առաջացնել այն դեպքում, երբ Ջերմուկը պատրաստվում է ընդունելու զբոսաշրջիկների ավելի մեծ հոսք:

2) Չնայած բնակիչների ներկա, ինչպես նաև 1000 նոր աշխատատեղերի առաջարկվող վերանայված թվերին, ինչն անմիջականորեն կապված է զբոսաշրջության ոլորտի հետ, բնակարանային տնտեսության ծավալը բավարար է, այնուամենայնիվ, այն հեռու է անհրաժեշտ այն ծավալից, որը կպահանջվի Ջերմուկում զբոսաշրջության արդյունաբերության ընդլայնման դեպքում: Չնայած դժվար է տվյալներ ձեռք բերել բնակարանների առկա թվի վերաբերյալ, սակայն դրանք բավարար չեն մոտավորապես 4000 նոր աշխատողների կեցության հարցը լուծելու համար:

3) Որպես զարգացման կառավարման ռազմավարության մաս, անհրաժեշտ է նախաձեռնել հետազոտություն, որը, առաջին հերթին, կգնահատի բնակարանային տնտեսության ներկա իրական առաջարկը: Անհրաժեշտ են ճշգրիտ տվյալներ, թե քանի բնակարանային միավոր գոյություն ունի, դրանցից քանիսն են զբաղված, քանիսն են պիտանի դրանցում ապրելու համար, և քանիսն են տարվա ընթացքում վարձակալվում: Այս, հաշվի առնելով ներկայիս զբաղվածության մակարդակը, անհրաժեշտ է որոշել զբոսաշրջության արդյունաբերության զարգացման և զբաղվածության մակարդակի աճի տարբեր սցենարների պարագայում բնակարանային պահանջարկը:

4) Խնդիրը ավելի է բարդանում այն փաստի հիման վրա, որ սեզոնային աշխատողների համար տեսականորեն գոյություն ունեցող և ներկայում դատարկ բնակարանների մեծ մասը հանդիսանում են երևանում կամ արտասահմանում (հաճախ Ռուսաստանում) բնակվող անհատների սեփականություն: Այս մարդկանց գտնելու հավանականությունը չափազանց դժվար է դարձնում վարձակալման կամ վաճառքի համար առկա բնակարանների թվի ճշգրիտ հաշվարկը: Այդ սեփականատերերի բացակայությունը մեկ այլ խնդիր է առաջ բերում: Ջերմուկում տարիներ շարունակ չբնակվող սեփականատերերի սեփականություն հանդիսացող բնակարաններն ամենայն հավանականությամբ բարձրորդի վիճակում են: Այդ իսկ պատճառով, նույնիսկ այն բնակարանները, որոնք տեսականորեն ենթակա են վարձակալության, կպահանջեն վերանորոգում և զգալի ներդրում: Անհրաժեշտ է գտնել մասնավոր սեփականություն հանդիսացող բնակարանային յուրաքանչյուր միավորի սեփականատիրոջ կորդինատները: Հարկավոր է նաև դիտարկել լքված շինությունների շարունակական սեփականության անշահավետ

լինելու հանգամանքի և փաստացի բնակեցման համար այդ անշարժ գույքի ձեռքբերման գործում հետաքրքրված անհատների խրախուսման համակարգը:

5) Ջերմուկում բնակարանների վարձակալության արժեքը բացառիկ թանկ է: Վարձակալողները զբոսաշրջային թե՛ սեզոնին մեկ գիշերվա համար հաճախ վճարում են 80-100 ԱՄՆ դոլարին համարժեք 33 դրամ, մինչդեռ ամսական վարձավճարներ իրականում գոյություն չունեն: Խնդիրն է ավելի է բարդանում, երբ բնակարանների նույնիսկ մի քանի ամիս շարունակ վարձակալված չլինելու պարագայում, քչերն են համաձայնվում իջեցնել նախնական գինը: Այս երկու գործոնների համադրումը կացարան գտնելը դարձնում է չափազանց բարդ, հարկադրում է աշխատողներին առավել բարձր աշխատավարձ պահանջելու, ինչը և առողջարանային արդյունաբերությունը ծախսերի մասով դարձնում է նվազ մրցունակ: Աշխատողների նախատեսվող ներհոսքի արդյունքում աճող պահանջարկի պարագայում, ամենայն հավանականությամբ, վարձակալման արժեքը նույնիսկ ավելի կաճի: Անհրաժեշտ է ներդնել ամսական վարձակալության հնարավորությունների համակարգ, հատկապես սոզոնային այն աշխատողների համար, ովքեր Ջերմուկում են ապրելու տարվա մեջ ընդամենը երեք ամիս: Միևնույն համակարգը պետք է գործի ոչ թե՛ սեզոնին բնակարանային միավորների վարձակալության դեպքում (թերևս նվազեցված արժեքի տեսքով) կրճատելու համար ոչ թե՛ սեզոնին դատարկ բնակարանային միավորների թիվը:

6) Վերջապես, մատչելի բնակարանային տնտեսության առաջարկի աճի տեմպերի սահմանումը դեռևս մնում է բարդ խնդիր, քանի որ առանց նախնական զննհատման տվյալների դժվար է կանխատեսել զբոսաշրջիկների ժամանումների և պահանջվող աշխատողների առումով քաղաքի աճի տեմպերը: Պարզապես, մեծ թվով բնակարանային միավորների կառուցումը, որոնք հավանաբար տարիներ շարունակ կմնան չբնակեցված, դժվար թե քաղաքի համար շահավետ լինի, քանի որ դրա արդյունքում տեղանքը էլ ավելի կլցվի բարձրորդի վիճակում գտնվող չօգտագործվող շինություններով:

7) Առաջարկվող միջոցառումներն են՝

- ա. որոշել, թե քանի աշխատատեղ է հնարավոր ստեղծել Ջերմուկում: Սա, երևի թե, լավագույնս կիրականացվի զարգացման տարբեր սցենարների վերլուծությամբ, որը կներկայացնի նոր աշխատատեղերի ստեղծման տարբեր սցենարներ, քանի որ դժվար թե հնարավոր լինի քիչ թե շատ ճշգրտությամբ կանխատեսել նոր աշխատատեղերի թիվը,
- բ. մշակել հավելյալ բնակարանային միավորների կառուցման ճկուն պլան, որը իրատեսական հաշվարկների առկայության դեպքում հնարավորություն կունենա արտացոլելու նոր աշխատատեղերի փաստացի թիվը,
- գ. կապ հաստատել քաղաքում բնակարանային յուրաքանչյուր միավորի սեփականատիրոջ կորդինատները,
- դ. ներդնել ամսական վարձակալության հնարավորությունների համակարգ, հատկապես այն սեզոնային աշխատողների համար, որոնք հավանաբար Ջերմուկում ապրելու են տարվա մեջ ընդամենը երեք ամիս,
- ե. Մշակել բնակարանային միավորների ոչ թե՛ սեզոնին վարձակալման մակարդակը խթանող համակարգ (երևի թե նվազեցված գնի կամ այլ խթանների

միջոցով) ոչ թե՛ սեզոնին բնակարանային դատարկ միավորների թիվը կրճատելու համար:

6. Բարելավել առկա ենթակառուցվածքները՝ ապամոնտաժման կամ վերանորոգման կարիք ունեցող շինությունների ապամոնտաժման կամ վերանորոգման միջոցով, բարելավել ճանապարհային նշանների համակարգը և քաղաքի փողոցների, մայթերի ու զբոսայգու ժամանակակից ու հաճելի տեսքը:

1) Միայն առողջարանների վերանորոգումն ու բարելավումը աննշան արդյունք կունենա, եթե չբարելավվի քաղաքի ենթակառուցվածքներն ու ընդհանուր տեսքը: Ջերմուկը տեղակայված է գեղեցիկ տեղանքում, սակայն թե ճուրհակները բարձունքից քաղաքին նայելիս, և թե մայրուղով Ջերմուկ մտնելիս, ակնհայտ է դառնում, որ ենթակառուցվածքները զգալի բարելավման կարիք ունեն:

2) Ջերմուկում կան գեղազիտական տեսանկյունից անհրապույր բավականին շատ դասարաններ: Քաղաքում, որը հպարտանում է իր մաքուր թարմ օդով և գրավիչ անտառներով, առկա են նաև այնպիսի շինություններ, որոնք կամ անավարտ են, կամ գտնվում են ծայրահեղ բարձրի լիճակում: Դրանց վառ օրինակ են հանդիսանում արդեն իսկ քննարկված ջրամբարի հարևանությամբ գտնվող առողջարանը և Ջերմուկ մտնելու ճանապարհի կողմերում կառուցած շինությունները, որոնք օգտագործվել են որպես թունելագործների կացարաններ Սևանա լիճ տանող ջրային թունելի կառուցման ընթացքում:

3) Անմխիթար վիճակում գտնվող որոշ շինությունների կառուցումն ավարտին հասցնելը կամ վերանորոգումը կնպաստի դրանք շահագործելի և գրավիչ դարձնելուն: Մնացած դեպքերում վերանորոգումը դժվար թե բավարար միջոց լինի, և շինությունները պարզապես ապամոնտաժման կարիք ունեն: Երկու տարբերակներն էլ ծախսատար են: Արժեքից բացի, մեկ այլ բարդություն կհանդիսանա չգործող ենթակառուցվածքի վերագնումը: Շինությունների մեծամասնությունը հանդիսանում է մասնավոր սեփականություն, որոնց սեփականատերերից շատերն այլևս Հանրապետությունում չեն բնակվում: Հաճախ սեփականատերերը պարապուրդի են մատնում իրենց սեփականությունը՝ սպասելով դրա զնի աճին, արտաքին տեսքի բարելավման և դրանով իսկ արժեքի մեծացման նպատակով առանց որևէ ներդրում կատարելու:

4) Կարևոր է որոշել այն պայմանները, որոնց դեպքում անշարժ գույքը ետ կգնվի մասնավոր սեփականատերերից, ինչպես նաև վերջիններին տրամադրվող ժամանակը բարձրի կամ շահագործման համար անպիտան դարձած սեփականությունը վերանորոգելու կամ վաճառելու համար: Այս ամենի մասին պետք է հստակ կերպով տեղեկացնել սեփականատերերին: Նման քաղաքականությունը հնարավոր կլինի կիրառել շինությունների շահագործման կանոնակարգերի միջոցով:

5) Հայաստանում գովազդային վահանակները հիմնականում նույն չափերն ունեն, անկախ այն բանից, թե որտեղ են տեղադրված. հիմնական մայրուղիների եզրքին, քաղաքների կենտրոնական մասերում, թե հանդարտ գյուղական տարածքներում: Քաղաքի մուտքի մոտ ոչ համամասն լայն վահանակներ են ողջունում Ջերմուկի այցելուներին: Ջերմուկի պես գրավիչ քաղաքում գովազդային վահանակները պետք է լինեն ավելի փոքր և, հնարավորության դեպքում, տեղադրվեն բուսականությունից մերկ վայրերում: Անհրաժեշտ է նաև իրականացնել գովազդման տեսակների որոշակի վերահսկողություն: Օրինակ, Ջերմուկի ճանապարհին օդու գովազդումը կհակասի առողջ կենսակերպի գաղափարին:

6) Գովազդային վահանակներից զատ կողմնորոշիչ նշանային համակարգը, որը զբոսաշրջության համար շատ ավելի կարևոր է, հիմնականում բացակայում է: Չկան վարորդներին և հետիոտներին դեպի հյուրանոցային հաստատություններ, ռեստորաններ, ժամանցի վայրեր և զբոսաշրջային ծառայություններ մատուցող հաստատություններ ուղղորդող ավտոտրեքետկայան և հետիոտն ճանապարհների նշաններ, ինչը զբոսաշրջիկների համար քաղաքում կողմնորոշվելը դարձնում է դժվար: Քաղաքն առաջին անգամ այցելողների համար առողջարանները, ճուրհակները, ջրվեժը կամ պատկերասրահը գտնելը բավականին դժվար է: Կողմնորոշիչ նշանների բացակայության արդյունքում նվազում է նշված վայրերի այցելուների թիվը և, հետևաբար՝ եկամուտը: Քաղաքապետարանը հիմնական ճանապարհների ողջ երկայնքով և տեսարժան վայրերում պետք է տեղադրի համապատասխանորեն և գեղազիտորեն մշակված նշաններ:

7) Ծանաչված կենտրոն դառնալու և առողջ ու ակտիվ կենսակերպի գաղափարախոսությամբ համապատասխանելու համար Ջերմուկը պետք է զբոսաշրջիկներին տրամադրի զբոսանքի համար հաճելի, մատչելի և հարմարավետ մթնոլորտ: Մայթերը պետք է լինեն հարթ և ունենան հենասայրակների համար նախատեսված թեքահարթակներ, փողոցները պետք է լինեն լուսավորված, խոտածածկ տարածքները պետք է լինեն խնամված, անհրաժեշտ է նաև հետիոտների համար տեղադրել նստարաններ:

8) Առաջարկվող միջոցառումներն են՝

ա. սահմանել այն պայմանները, որոնց դեպքում անշարժ գույքը ետ կգնվի մասնավոր սեփականատերերից, ինչպես նաև սահմանել, թե որքան ժամանակ է տրվում վերջիններին բարձրի կամ շահագործման համար անպիտան դարձած սեփականության վերանորոգման կամ վաճառքի համար: Անհրաժեշտ է այս ամենի մասին հստակ կերպով տեղեկացնել սեփականատերերին (հավանաբար շինությունների շահագործման կանոնակարգերի մշակման միջոցով),

բ. տեղադրել դեպի տեսարժան վայրեր, ռեստորաններ և ժամանցի վայրեր ուղղորդող ավտոտրեքետկայան և հետիոտն ճանապարհների նշաններ,

գ. բացառել Ջերմուկի տեսլականին ու ցանկալի տեսքին հակասող գովազդումները (օրինակ, գովազդային վահանակները): Չհամապատասխանող գովազդը պետք է տեղադրվի առավել քիչ նկատելի վայրերում, կամ վերամշակվի այնպես, որ համապատասխանի Ջերմուկի ցանկալի տեսքին,

դ. վերանորոգել հետիոտն մայթերը, խճուղիները և հանրային վայրերը: Ապահովել փողոցային լուսավորություն,

7. Մշակել և ներդնել աղբի ու կոյուղու մաքրման ու վերամշակման մեթոդներ

1) Ջերմուկի հանքային ջրերի աղբյուրների աղտոտումը մեծ սպառնալիք է հանդիսանում քաղաքի՝ որպես զբոսաշրջային կենտրոնի, զարգացման համար, հատկապես հաշվի առնելով քաղաքի՝ որպես առողջ կենսակերպի կենտրոնի, բրենդի մշակման մտադրությունը:

2) Ջերմուկի կոյուղաջրերը չեն մաքրվում և թափվում են Արփա գետը: Կոյուղու ցանցի մի մասն անցնում է ջրամբարի տակով, իսկ կոյուղաջրերը ներհոսում են ջրամբարը և խառնվում ջրին: Սա, ակնհայտորեն, կործանարար է ջրամբարում որևէ ջրային սպորտի կենտրոն հիմնելու մտադրարության համար: Կոյուղու ցանցի մեծ մասը հնացած է:

3) Ջերմուկի՝ որպես զբոսաշրջային կենտրոնի զարգացման նպատակի համար, չափազանց կարևոր է հիմնել կոյուղաջրերի մաքրման նոր կայաններ, որպեսզի բացառել չմաքրված կոյուղաջրերի արտահոսքը դեպի գետ:

4) Աղբի մաքրման հնարավորությունների բացակայության պարագայում օդի աղտոտումը նույնպես հավանական է, չնայած այն չի գնահատվել: Առանց համապատասխան պահպանության՝ թունավոր քիմիատնեղը կարող են թափանցել ստորերկրյա ջրերի մեջ և աղտոտել աղբյուրներն ու ջրային հոսանքները:

5) Անհրաժեշտ է գնահատել ներկայիս աղբի հավաքման և մաքրման կայանները, այնուհետև ձեռնարկել բացահայտված թերությունները լրացնելուն ուղղված միջոցառումներ: Դարձվել է կրճատել աղբագոյացման ծավալները ներդնելով աղբի վերամշակման կայաններ այն տեղերում, որտեղ կայանները կլինեն տնտեսական և բնապահպանական առումներով իրականացելի (դա կախված է նյութերը հասցնելու ճանապարհի հեռավորությունից):

6) Աղբի և կոյուղաջրերի սխալ կառավարման հնարավոր բացասական ազդեցությունը մարդկանց առողջության և շրջակա միջավայրի վրա ակնհայտ է: Գնարավոր հիվանդությունները կարող են զբոսաշրջիկների մոտ կասկած հարուցել քաղաքի համբավի վերաբերյալ, իսկ Ջերմուկի ջրերի հավանական վտանգավորության լուրը կարող է բացասական մեծ ազդեցություն կործին քաղաքի նկարագրի վրա: Այս հանգամանքին ավելանում է նաև վերը նշված առողջապահական հաստատությունների ներկայիս իրավիճակը, իսկ այցելուների հետագա ներհոսքը առավել կծանրաբեռնի պահանջվող չափանիշներին չհամապատասխանող համակարգը: Մարդկանց առողջության վրա ունեցած բացասական ազդեցությանը զուգահեռ, աղտոտված ջուրը կարող է նաև բացասաբար անդրադառնալ էկոհամակարգի վրա, ինչը նույնպես լուրջ խնդիր կդառնա առողջ ու ակտիվ կենսակերպ քարոզող քաղաքի համար:

7) Եվրամիության Եվրոպական հարևանության քաղաքականության 2007-13թթ. Գործողությունների ծրագիրն իր հիմնական նպատակներից մեկին համապատասխան, այն է, խրախուսել հետագա տնտեսական զարգացումը, ընդլայնել աղբատության հաղթահարմանն ուղղված քայլերը և սոցիալական ամբողջականությունը, այդպիսով նպաստելով կայուն զարգացման երկարաժամկետ նպատակին, այդ թվում նաև շրջակա միջավայրի պահպանությանը, սահմանում է կոնկրետ գործողություն՝ շարունակել գյուղատնտեսության, գյուղական ենթակառուցվածքի, ջրային ռեսուրսների, սոցիալական պաշտպանության և կրթության բարելավումը՝ որպես աղբատության հաղթահարման միջոց:

8) Առաջարկվող միջոցառումներն են՝

- ա. հիմնել կոյուղաջրերի մաքրման ժամանակակից կայաններ, այդ թվում նաև կոյուղու ցանցը (որպեսզի կանխարգելել կոյուղաջրերի ներթափանցումը ջրամբար),
- բ. գնահատել աղբի մաքրման ներկայիս մեթոդները՝ ստորերկրյա ջրերի աղտոտման սպառնալիքից խուսափելու նպատակով,
- գ. հիմնել աղբի և վերամշակման ենթակա նյութերի հաճախակի հավաքման համակարգ:

8. Գյուղատնտեսական արտադրանքը համապատասխանեցնել տեղական հյուրանոցների, ռեստորանների ու մանրածախ առևտրի կետերի պահանջներին, խրախուսելով բարձրորակ օրգանական արտադրությունն ու սննդի մշակման տեղական ավանդույթները

1) Անհրաժեշտ է վերակազմակերպել գյուղատնտեսական հատվածի գործունեությունն այնպես, որ հետագայում այն դառնա մեծ թվով ֆերմերների եկամտի աղբյուր: Ջերմուկի առողջարանային համալստի կենտրոն դառնալու ձգտումը գյուղատնտեսության հատվածին տալիս է բացառիկ հնարավորություն այդպիսին դառնալու:

2) Զնայած այն բանին, որ գյուղատնտեսության հատվածը ներկայումս հանդիսանում է Ջերմուկի գյուղական համայնքների անդամներից շատերի ապրուստի միջոցը, այն արդյունավետ չէ: Դրա հիմնական պատճառներն են շուկայի մասին իրազեկվածության ցածր մակարդակը և նման տեղեկատվության մատչելիության պակասը, ինչպես նաև արտադրության հատվածում մի շարք խոչընդոտների առկայությունը: Ներկայումս գյուղատնտեսական հատվածը չունի իր արտադրանքի ծավալներին բավարարող շուկա, և ունի չափազանց սահմանափակ տեղեկություններ ընդհանրապես այդ շուկայի գոյության մասին: Ջերմուկի գյուղատնտեսական արտադրանքը հիմնականում ներառում է մսամթերքը և կաթնամթերքը, իսկ մրգերի ու բանջարեղենի ոլորտում արտադրությունը սահմանափակ է: Ընդհանրապես գոյություն չունի բացառիկ որակի կամ առանձնահատուկ մթերքների արտադրություն: Անհրաժեշտ է գյուղատնտեսական արտադրանքը դարձնել բազմազան, ինչը ֆերմերներին կընձեռնի ողջ տարին եկամուտ ստանալու հնարավորություն: Մյուս խոչընդոտը գյուղատնտեսության մեքենայացման ոչ զարգացած վիճակն է, ինչը նշանակում է,

որ հատվածը, արտադրանքի ծավալի առումով, նույնիսկ ավելի նվազ արդյունավետ է, քան կարող էր լինել այլ հավասար պայմաններում:

3) Առաջին հերթին, անհրաժեշտ է գնահատել հյուրանոցային հաստատությունների կողմից գյուղատնտեսական արտադրանքի պահանջարկը, որպեսզի ֆերմերները տեղյակ լինեն, թե ինչ (մսամթերք, կաթնամթերք, միրգ ու բանջարեղեն), երբ և ինչ քանակությամբ է անհրաժեշտ արտադրել: Առավել ճշգրիտ պլանավորման և տեղեկատվության առավել արդյունավետ հոսքի ապահովման արդյունքում կաճի գյուղատնտեսական արդյունավետության մակարդակը:

4) Անհրաժեշտ է հիմնել զբոսաշրջային հաստատությունների և ֆերմերների միջև պահանջարկի և առաջարկի համակարգման կառույց, որը կտեղեկացնի սեզոնային կարիքների, առաքման պահանջների, փաթեթավորման և սննդի որակի վերաբերյալ: Հմարավոր է առավել սերտ համագործակցություն առողջարանների և առողջարանային արդյունաբերությունը օժանդակող ռեստորանների կողմից հատուկ հետաքրքրության խնդրի առարկա դեռևս չուսումնասիրված մթերքների շուրջ (ինչպիսին է, օրինակ, օրգանական և առանձնահատուկ բնամթերքը):

5) Տեղացի ֆերմերներին հատկացվող դրամաշնորհները կնպաստեն մեքենայացման կատարելագործմանը, պեստիցիդների և պարարտանյութերի արդյունավետ օգտագործմանը, ինչպես նաև մշակաբույսերի և կենդանիների համապատասխան տեսակների մասին տեղեկատվության ձեռքբերմանը: Այնուամենայնիվ, հնարավոր է, որ ամհատ ֆերմերներին տրվող դրամաշնորհները, վերջիններիս փոքրածավալ լինելու պատճառով, լինեն անարդյունավետ և անշահավետ: Այդ տեսանկյունից, շատ ավելի արդյունավետ կլինի, եթե դրամաշնորհը տրամադրվի որևէ կառույցի, օրինակ՝ գյուղատնտեսական ասոցիացիայի, որը և կապահովի իր անդամների կողմից սարքավորումների համատեղ օգտագործումը: Նման կառույցների խթանումը կարող է նաև բերել երկրորդային դրական արդյունքների, երբ ֆերմերները համոզվեն, որ բիզնեսի տեսանկյունից ընդհանուր գործունեությունը առավել շահավետ է (օրինակ, ընդհանուր արտադրության միջոցների, ապրանքանշանի, բրենդի կամ շուկայի վերաբերյալ իրազեկված լինելու հարցում կառույցի օգտակարության առումով):

6) Առաջարկվող միջոցառումներն են՝

ա. որոշել մսամթերքի, կաթնամթերքի, մրգի և բանջարեղենի շուկայական պահանջարկը,

բ. հիմնել զբոսաշրջային հաստատությունների և ֆերմերների միջև առաջարկն ու պահանջարկը համակարգող կառույց, որը կտեղեկացնի սեզոնային կարիքների, առաքման պահանջների, փաթեթավորման և սննդի որակի մասին,

գ. դիտարկել տեղացի ֆերմերին դրամաշնորհներ տրամադրելու հնարավորությունը, ինչը կնպաստի գյուղատնտեսության մեքենայացման կատարելագործմանը, պեստիցիդների և պարարտանյութերի օգտագործմանը, ինչպես նաև մշակաբույսերի և կենդանիների համապատասխան տեսակների մասին տեղեկատվության ձեռքբերմանը:

9. Ապահովել հանրային ծառայություններ՝ ուղղված համայնքի կենսամակարդակի ու սոցիալական միջավայրի բարելավմանը

1) Համայնքային հարմարությունները համայնքին տրամադրվող, կյանքի որակի բարելավման և անվտանգության ապահովման ծառայությունների լայն շրջանակ է: Դրանք ներառում են ոստիկանությունը և հրշեջ ծառայությունը, աղբահանությունը և համատիրություններն ու հանրային ենթակառուցվածքները:

2) Ներկայումս Ջերմուկի ոստիկանության բաժանմունքի գործունեությունը արդյունավետ է, ելնելով այն բանից, որ քաղաքում քրեական հանցագործությունների մակարդակը շատ ցածր է: Այնուամենայնիվ, քաղաքի բնակչության աճի և զբոսաշրջիկների ներհոսքի մեծացմանը զուգահեռ, ոստիկանության անձնակազմը, հավանաբար, ընդլայնման կարիք կունենան: Բաժանմունքը նաև պետք է դիտարկի ռուսերեն, անգլերեն և այլ լեզուների տիրապետող մասնագետների աշխատանքի ընդունելու հնարավորությունը այն դեպքերի համար, երբ զբոսաշրջիկներին անհրաժեշտ լինի նաև ոստիկանական ծառայություններից օգտվել: Ընդլայնման հնարավորության քննարկումը պետք է դիտարկել որպես առաջարկվող զարգացման կառավարման ռազմավարության մաս:

3) Ջերմուկ այցելող զբոսաշրջիկների թվի աճի հետ զուգահեռ, կարևոր է, որ քաղաքն ունենա ժամանակակից ու սարքավորումներով հագեցած հրշեջ ծառայություն, որն ի վիճակի կլինի անմիջապես արձագանքելու համայնքի կարիքներին և հրդեհը մարել ժամանակակից սարքավորումներով: Զբոսաշրջիկների և տեղացիների անվտանգության համար քաղաքապետարանը պետք է նաև ապահովի նոր ծավալվող շինարարության համապատասխանությունը հակահրդեհային անվտանգության չափանիշներին, հրդեհի պատճառով հնարավոր վնասվածքներից ու մահվան դեպքերից խուսափելու նպատակով: Ավելին, անհրաժեշտ է տեղադրել հրշեջ հիդրանտային համակարգ՝ հրշեջ ծառայության տեղակայման նպատակով: Նոր շինարարությունը, հավանաբար, կպահանջի հրշեջ ծառայության ընդլայնում, ինչը նույնպես պետք է հաշվի առնել զարգացման կառավարման ռազմավարության մեջ:

4) Ջերմուկի քաղաքապետարանը նախածեռնել է աղբահանության մի համակարգ, որը զգալիորեն կբարելավի քաղաքի ընդհանուր մաքրությունը և կնվազեցնի քաղաքի և շրջակայքի աղտոտվածության մակարդակը: Չնայած այն բանին, որ համակարգը նոր է ներդրվել, քաղաքապետարանը պետք է ապահովի համակարգի կիրառումը Ջերմուկի ողջ տարածքի վրա, որի դեպքում միայն քաղաքը կպահպանի իր մաքուր և առողջ կենսակերպը զբոսաշրջիկների, ինչպես նաև բնակիչների առողջության ու անվտանգության համար: Ջերմուկը պետք է նաև դիտարկի աղբի վերամշակման հնարավորությունները՝ երկարաժամկետ կայուն զարգացման հասնելու նպատակով, ինչը էլ ավելի կնպաստի քաղաքի բնական առողջարան լինելու հանգամանքին: Վերամշակման ծրագիրը կարող է հավելյալ եկամտի աղբյուր դառնալ քաղաքի համար՝ այլ առևտրային նպատակներով օգտագործման համար նյութերի վաճառքի միջոցով, ինչպես նաև համայնքային բնակչության և զբոսաշրջիկների շրջանում խրախուսել բնապահպանական

տրամադրվածությունը: Ջերմուկը պետք է ձեռնարկի այս նախաձեռնության իրականացման հնարավորությունների գնահատում՝ որոշելու, թե Ջերմուկի համատեքստում նախաձեռնությունն իրականացնելու համար ինչպիսի ներդրում է անհրաժեշտ, և արդյոք աղբի վերամշակման առաջարկվող սխեման կլինի տնտեսապես ու բնապահպանության առումով իրականացելիք:

5) Զաղաքաշինության լավագույն փորձը պահանջում է համայնքային մասնակցություն: Այնուամենայնիվ, Ջերմուկում քաղաքացիական մասնակցության ներկայիս մակարդակը դեռևս ցածր է: Համայնքային մասնակցությունը, ամբողջականությունը և ընդհանուր համայնքային կյանքի որակի բարելավումը ապահովելու համար հանրային ծառայությունները պետք է մշակվեն որպես զարգացման ծրագրերի մի մաս: Գոյություն ունեցող գրադարանները, մարզական համալիրը, զբոսայգիները և համայնքային կենտրոնները պետք է լինեն խնամված և, անհրաժեշտության դեպքում, համալրվեն՝ համայնքին լավագույնս ծառայելու նպատակով: Անհրաժեշտ է երեխաների համար ստեղծել խաղահրապարակներ և համայնքային հարմարություններ, քանի որ ներկայումս դրանք բացակայում են: Այդ ամենը կնպաստի ընտանիքների կյանքի որակի բարելավմանը և համայնքի երեխաների համար կապահովի ժամանցի համար անվտանգ միջավայր: Առաջին հերթին, այս հարմարությունները պետք է ծառայեն բնակիչներին ու բավարարեն նրանց կարիքները, չնայած, որ զբոսաշրջիկները նույնպես կարող են դրանցից օգտվել:

6) Առաջարկվող միջոցառումներն են՝

ա. ստեղծել ժամանակակից ու սարքավորումներով հագեցած շուրջօրյա իրչեջ ծառայություն՝ վերապատրաստված անձնակազմով և համապատասխան փոխադրամիջոցներով ու սարքավորումներով,

բ. ստեղծել երեխաների համար ժամանակակից ու անվտանգ խաղահրապարակներ բնակելի տարածքներում և դրանց շրջակայքում,

գ. հիմնել համայնքային կենտրոններ՝ քաղաքացիական ակտիվությունը խթանելու և համայնքային միջոցառումների/գործունեության համար տարածք ապահովելու նպատակով,

դ. բարելավել Ջերմուկում կրթություն ստանալու և աշխատանք գտնելու ընդհանուր հնարավորությունները՝ նոր տեխնոլոգիաների ուղորտում առավել բարձրորակ ուսուցման և համայնքի անդամների համար զբոսաշրջության արդյունաբերության վերաբերյալ կարճատև դասընթացների կազմակերպման միջոցով,

ե. բարելավել ներկայիս բնակարանային ֆոնդի որակը՝ շինությունների շահագործման կանոնակարգերի և նմանատիպ այլ պահանջների սահմանման միջոցով:

10. Զբոսաշրջային շուկայում ներկայացնել և գովազդել Վայոց Ձորի ու Ջերմուկի պատմամշակութային ժառանգությունը որպես Ջերմուկի տեսլականի օժանդակ տարր

1) Չնայած այն հանգամանքին, որ Ջերմուկը հարուստ է բազմապիսի տեսարժան վայրերով, այնտեղ շատ չեն հանրապետական նշանակության պատմամշակութային հուշարձանները: Այդ իսկ պատճառով, քաղաքը պետք է

հավատարիմ մնա իր «առողջ և ակտիվ կենսակերպի կենտրոն» լինելու ապրանքանշանին: Ջերմուկի մշակութային ժառանգությունը գովազդելու առաջին քայլը կլինի ապահովել ժառանգության ճանաչումը այցելուների շրջանում և վերջիններիս համար պարզորեն ներկայացնել դրա նշանակությունը: Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր գործունեության 2008թ. ծրագրում կարևորել է նաև ողջ բնակչության համար մշակութային ժառանգության մատչելիությունը:

2) Ջերմուկում պահպանության տակ գտնվող շենքերը զարգացնելու համար քաղաքապետարանը պետք է ներդնի կարգ, որի համաձայն կոփտարկվեն տարածքում գտնվող բոլոր պատմամշակութային հուշարձանների վերանորոգման կարիքները՝ դրանց պատմական միջավայրի լավագույնս պահպանության նպատակով:

3) Ջերմուկում ջրաբանական հուշարձանները և գրավչության օբյեկտները առաջնային դեր ունեն և ընդգրկում են Ջերմուկ հանքային ջուրը, առողջարանները, ջրվեժը և լիճը: Ջրաբանական գրավչության օբյեկտները անհրաժեշտ է զարգացնել ողջ քաղաքում՝ հիմնական տեսարժան վայրերի թեման ամրապնդելու նպատակով, քաղաքում շատրվանների ստեղծման, ճանապարհային կողմնորոշիչ նշանների տեղադրման, յուրաքանչյուր վայրում բրոշյուրների և մեկնաբանությունների առկայության ապահովման և լրացուցիչ ջրային գործունեության տեսակների ներմուծման միջոցով: Պատմամշակութային արժեք կրող վայրերից մեկը, օրինակ, արքունի լոգարանները, մեծապես կշահեր նման նորամուծություններից: Ժամանցի ջրային հարմարությունների զարգացումը կնպաստեր Ջերմուկում ջրաբանական մշակույթի տարածմանը և նոր հնարավորություններ կտրամադրեր բնակիչներին, միևնույն ժամանակ օժանդակելով զբոսաշրջային արդյունաբերությանը:

4) Համայնքային բնակչության համար հուշարձաններն ու կոթողները հպարտության առարկա են հանդիսանում: Որոշ առումներով դրանք նման են հասարակական արվեստի գործերի և կերտում են քաղաքի ոճն ու բնույթը:

5) Պատկերաբառի դերը կարող է ընդլայնվել ցուցահանդեսների կամ միջոցառումների կազմակերպման միջոցով, որոնք, եթե կազմակերպվեն զբոսաշրջային թեժ սեզոնին, կարող են հետաքրքրել զբոսաշրջիկներին: Գոյություն ունեցող կինոթատրոնը վատթար վիճակում գտնվելու պատճառով չի կարող ներկայումս գործարկվել: Այնուամենայնիվ, հնարավոր է, որ համայնքը հետաքրքրված լինի այն որպես կինոթատրոն կամ թատրոն վերաշահագործելու մեջ: Ընդհանուր առմամբ, անհրաժեշտ է ձգտել բարելավել բնակիչների կյանքի որակը և ընդլայնելու նրանց հետաքրքրող մշակութային միջոցառումների հնարավորությունները: Կարելի է դիտարկել քաղաքում Ջերմուկի՝ որպես առողջարանային կենտրոնի, պատմությունը և խորհրդային տարիներին կատարված ուսումնասիրությունների արդյունքները ներկայացնող մշակութային թանգարան հիմնելու հնարավորությունը:

6) Նպատակային միջոցառումների կազմակերպումը Ջերմուկի մշակութային ժառանգության ներկայացման լավագույն ձևն է: Ջերմուկը ներկայումս պարբերաբար իրականացնում է ձմեռային փառատոն, որը կարող է ընդլայնվել զբոսաշրջիկներին գրավելու, ինչպես նաև բնակիչների համար ամենամյա հետքերի միջոցառում դառնալու նպատակով: Փառատոնի նկատմամբ զբոսաշրջիկների հետաքրքրությունը մեծացնելու համար անհրաժեշտ է, որ այն

ունենա քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվող իր առանձին վեբ-կայքը, և որ տարվի ձեռնային զբոսաշրջության առավել ինտենսիվ շուկայավարություն: Նման ծավալուն փառատունը հնարավոր է, որ ստեղծի լրացուցիչ ժամանակավոր աշխատատեղեր՝ նախապատրաստական աշխատանքների և կառավարման աշխատանքների համար պահանջվող լրացուցիչ ծառայությունների ձևով:

7) Այս ծավալուն ամենամյա միջոցառմանը զուգահեռ, քաղաքապետարանը պետք է համագործակցի տեղի արվեստի և սպորտի դպրոցների, պատկերասրահի և այլ տեղական կազմակերպությունների հետ՝ բնակիչների և զբոսաշրջիկների համար պարբերական մշակութային միջոցառումների և ներկայացումների կազմակերպման նպատակով: Նման միջոցառումների իրականացման համար քաղաքապետարանը պետք է նաև հոգ տանի քաղաքում կամ դրա շրջակայքում համապատասխան տարածքներ (փոքր բացօթյա թատրոններ և բեմեր) նախապատրաստելու համար:

8) Ի հավելումն բնակիչների համար մշակութային միջոցառումների հնարավորությունների ստեղծման, զբոսաշրջային փարձառությունները հարստացնող և Ջերմուկի մշակույթը պահպանող մշակութային ժառանգության ուղղություններից մեկը կլինի Ջերմուկում ձեռքի աշխատանքի և արհեստագործության զարգացումը: Ձեռագործ իրերի վաճառքը, ինչպես նաև տարբեր արհեստանոցների այցելությունը կարող են եկամտի մոր աղբյուր դառնալ համայնքի բնակչության համար, միևնույն ժամանակ զբոսաշրջիկներին մշակութային այլ գրավչությունների հնարավորություններ տրամադրելով: Մշակութային գործունեության տեսանկյունից կարևոր նման այցելությունները շահավետ կլինեն նաև տեղի բնակչության, մասնավորապես դպրոցականների համար, որոնց կտրամադրվի գործնական ուսուցման, ինչպես նաև տեղի մշակույթով հպարտանալու հնարավորություն: Եթե ձեռագործ աշխատանքները և արվեստի գործերը վաճառքի հանելու համար նախատեսվի առանձին տարածք, դա կարող է զբոսաշրջիկների համար դառնալ գրավչության մեծ օբյեկտ, իսկ եթե դրան գումարվի նաև առօրյա անհրաժեշտության պարագաների վաճառքը, ապա դա նաև շահավետ կլինի տեղի բնակչության համար:

9) Առաջարկվող միջոցառումներն են՝

- ա. հնարավորություններ ընձեռել համայնքի բնակչությանը ձեռքի աշխատանքի միջոցով եկամուտ վաստակելու համար՝ կազմակերպել զբոսաշրջիկների հետաքրքրություններին միտված ձեռքի աշխատանքի դասընթացներ, տրամադրել քաղաքում համապատասխան տարածք (շուկա) ձեռագործ աշխատանքների ցուցադրման և վաճառքի համար, որտեղ կլինեն նստարաններ, զուգարաններ, ծածկով սեղաններ և այլն: Շուկայում նաև պետք է ցուցադրվեն և վաճառվեն տեղի նկարիչների գործերը,
- բ. ընդգրկել պատկերասրահը զբոսաշրջության զարգացման գործընթացում զբոսաշրջության թե՛ սեզոնի տարբեր ցուցահանդեսների և միջոցառումների կազմակերպման միջոցով,
- գ. վերանորոգել «Արմենիա» հյուրանոցի շրջակայքում գտնվող արքունի լոգարանները, հանքային ջրերի ըմպելասրահը, Գնդեվանքի համալիրը և տեղադրել ծանոթագրական վահանակներ, ավտոերթնեկության ու հետիոտն ճանապարհային նշաններ,
- դ. տեղի բնակչության համար կազմակերպել ամենամյա միջոցառումներ՝ նվիրված իրենց մշակույթին ու արվեստներին: Այդ միջոցառումները կարող են նաև հետաքրքրել զբոսաշրջիկներին, այդուհանդերձ պետք է, առաջին հերթին, ուղղված լինեն տեղի բնակչությանը:

11. Պահպանել ու զարգացնել Ջերմուկին հարակից գյուղական ավանդական միջավայրը

1) Ջերմուկի գյուղական տարածքների զարգացումը չափազանց կարևոր դեր ունի Ջերմուկի՝ որպես չարտոտված բնական գոտու պահպանման, դրանով իսկ ակտիվ ու առողջ կենսակերպի համար գրավիչ վայր դառնալու հաջողության գործում:

2) Կիրճը Ջերմուկի առավել գրավիչ վայրերից մեկն է, որը, սակայն, ներկայումս անհրապույր տեսարան է ներկայացնում՝ իր չօգտագործվող արդյունաբերական շինություններով ու սարքավորումներով: Ջրվեժի մոտ գտնվող կամուրջը ներկայումս թվում է անապահով: Գետերն ու հոսանքները աղտոտված են և, հնարավոր է, որ դրանց մեջ են թափվում նույնիսկ կոյուղաջրերը: Անհրաժեշտ է մաքրել կիրճը՝ զբոսաշրջիկներին հնարավորություն ընձեռելով ըմբռնել բնության գեղեցկությունը: Ուրույն բնությունը և բուսականությունը ցուցաբերող զբոսանքի արահետների ստեղծումը կնպաստեր զբոսաշրջային փարձառությունը հարստացնելուն:

3) Չմայած այս ամենը չի համեմատվի արդյունաբերական գործարանների պատճառած աղտոտման հետ, սակայն կարևոր է ապահովել օդի մաքրությունը երկար տարիների կտրվածքով: Պետք է խստորեն կիրարկվեն փոխադրամիջոցների կողմից պատճառվող օդի աղտոտմանը վերաբերող օրենսդրությունն ու կանոնակարգերը:

4) Ջերմուկը շրջապատող բնությունն իր անտառներով շատ գրավիչ է, սակայն ներկայումս շատ քիչ միջոցառումներ են ձեռնարկվում անտառների պահպանության ուղղությամբ: Դեռևս Խորհրդային տարիներին սահմանվել են հատուկ պահպանվող տարածքներ, սակայն այսօր գոյություն չունի այդ պահպանությունն իրականացնող կառույց: Այս տարածքները պետք է հատուկ ուշադրության արժանացնել, քանի որ, զբոսաշրջային ճանաչված կենտրոն դառնալուն պես Ջերմուկն ու դրա շրջակայքը հյուրնկալելու են մեծ թվով զբոսաշրջիկներին:

5) «Առողջ և ակտիվ ապրելակերպի» գաղափարի շուրջ տարածքի ձևավորումը և զարգացումը խստորեն պահանջում է զարգացման կայուն մոտեցում: Այդ իսկ պատճառով, անհրաժեշտ է ձեռնարկել միջոցառումներ՝ ուղղված ներկա և ապագա հնարավոր խնդիրների լուծմանը: Ավելին, ջրերի պահպանությունը պետք է կազմակերպվի խստագույնս: Սարերի և լեռների լանջերի կառուցապատման ծավալները անհրաժեշտ է հասցնել նվազագույնին: Կիրճի տարածքում կառուցապատումը անհրաժեշտ է արգելել՝ տարածքի վնասումից խուսափելու համար: Անհրաժեշտ է պահպանել կենսաբազմազանությունը: Ավելին, այս վայրերում զբոսաշրջային հարմարություններ (օրինակ, լեռնագնացության ճանապարհներ) ստեղծելու ընթացքում անհրաժեշտ է չափազանց զգոն լինել բնապահպանության տեսանկյունից:

6) Ջերմուկ քաղաքը զբոսաշրջային կենտրոն հայտարարելու մասին ԳԳ կառավարության որոշման մեջ որպես զարգացման ծրագրի գերակա խնդիրների

իրականացման միջոցառում առաջարկվում է Ջերմուկում հիմնել Հայաստանի Հանրապետության բնության թանգարանի մասնաճյուղ: Սա կարելի է դիտարկել ապագայում, ինչը միանգամայն կհամապատասխանի Ջերմուկի շրջակայքում արգելանոց ստեղծելու մտադրությանը:

7) ՀՀ կառավարությունը 2008թ. ծրագրում բնապահպանության ոլորտում արձանագրում է հետևյալ նպատակները

- ա. շրջակա միջավայրի՝ մթնոլորտի, ջրերի, հողերի, ընդերքի, կենդանական և բուսական աշխարհի, այդ թվում՝ բնության հատուկ պահպանվող տարածքների վրա վնասակար ներգործությունների նվազեցումը և կանխարգելումը
- բ. ընդերքի և բնական պաշարների վերականգնման ու վերարտադրության նկատմամբ վերահսկողությունը
- գ. շրջակա միջավայրի վիճակի և հիդրոօդերևութաբանական վտանգավոր երևույթների դիտարկումների, ուսումնասիրությունների, կանխատեսումների, դրանց ազդարարման և արձագանքման ժամանակակից համակարգի ստեղծումը
- դ. շրջակա միջավայրի աղտոտման (ներառյալ՝ ռադիոակտիվ աղտոտման) կանխարգելումը, վտանգավոր քիմիական ու ռադիոակտիվ նյութերի և թափոնների կառավարումը, բնական և մարդածին ազդեցությունների կանխատեսման համակարգի զարգացումը,
- ե. բնապահպանական կրթության, դաստիարակության և իրազեկման ամբողջական ու միասնական ազգային համակարգի ստեղծումը,

8) Առաջարկվող միջոցառումներն են՝

- ա. մաքրել և բարեկարգել կիրճը. մասնավորապես ուշադրությունը դարձնել ջրվեժի շրջակայքը առավել գրավիչ, հասանելի և զեղազիտական տեսանկյունից հաճելի դարձնելու գործին,
- բ. ապահովել գետերի և հոսանքների պարբերական մաքրումը,
- գ. դիտարկել Ջերմուկը շրջապատող գյուղական տարածքները հետագայում արգելանոցի վերածելու հարցը, պաշտպանել բնությունը և կենսաբազմազանությունը, կանխարգելել քաղաքաշինական չափազանց զարգացումը այդ տարածքում, և մինչև ժամանակ այն մատչելի դարձնել հանրության համար,
- դ. վերանայել հողօգտագործումը՝ գյուղատնտեսական և պաշտպանված անտառների հողերի համապատասխան գոտիավորումը ապահովելու համար, ինչպես նաև ապագայում լեռնային գոտիները բացասական ազդեցությունից պաշտպանելու նպատակով:

12. Ջերմուկի զարգացման լիազորություններ և պատասխանատվություններ հանձնել տեղական ինքնակառավարման մարմիններին և ակտիվորեն ներգրավել համայնքը Ջերմուկի զարգացման գործընթացում՝ խրախուսելով մասնակցությունը ու արձագանք Ջերմուկի զարգացման կայունությունը ապահովելու նպատակով

1) Ջերմուկ քաղաքի զարգացումը հիմնականում կառավարվում է ՀՀ կառավարության մակարդակում: Ձարգացման և կառավարման գործունեության որոշ տարրերի պատասխանատվությունը անհրաժեշտ է հանձնարարել տեղական

ինքնակառավարման մարմիններին՝ տեղական ներդրումն ու կայունությունը ապահովելու նպատակով:

2) Պետական կառավարման բարելավումը ՀՀ կառավարության 2008թ. ծրագրում սահմանված է որպես առաջնահերթություն՝ զարգացնել արդյունավետ պետական կառավարումը, տեղական ինքնակառավարումը և համատեղ կառավարման մշակույթը: Այն սահմանում է, որ անհրաժեշտ է որդեգրել համատեղ կառավարման կանոններն ու սկզբունքները, ինչը նշանակում է պետական ռեսուրսների կառավարումը գործարարության կանոններով, շարունակաբար մեծացնելով գործողությունների արդյունավետությունն ու թափանցիկությունը: Կառավարության հաշվետվողականության համար խնդիրների և գործողությունների հստակ սահմանումը, և գործունեության գնահատումը պետք է դառնան հիմնարար կանոն: Անհրաժեշտ է ձգտել արձագանք ստանալ հասարակության կողմից պետական հատվածի մատուցած ծառայությունների որակի վերաբերյալ: Անհրաժեշտ է ստեղծել պետական և մասնավոր հատվածների միջև գործընկերություն:

3) Ուզանավարությունը նաև շեշտում է իշխանության ապակենտրոնացումը երևանից դեպի մարզեր՝ տեղական ինքնակառավարման մարմինների և տարածքային կառավարման մարմինների պատասխանատվության ծավալը մեծացնելու, համայնքային բյուջեների և հանրային ծառայությունների բարելավման նպատակով:

4) Չափազանց կարևոր է համայնքային ներգրավվածությունը՝ նախաձեռնության ոգով համայնքը ոգևորելու նպատակով: Քաղաքի զարգացման ազդեցությունը կրելու են ոչ միայն առողջարաններն ու արդյունաբերության հարակից ոլորտները, այլ նաև համայնքն ընդհանրապես: Համայնքը ներգրավելով գործընթացի առաջին իսկ փուլերում՝ համայնքի անդամների մոտ կստեղծվի ակնկալիքների հստակ ձևակերպում և հետագայում կնվազեցնի ծրագրի որոշ կետերի վերաբերյալ նրանց բողոքների հավանականությունը: Ավելին, համայնքը շատ հաճախ լավ մտահղացումներ է ունենում: Անհրաժեշտ է ներգրավել համայնքին թե՛ ծրագրման, և թե՛ իրականացման փուլերում՝ հանրային քննարկումների միջոցով, ինչը կնպաստի նրանց ոգևորությանը և թույլ կտա հասկանալու ռազմավարության հիմքում ընկած գաղափարը և դրա երկարաժամկետ նպատակները: Այս մտտեցումը միանգամայն համահունչ է ՀՀ կառավարության 2008թ. ծրագրին, որը հստակորեն սահմանում է աղքատության հաղթահարման ճանապարհին անապահով խավերի՝ տնտեսական և քաղաքացիական գործունեության մեջ ներգրավված անհրաժեշտությունը: ՀՀ կառավարությունը նաև մտադիր է ընդլայնել քաղաքացիական հասարակության մասնակցությունը պետական կառավարման ոլորտում և բարձրացնել պետական համակարգի մասին իրազեկության մակարդակը համայնքային խորհուրդներ ստեղծելու միջոցով:

5) Ջերմուկի զարգացումը գործընթաց է, որը սույն փաստաթղթում նշված արդյունքներին հասնելու համար անկասկած կպահանջի ավելի քան չորս տարի: Այդ իսկ պատճառով, կայունության ապահովումը չափազանց կարևոր գործոն է: Մյուս կողմից, այս ռազմավարությունը կմնա Ջերմուկի իշխանությունների թիվ մեկ առաջնահերթությունը, և նրանք կկարողանան հետևողականորեն իրականացնել այն, ինչ ծրագրվում է Ջերմուկի զարգացման համար:

6) Ներկայումս իշխանության նման ապակենտրոնացման գործընթացի ճանապարհին գոյություն ունեն մի շարք խոչընդոտներ: Դրանցից առաջինը և ամենակարևորը տեղական ինքնակառավարման մարմինների սահմանափակ իրավասություններն են, որոնց գործառնությունը մինչև օրս սահմանափակվել են քաղաքապետարանի վարչարարությամբ: Տեղական ինքնակառավարման մարմիններն ունեն մեծածավալ ֆոնդերի կառավարման փոքր փորձ: Մասնավորապես ուշագրավ է

քաղաքապետարանում տնտեսական զարգացման համար պատասխանատու պաշտոնյայի բացակայությունը: Անհրաժեշտ է զարգացնել տեխնիկական ոլորտների կարողությունները, ինչպիսին են քաղաքաշինությունը, տնտեսական զարգացումը, զբոսաշրջության և զբոսաշրջային կենտրոնի կառավարումը, ինչպես նաև այլ վարչարարական բնագավառներ: Քաղաքապետարանը պետք է աշխատանքի ընդունի հոնուտ և որակավորում ունեցող մարդկանց, որպեսզի կարողանա սույն նախաձեռնությունը կառավարել տեղական մակարդակում: Անհրաժեշտ է նաև վերանայել օրենսդրությունը՝ պարտականությունների ապակենտրոնացումը հնարավոր դարձնելու նպատակով:

7) Առաջարկվող միջոցառումներն են՝

- ա. նախարարությունների և քաղաքապետարանի միջև հաղորդակցության բարելավում, ինչը թերևս հնարավոր կդառնա ԳՅ քաղաքաշինության նախարարությունում համապատասխան համակարգող անձ նշանակելու միջոցով,
